Հայոց Դիցաբանության Ու Քրիստոնեության Համեմատական Նկարագիրը

Հայտնի չէ, թե սկզբում հայոց եկեղեցիները ինչ ձեւի էին, սակայն ավելի ուշ կառուցված կամ վերակառուցված եկեղեցիների ձեւը հուշում է եկեղեցաշինությունում դիցա-բնապաշտական խորհուրդների ներդրման ու մեհենաշինությունից փոխառությունների մասին:

Ա) Դիցապաշտությունում Դիցահոր առնական ու բեղմնավորող զորությունն են խորհրդանշում ֆալոսները, որոնք առնանդամի, սունկի (նաեւ՝ միջուկային զենքի պայթունի պսակի) նմանությամբ են: Մնկերի մասին հայտնի է, որ դրանք աճում են անձրեւներից հետո եւ կապվում են ամպրոպ-կայծակի՝ Դիցահոր խորհրդանշական տարերքի հետ:
Ֆալոսանման են եկեղեցիների (նաեւ մզկիթների) գմբեթները: Մեր եկեղեցիների կոնա-բրգաձեւ գմբեթները հիշեցնում են երեխայի առնանդամը, որը խորհրդանշում է Դիցահոր մանկա-կուսական (մինչզուգավորման) առնականությունը: Մյուս կողմից, սրանց նման են վեղարները՝ սրածայր գագաթ ունեցող գլխանոցները, որ կրում են կուսակրոն հայ հոգեւորականները մյուսներից տարբերվելու համար: Իսլամական սլացիկ մինարեթները՝ կլոր գագաթով, հիշեցնում են առնական ձիգ ֆալոսները, որոնք խորհրդանշում են Դիցահոր տղամարդկային (եւզուգավորման) առնականությունը (կարծվում է, որ այս պարագայում տեղ է գտել նաեւ մուսուլմանների մոտ ընդունված թլպատման ծեսը): Ի դեպ, կուսական ֆալոսի գլխիկի նման էին մեզանում հարգի սրագագաթ սաղավարտները:

Բ) Մեր բազիլիկ կոչված (ուղղանկյուն հատակագծով) եկեղեցիների ներսի հատակագիծը հիշեցնում է թեւերը վեր պարզած (ծիսական սիրո ակտին պատրաստ) դիրքով պառկած կնոջ, որի գլուխը համապատասխանում է խորանին, իսկ թեւերը՝ խորհրդանոցներին (խորանի կողքի երկու խորշերին): Հին մատենագրությունում եկեղեցին համեմատվում է կույսի, կնոջ կամ հարսի հետ, իսկ Քրիստոսի ու եկեղեցու միությունը՝ այր ու կնոջ, հոգու եւ մարմնի միության հետ:

Գ) Հայոց եկեղեցիների աննշան մասը շրջանաձեւ է՝ երբեմն չորս կամ ութ բոլորակողմերով: Միաժամանակ, մի շարք եկեղեցիների ներսում առկա են ութաթեւ աստղ հիշեցնող ենթակառույցները:
Հայտնի է, որ հնագույն պաշտամունքային կառույցներն ու բնակարանները շրջանաձեւ էին: Նախկինում բնակավայրի անմար հրո պաշտամունքային վայրեր էին հրապարակները («հրապարակ» նշանակում է «հրո շրջան»), որտեղ տոնվում էր Տրնդեզը (ըստ մեզ՝ Հրադեզ-Հրատոնը)1: Ութաթեւ աստղը, որը կազմում են միմյանց նկատմամբ 45 աստիճան շեղված դիրքով զույգ քառակուսիները, մեզանում շատ հարգի խորհրդանշան է, սակայն լիարժեք մեկնաբանված չէ: Հիմնականում կարծվում է, որ այն նշանավորում է աշխարհը՝ ութ կողմերով հանդերձ, եւ նրա հարափոփոխականությունը՝ արտահայտված քառակուսիների փոխադարձ դիրքով: Մեր կարծիքով ութաթեւ աստղը ցուցանում է նաեւ բնության ութ տարրերի (եթեր, հուր, օդ, ջուր, հող, մետաղ, քար, փայտ) փոխազդեցությունների (փոխակերպումների) խորհրդակարգը:

Դ) Մեր եկեղեցիներն ունեն տասնվեց օծված հիմնաքարեր՝ ի պատիվ Քրիստոսի տասներկու աշակերտների ու չորս ավետարանիչների: Եվ քանի որ Մատթեոս ու Հովհաննես ավետարանիչները նաեւ աշակերտներ էին, ապա վերոհիշյալ շարքը համալրվեցին Պողոսով ու Գ. Լուսավորիչով: Այդ հիմնաքարերից հինգը դրվում են հարավային կողմում, հինգը՝ հյուսիսային կողմում, երկուսը արեւմտյան (ավագ) դռան մոտ, իսկ չորսը՝ խորանի անկյուններում (արեւելյան կողմում): Ուշագրավ է, որ թվով տասնվեցն են ութաթեւ աստղի ծայրերը՝ գագաթներն ու ներս ընկած ծայրերը (քառակուսիների հատման կետերը): Եվ եկեղեցու հիմնաքարերի դասավորությունը ինչ-որ տեղ հիշեցնում է ութաթեւ աստղի ծայրերի դասավորությանը: Ութաթեւ աստղի երկու հանդիպակաց կողմերի ծայրերը հնգական են, իսկ մյուս երկու կողմերինը՝ երեքական: Այսինքն, ենթադրում ենք, որ մեր եկեղեցիների հիմնաքարերի քանակն ու դասավորությունը, հիմնականում պայմանավորված լինելով ութաթեւ աստղի կառուցվածքով, մեհենաշինությունից փոխառություն է:

Ե) Հայոց եկեղեցիները սովորաբար ունեն հինգ արտաքին դռներ, որոնք խորհրդանշում են հինգ տաղավարաց (գլխավոր) տոները: Ավագ դուռը խորանին հանդիպակաց արեւմտյան կողմում է,

երկրորդ դուռը հյուսիսային, իսկ երրորդ դուռը հարավային կողմում է, մեկական դռներ էլ կան խորհրդանոցներ՝ ավանդատուն եւ ընծայատուն մտնելու համար:
Նկատելի է, որ այս հինգ դռներով կազմվում է հնգանկյուն, որը ցուցանում է բնության հինգ հիմնական տարրերի (եթեր, հուր. օդ, ջուր, հող) փոխակերպումների խորհրդակարգը: Գագաթը բարձր հնգանկյուն է հիշեցնում նաեւ հայոց եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականների խույրը: Այս դեպքում ավագ դուռը, խույրի գագաթը համապատասխանում է եթերին՝ ամենավերին տարրին: Այս կարգով հարավային դուռը համապատասխանում է հրին, հյուսիսայինը՝ օդին, մյուս դռներն էլ՝ ջրին ու հողին:
Հայտնի է, որ մարդու վերջույթներով (ձեռքերով, ոտքերով) եւ գլխով կազմվում է հնգանկյուն ու հնգաթեւ աստղ: Գլխին համապատասխանում է եթերը, ձեռքերին՝ հուրն ու օդը (վերին տարրերը), ոտքերին՝ ջուրն ու հողը (վարի տարրերը): Այսինքն, եկեղեցու դռներով եւս կազմվում է խորհրդավոր մարդ-այր, որի գլուխը համապատասխանում է ավագ դռանը: Նա մարմնով հակառակ է խորհրդավոր կնոջը, որի գլուխը համապատասխանում է խորանին: Սակայն երկուսի փոքրափորերն էլ գտնվում են եկեղեցու կենտրոնում՝ կենտրոնական գմբեթի տակ՝ կարծես, թե խորհրդանշելով արական ու իգական էությունների միասնությունը, դիցա-տիեզերական խորհրդավոր սերը, միությունն ու արարման ակտը:
Ըստ այդմ, կարծում ենք, որ հայոց մեհյաններում Դիցահոր առնականությունը (բեղմնավորող օրգանը) խորհրդանշող կենտրոնական գմբեթի տակ եղել է Դիցամոր պտղաբերությունը (պտղածին օրգանը) խորհրդանշող հրատեղ-հոր (գուբ)՝ համանման թոնրի երդիկի տակ գտնվելուն:

Զ) Հայոց եկեղեցիների ներքին տարածքը ստորաբաժանվում է չորս հիմնական մասերի՝ գավիթ, ատյան (կենտրոնական մասն է), դաս, բեմ (այստեղ է պատարագի սեղանն ու խորանը), որոնք ավագ դռնից սկսած հաջորդում են իրար: Սա հիշեցնում է բնության հինգ հիմնական տարրերի վերից-վար հերթականությունը՝ եթեր-հուր-օդ-ջուր-հող:
Ուշագրավ է, որ հինգ աստիճան ունի կաթողիկոսական գահը՝ ի նշան նրա վարդապետական, եպիսկոպոսական, արքեպիսկոպոսական, մետրապոլիտական և կաթողիկոսական իշխանության: Մյուս կողմից, սա հիշեցնում է բնության հինգ տարրերի վարից-վեր աստիճանակարգը:

Է) Մկրտության ավազանը գտնվում է եկեղեցու ներսի հյուսիսային կողմում, իսկ, ինչպես գիտենք, հյուսիսը համապատասխանում է ջուր տարրին:

Ը) Մեր եկեղեցիներն ուղղված են արեւմուտքից արեւելք (ավագ դուռը արեւմուտքում է, խորանը՝ արեւելքում), իսկ գմբեթների խաչերը՝ հյուսիսից հարավ: Այսինքն, եկեղեցին յուրօրինակ կողմնացույց է:
Հայտնի է, որ նախաքրիստոնեական որոշ (օրինակ, Գիսանեի ու Դեմետրի) մեհյաններում հակառակ կարգն էր: Աղոթարանը (խորանը) արեւմուտքում էր, իսկ դուռը՝ արեւելքում: Այս դեպքում բնապաշտական խորհուրդները համահունչ էին դիցակարգին:
- Դուռը, որը համապատասխանում է եթերին (աննյութական հրին) ու խորհրդավոր այրի (իմա՝ Դիցահոր կամ այլ դիցայրի) գլխին, գտնվում էր արեւելքում, որը խորհրդանշում է ցերեկը, լույսը, երկինքը, կյանքը, հոգեւորը, արական «Ար» նախասկիզբն ու երկնային տարրերը (եթեր, հուր, օդ): - Խորանը որը համապատասխանում է անդրհուրին ու խորհրդավոր կնոջ (իմա՝ Դիցամոր կամ այլ դիցուհու) գլխին, գտնվում էր արեւմուտքում, որը խորհրդանշում է գիշերը, խավարը, երկիրը, (նաեւ անդրաշխարհը), մահը, նյութականը, իգական «Մա» կամ «Էգ» նախասկիզբն ու երկրային տարրերը (ջուր, հող եւ այլն): Այս տեղադրությունը համապատասխանում է մեզանում ընդունված հանգուցյալի թաղման՝ դեմքով դեպի արեւելք ուղղված, դիրքին:
- Խորհրդավոր դիցայրի գլուխն ու վերջույթները կազմող դռների համապատասխանությունը բնության տարրերին խորհրդակարգով էր: Ավագ, հարավային ու հյուսիսային դռներին համապատասխան երկնային տարրերը գտնվում էին տաճարի արեւելյան մասում (կենտրոնի նկատմամբ), իսկ մյուս երկու դռներին համապատասխան երկրային տարրերը՝ արեւմտյան մասում:
- Տաճարի ներքին տարածքի հիմնամասերի հաջորդականությունը արեւելքից-արեւմուտք էր, որը համարժեք է բնության տարրերի վերից-վար (երկնքից-երկիր) հերթականությանը:
- Տաճարի ներսում այցելուների քայլքը կատարվում էր արեւելքից-արեւմուտք, որը համարժեք է արեգակի ցերեկային, մարդու այսերկրային կյանքի (ծնունդից-մահ) ընթացքին: Եկեղեցիներում քայլքը արեւմուտքից-արեւելք է, որը համարժեք է արեգակի գիշերային, մարդու անդրշիրիմյան գոյության (մահվանից-նոր ծնունդ) ընթացքին: Այս առումով ենթադրում ենք, որ եկեղեցու խորհրդանոցների

համար նախատեսված (նաեւ՝ մեհյանների համապատասխան) դռները սկզբնապես ծառայել են այցելուների տաճարից դուրս գալու համար, քանի որ երկու դեպքում էլ տաճարի ներսում ետընթաց քայլքը անբնական ու անխորհուրդ, նույնիսկ՝ անթույլատրելի է: Եվ իզուր չէ, որ այսաշխարհիկ կյանքը համեմատվում է երկդռնանի քաղաքի հետ, որի դռներից մեկով մտնում ենք, իսկ մյուսով դուրս գալիս:

* * *

Հայ եկեղեցին ծիսակատարությունների մեջ ներմուծեց մեհենական պաշտամունքի որոշ խորհրդաառարկաների ու նյութերի գործածությունը:

Ա) Այդպիսին է մոմ վառելը: Բացի եկեղեցում, մոմ են վառում նաեւ հանգուցյալի աճյունի շուրջը, հուղարկավորությունից հետո մինչև յոթնօրէ կամ քառասնօրէ ընկած օրերին, նախնիների հիշատակի օրերին (տարելիցներին, մեռելոցներին2): Այն տիեզերական լույսի մշտավառությանը, կյանքի հարատեւությանը, հոգիների զորացմանը, չարաբախտության խափանմանը, անդրշիրիմյան մութ աշխարհում կամ դեպի երկինք համբառնման ճանապարհին հանգուցյալների հոգիներին լուսավորելուն ու չար ոգիներից պաշտպանելուն (սրանց վանելուն) ուղղված հմայական գործողություն է: «Մոմ»-ի ստուգաբանությունը պարզ չէ, սակայն այն հիշեցնում է «մամ»-մայրը (իմա՝ հրաձին Դիցամայրը):
Մոմավառությունը եկեղեցում սովորաբար արվում է ավազով կամ ավազի վրա ջրով լցված ավազաններում (տես. ավազքավազան բառակազմությունը), որից հետո հալված մոմանյութը հավաքվում է ավազի վրա կամ ջրի երեսին խառնիխուռն ձեւերով (միգուցե, դրանք խորհրդավոր, նախագուշակ ձեւեր են, ինչպես «մոմ թափելու» ժամանակ): Այս երեւույթը հիշեցնում է համաշխարհային օվկիանոսի հատակից հրաբուխների ծագումն ու ցամաքի կազմավորումը իր բազմաբնույթ ռելիեֆով, նաեւ՝ Վահագնի դիցա-տիեզերական ծնունդը ծիրանի ծովի մեջ երկունքի բռնված կարմիր եղեգնիկից (այս դեպքում եղեգնիկն ու մոմը համարժեք են):
Մոմերը վառում են նաեւ երկու, երեք, չորս թեւանի մոմակալների՝ աշտանակների վրա: Կան նաեւ աստիճանաձեւ յոթ կամ ինն թեւանի աշտանակներ, որոնց թեւերը խորհրդանշում են յոթ երկնային մարմինները կամ հրեշտակների ինն դասերը (նաեւ՝ ինն գլխավոր դիցերին):

Բ) Խունկը խնկավետ ծառերի (խնկենու, խնկեղեգի) խեժն է, որը հին դարերից գործածվել է շատ ազգերի մոտ: Նրա բույրը դիցերին հաճելի էր դիտվում: Խունկը փայտածուխի վրա ծխեցնելով ու բուրվառով գործածում են եկեղեցական արարողությունների եւ հատկապես պատարագի ժամանակ: Առաջին քրիստոնյաները խունկ չէին գործածում՝ հաշվի առնելով նրա դիցապաշտական նշանակությունը:
Խունկը որպես կանոն ծխեցնում են հուղարկավորության ժամանակ, գերեզմանոց այցելելիս ու նախնիների հիշատակի օրերին՝ մոմավառության հետ միասին, որը ցույց է տալիս նրա կապը մեռելների ու նախնիների պաշտամունքի հետ: Այն հմայական նշանակություն ունի: Նրա ծուխը օգնում է մահացածների հոգիներին երկինք համբառնալու, իսկ անուշահոտ բույրը հաճելի է նախնիներին: Խնկածխությունը վանում է (բույրը խրտնեցնում է) չար ոգիներին ու հեռացնում է չարաբախտությունը: Կարծվում է նաեւ, որ խունկը ունի վարակազերծ, մանրէասպան հատկանիշ:
Մոմ է վառվում ու խնկարկվում նաեւ ամեն չորեքմուտ, ուրբաթամուտ ու կիրակնամուտ (երեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ երեկոյան՝ մայրամուտից հետո)3: Եկեղեցում այս ու մեռելոց օրերին, մայրամուտից մինչև առավոտ, նույն ձեւով կատարվում է Գիշերապաշտոն (գիշերային հսկում) կոչվող արարողությունը, որը մեհենական գիշերային պաշտամունք է հիշեցնում, որի մասին՝ այլ տեղում (հմմտ. պաշտոն եւ պաշտամունք նույնարմատ բառերը):

Գ) Մեհենական պաշտամունքի կարեւոր խորհրդաձեւերից էր օծումը, որը արվում էր ձեթով, յուղով կամ այլ նյութերով: Ի նշան դիցերի օրհնության ու հովանավորության՝ օծվում էին քրմերը, դյուցազունները, քաջերը, թագավորները, նորածինները, ծանր հիվանդներն ու մահացածները: Օծվում էին նաեւ մեհենական տարբեր առարկաներն ու սպասքները: Ընդ որում, բուսածին կամ կենդանածին նյութով օծումը, թերեւս, ուներ իր առանձնահատկությունները՝ կախված դիցերի արարչածին բնույթից:
Օծման երեւույթը յուրահատուկ է նաեւ քրիստոնեությանը: Այն կազմում է Հայ եկեղեցու յոթ խորհուրդներից երկուսը՝ Դրոշմումն ու Օծումը: Դրոշմումը կատարվում է մկրտությունից հետո մեռոնով, իսկ օծումը՝ ծիսական յուղով կռվի մասնակիցներին ու վիրավորներին, հիվանդներին, հանգուցյալներին (վերջին օծումը): Մեռոնով են օծվում նաեւ կաթողիկոսն ու եպիսկոպոսները, ինչպես

նաեւ եկեղեցու որոշ սրբազան առարկաները: Ծիսական յուղով են օծվում նաեւ երեխաները՝ մկրտությունից անմիջապես առաջ:
Մեռոնի բուն նյութը ձիթենու յուղն է, որին հայերս խառնում ենք քառասունից ավելի անուշահոտ նյութեր՝ կազմված տարբեր ծաղիկներից, փայտերից, արմատներից ու խունկերից, որոնց մեջ գլխավորը բալասանն է: Նրա յուղը խառնելով ձեթին, այն մակարդում է եւ դարձնում քսուկ: Դրոշմվում են մարդու ինը անդամները (տասներեք մարմնատեղերը)՝ ճակատը, աչքերը, ականջները, քիթը, բերանը, ձեռքերը, սիրտը, թիկնամեջը, ոտքերը, որոնցից վեցը արտաքին զգայարաններ են՝ կազմված տաս անդամից: Սիրտը կարելի է դիտել ներքին զգայարան (տես. «սիրտս վկայում է» արտահայտությունը): Վերջին օծման ժամանակ օծվում են մարմնի վերոհիշյալ վեց զգայարանները: Իսկ ինը, վեցն ու տասներեքը խորհրդանշական թվեր են (այս մասին՝ այլ տեղում): Կարծվում է, որ դրոշմումն ու օծումը, ծիսական նշանակությունից բացի, ունի ապաքինող ու զորացնող հատկանիշ, ինչպես կետային մերսումը: Բալասանը, որը սպեղանի է, փոխաբերական իմաստով նշանակում է սփոփանք, մխիթարություն:

Դ) Համարվում է, որ զանգը եւս մեհենական պաշտամունքի խորհրդաառարկա է: Նրա ղողանջը չարախափան է ու վանում է չար հոգիներին, բուժական հատկություն ունի ու դրական էներգիայով է լցնում կենսոլորտը: Տոնակատարությունների ժամանակ այն բարիավետ ու խաղաղեցնող է, իսկ հայրենուն սպառնացող վտանգի ժամանակ չարագույժ ու ռազմակոչ է:

* * *

Զոհաբերությունը մեհենական պաշտամունքի կարեւոր ծեսերից է: Հայ եկեղեցին թեեւ զոհաբերությունը չի կանոնականացրել (խորհուրդների մեջ զոհաբերության խորհուրդը բացակայում է), սակայն, տուրք տալով ավանդական սովորույթներին, այն մատաղի ձեւով ընդունելի է համարում: Մատաղը կենդանական՝ արյունով զոհաբերություն է, երբ զոհի միսը եփվում ու ճաշակվում է: Մատաղը տարբերվում է արյունով զոհաբերության մյուս ձեւերից, երբ, օրինակ, զոհը ողջակիզվում, ողջ-ողջ թաղվում կամ ջրախեղդ էր արվում (վերջիններիս համար էական էր նվիրառու դիցի բնույթն ու իշխվող տարերքը): Սկզբնական քրիստոնեական աղանդները մերժում էին մատաղը:

Կենդանական (նաեւ մարդկային) զոհաբերության խորհրդավորության շուրջ կան տարբեր մեկնաբանություններ.
ա) Այս ձեւով դիցերին հոգի է ընծայվում, որը սնուցում ու զորացնում է նրանց: Այդ իսկ նպատակով ցանկալի է մատղաշ, երիտասարդ զոհը (օրինակ, մեզանում «մատաղ»-ը նշանակում է նաեւ ջահել, դեռատի, մատղաշ, դալար):
Ընդ որում, մարդկային խնայված, նրանց բաշխված կյանքերի փոխարեն, զղջումի ու մեղքերի քավության դիմաց դիցերից կենդանիների զոհաբերություն է պահանջվում: Ըստ էության, նման թաքնախորհուրդ ունի մատաղը, երբ փորձանքից ու փորձություններից ազատվածը դիմացը մատաղ է անում: Հասարակական ու բնական աղետների, պատերազմների ժամանակ դիցերի ու նախնիների բարեգթությանն ու հովանավորությանը արժանանալու համար եւս զոհաբերություն է պահանջվում:
բ) Նշանով կենդանիները մարդկային հոգիների վերամարմնավորումներ են՝ որպես պատիժ կյանքում անմարդկային կամ անվայել վարքի դիմաց, եւ դրանց զոհաբերությունը ժամանակից շուտ ազատում է այդ հոգիներին կրած պատժից:
գ) Զոհի հում միսը, կարեւոր օրգանները (ուղեղ, սիրտ, լյարդ եւ այլն) ուտելիս կամ թարմ արյունը խմելիս, որոնցում դեռ «հոգի կա», մարդուն են փոխացվում զոհի ուժն ու ունակությունները (նաեւ՝ թուլություններն ու արատները): Թերեւս, այս մտավախությամբ է Հայ եկեղեցին արգելում հում մսի գործածությունը:
դ) Ճաշակման համար նախատեսված զոհաբերությունը իրենում համատեղում է նյութական զոհողության, բարեգործության խորհուրդը:

Այսպիսին է եւ մատաղը, քանի որ մատաղացուի միսը առաջնահերթ բաժանվում է կարիքավորներին, հիվանդներին ու պատճառավորներին: Այս համատեքստում է դիտվում նաեւ հոգեհացը, որը հանգուցյալի անունից վերջին «հաց տալն»՝ բարեգործությունն է, ու, միաժամանակ, նրա հոգու հանգստությանը (թափառումներից ազատվելուն) ուղղված արարողություն է:

Մատաղը հայտնի է նաեւ նախաքրիստոնեական ժամանակաշրջանում, երբ Տիգրան Վերջինը պատվիրում է Բագավանում, եղբոր՝ Մաժան քրմապետի գերեզմանի վրա բագին ու իջեւանատեղ կառուցել, որպեսզի այդտեղի զոհերից օգտվեն անցորդներն ու հյուրեր ընդունվեն գիշերելու համար4: Մատաղը յուրօրինակ ծես է, որի ժամանակ առկա են բնության յոթ տարրերը: Այն արվում է առավոտ կանուխ (առկա է երկնային հուրը՝ արեւի կենարար, զորացնող լույսը), բացօթյա (առկա է օդը): Մատաղացուն զոհաբերվում է դանակով (տես. «մատաղ» եւ «մետաղ» բառերի նմանությունը), զոհի արյունը հեղվում է հողի վրա (այն պարարտացնում է հողը), միսը եփվում է ջրում (առկա են երկրային հուրն ու ջուրը), խարույկը վառվում է փայտով, կաթսան դրվում է քարերի վրա:
Մեզանում մատաղվող կենդանիները՝ խոյը, ցուլը, աքաղաղը, դիցական կենդանիներ ու ազգային տոտեմներ են: Խոյն ու ցուլը նաեւ ավանդական կենդանաշրջանի կենդանիներ են: Խոյ ու ցուլ (ոչխար ու կով) էին զոհաբերում Արարատյան թագավորության (Ուրարտուի) դիցերին5: Ճակատին սպիտակ նշան ունեցող էրինջ (մատղաշ կով) էր զոհաբերվում Անահիտին:
Աքաղաղը ցերեկնամուտը՝ Այգ-արշալույսը ազդարարող, մարդկանց քնից արթնացնող՝ «գիշերվա մեռելհարոյց» թռչունն է, որն, ըստ հավատալիքների, տեսնում է մարդու պահապան հրեշտակներին ու հոգեառ-գրողներին: Աքաղաղի նման էր պատկերացվում դիցական Փյունիկ Հավքը, որը ինքնահրկիզվում ու կրակից վերստին ծնվում-համբառնում է: Ի դեպ, որպես հաջողության նախանշան, սրբազան աքաղաղի կանչով էին ճանապարհը շարունակում Փութկու Սուրբ Գեւորգ եկեղեցում ձմռանը իջեւանած քարավանները (գտնվում է Մոկսից հյուսիս՝ Արտեւան լեռան վրա): Մեհենական պաշտամունքում մատաղը կանոնակարգված էր: Դիցերին մատաղվում էին նրանց իսկ նվիրական կենդանիները: Հայտնի է, որ Արամազդին սպիտակ գույնի անասուններ էին զոհաբերվում: Դիցամորը սեւ ուլ էր մատաղվում6, իսկ Միհրին՝ ձի:

Մեհենական պաշտամունքում հարգի էր նաեւ անարյուն զոհաբերությունը, որը մրգերի ու պտուղների, բուսածին ու կենդանածին մթերքների (մեղր, հավկիթ, կարագ, կաթ, յուղ, ձեթ, այլուր, գինի) ընծայումն էր: Օրինակ, Տիրին մեղր էր ընծայվում, Անահիտին՝ խաղողի առաջին կիթը, Միհրին՝ գինի, Զարեհ-Բարշամին՝ ալյուր կամ փոխինդ: Ամանորին (ներկայիս օգոստոսի 11-ին) Վանատուրի մեհյանին նվիրաբերվում էին առաջին պտուղները, որոնցով հյուրասիրվում էին ուխտավորները: Թերեւս, ընծայվող մրգերի թագն ու պսակն էին խնձորն ու ծիրանը՝ Իմաստության ու Կենաց դրախտային ծառերի պտուղները: Ընծայման ու հմայության խորհրդաձեւեր են հիշեցնում Զատիկին (հնում՝ գարնանամուտ-տարեմուտին) ձվի ներկումն ու ճաշակումը:

Քրիստոնեական ժամանակներում ընծայման համարժեքը պտղի կոչված բնամթերային տուրքն էր, որը գյուղացիները կամավոր տալիս էին եկեղեցուն: Այս սովորույթը գոյություն ուներ մինչեւ մեր դարի սկիզբները: Ներսես Մեծի ժամանակներում պտղիից ժողովված բարիքներով պահվում էին աղքատանոցներն ու հիվանդանոցները7: Ցանկալի է, որ Հայ եկեղեցին վերստին ավանդույթ դարձնի պտղին ու այս ձեւով եւս տերություն անի կարիքավորներին՝ ծերերին, որբերին, հիվանդներին, ընչազուրկներին, մուրացկաններին եւ այլն:

Վարդան Լալայան

1- Ցանկալի ու նպատակահարմար կլիներ, որ Հանրապետության հրապարակի կենտրոնում հաստատվեր հայոց հավիտենականության խորհրդանիշ հրակոթող, ուր հանդիսությամբ նշվեր Տրնդեզը:
2 - Մեռելոց օրեր են տաղավարաց տոների հաջորդ օրերը (հիմնականում՝ երկուշաբթի), Բուն բարեկենդանին նախորդող հինգշաբթին, բոլոր ուրբաթ օրերը:
3 - Հայ եկեղեցին օրվա սկիզբ է դիտում արեւամուտը, որը, թերեւս, հրեական ավանդույթից փոխառություն է, քանի որ հայոց նախաքրիստոնեական տոմարում օրվա սկիզբ էր դիտվում լուսաբացը՝ Այգ ժամը:
4 - Նույն տեղում էր գտնվում Վանատուրի մեհյանը, որի համար էլ ընդունվում է, որ Վանատուրի պաշտամունքը Մաժան քրմապետի հետմահու դիցականացված պաշտամունքն էր:
5 - Ընդհանրապես, դիցայրերին զոհաբերվում էին արու, իսկ դիցուհիներին՝ էգ կենդանիներ:
6 - Սպիտակն ու սեւը գունային բեւեռներն են՝ խորհրդանշելով լույսն ու խավարը, երկինքն ու երկիրը, Ար-Մա (Ար-Էգ) նախասկիզբները (հմմտ. Յան-Ինի գույների հետ), եւ սրանցով հանդերձ՝ Դիցահորն ու Դիցամորը:

7 - Ներսես Մեծի մահից հետո Պապ թագավորը արգելեց պտղիի հավաքումը, երեւի, հաշվի առնելով եկեղեցու չարաշահումներն ու գյուղացիների դժգոհությունները:

3. Խաչն Ու Նրա Խորհուրդները

Խաչը հայոց տիեզերակենտրոն աշխարհընկալումը բնորոշող խորհրդանշան է: Տեղին է նշել, որ Հայի խաչապաշտությունը, ի հակադրություն սեմա-աքքադական ցեղերի կռապաշտության (նույնը՝ մարդակենտրոն աշխարհընկալման), ընդգծված է ազգային էպոսում՝ հանձինս խաչապաշտ Գագիկ թագավորի ու թշնամի կռապաշտ խալիֆի (այն, որ խոսքը ո՛չ արաբ, եւ ո՛չ մուսուլման տիրակալի մասին է, հուշում է հետեւյալը. իսլամում կուռքերի պաշտամունքը խստիվ արգելված է):

Խաչերը հիմնականում լինում են եռաթեւ ու քառաթեւ: Եռաթեւ խաչերը T ու Y տառերի նման են: Քառաթեւ խաչերը գլխավորապես լ ձեւի են ու, մասնավորապես, X տառի նման են: Հնգաթեւ, վեցաթեւ եւ ութաթեւ Ճ, Ն, Չ խաչերը աստղանիշեր են:

Ա

Քառաթեւ խաչը ունի իր տիեզերա - բնապաշտական փոխկապակցված խորհուրդները:

ա) Այն խորհրդանշում է աշխարհի կենտրոնի ու չորս կողմերի միասնությունը եւ դրան համարժեք՝ տարվա չորս եղանակների հարափոփոխությունը: Խաչի աջ թեւը խորհրդանշում է արեւելքն ու գարունը, վերին թեւը՝ հարավն ու ամառը, ձախ թեւը՝ արեւմուտքն ու աշունը, ստորին թեւը՝ հյուսիսն ու ձմեռը:

բ) Քառաթեւ խաչը նաեւ, աշխարհի կողմերին ու տարվա եղանակներին համապատասխան, բնության չորս տարրերի փոխակերպումների ու փոխոչնչացումների խորհրդանշան է, որի հանդիպակաց ծայրերին անլծորդ, անհաշտ տարրերն են. հարավային ծայրին՝ հուրը, հյուսիսային ծայրին՝ ջուրը, արեւելյան ծայրին՝ օդը, արեւմտյան ծայրին՝ հողը: Խաչի թեւերը անլծորդ տարրերի փոխմարումների խորհրդագծերն են, որոնք խաչվում են կենտրոնում (առաջին նյութի տեղու՞մ): Իսկ խաչի ծայրերով կազմված շեղանկյունը ցուցանում է լծորդվող, հաշտելի տարրերի հաջորդական փոխակերպումների (օդ»հուր»հող»ջուր»օդ) խորհրդակարգը՝ համանման տարվա եղանակների հերթափոխությանը:

գ) Քառաթեւ խաչի ուղղահայաց գիծը խորհրդանշում է հոգեւորը, արականը, աշխարհի երկինք-երկրակենտրոն առանցքը, իսկ հորիզոնական գիծը՝ նյութականը, իգականը, աշխարհի կենտրոնը հատող «ծայրից ծայրը», իսկ խաչը ամբողջությամբ՝ սրանց փոխմիասնությունը:

Խաչի հորիզոնական գիծը (նյութականը, իգականը) առանձին բացասական է («-» նշանն է), իսկ սրան միացած ուղղահայաց գիծը (հոգեւորը, արականը) արդեն դրական է («+» նշանն է):

դ) Ուսանելի է քառաթեւ խաչի վերոնշյալ խորհուրդների առնչությունը բնության տարրերի փոխազդեցության խորհրդակարգի հետ: Ինչպես ասվեց, խաչի թեւերը ցուցանում են անլծորդ, անհաշտ տարրերի փոխմարումներն ու պայքարը, որոնց համանման են աշխարհակարգերի ու հասարակարգերի հեղաշրջումները: Այսինքն, հրի ու ջրի փոխմարումը (հարավ-հյուսիս պայքարը) համարժեք է հոգեւոր հեղաշրջմանը, «հոգեւոր հեղափոխությանը», իսկ օդի ու հողի փոխմարումը (արեւելք-արեւմուտք պայքարը)՝ աշխարհիկ հեղաշրջմանը, «սոցիալական հեղափոխությանը»: Աշխարհաքաղաքականության տեսանկյունից սա նշանակում է, որ քաղաքակրթական Հյուսիսի ու Հարավի պայքարը ծնում է հոգեւոր-արժեքային առաջընթաց, իսկ Արեւելքի ու Արեւմուտքի պայքարը՝ սոցիալ-տնտեսական առաջընթաց:

ե) Քառաթեւ խաչը արեգակի օրեկան շարժման խորհրդանշան է, որի ծայրերը ցուցանում են արեգակի չորս ծեգերը՝ արեւածագը, վերին դիրքը (զենիթը), արեւամուտը, ստորին դիրքը (նադիրը): Այս առումով, խաչը, ուղղահայաց թեւերի չափից կախված, ցուցանում է արեգակի օրապտույտը արեւադարձերին ու օրահավասարներին: Հավասարաթեւ լ խաչը ցուցանում է արեգակի օրապտույտը օրահավասարներին (12-ական ժամ ցերեկն ու գիշերը), իսկ անհավասարաթեւ … խաչը՝ օրապտույտը ձմեռային արեւադարձին (9 ժամ ցերեկն ու 15 ժամ գիշերը):

Դիցապաշտ Հայաստանում հարգի էր հավասարաթեւ խաչը, քանի որ գարնանային ու աշնանային օրահավասարները նշանավոր օրեր էին: Գարնանային օրահավասարին (գարնանամուտին) նշվում էր տարեսկիզբ-տարեզատը (Ամանորը-Զատիկը): Եվ այս դեպքում աշնանային օրահավասարը (աշնանամուտը) հանդիսանում էր տարեմիջին: Ընդ որում, նախնական խավարածրում գարնանամուտը համընկնում էր կենդանաշրջանը գլխավորող Խոյ աստղատան սկզբին, իսկ

աշնանամուտը՝ լույսի ու խավարի, հոգեւորի ու նյութականի հավասարակշռությունը խորհրդանշող, Հայքին համապատասխանող ու Միհրից իշխվող կենտրոնական Կշեռք աստղատան սկզբին1: Այսինքն, հավասարաթեւ խաչը նշանավորում է բնության հավասարակշռված, ներդաշնակ վիճակը: Հավանաբար, Կաթոլիկ եկեղեցին խորհրդանշականորեն ներմուծեց անհավասարաթեւ խաչը (այդպիսին են Հայ եկեղեցու խաչերի զգալի մասը), քանի որ այն Արեւ-Միհրի ծնունդին հարմարեցված Քրիստոսի ծնունդը տոնում է դեկտեմբերի 25-ին՝ ձմեռային արեւադարձի օրվան (դեկտեմբերի 22-ին) հաջորդող երրորդ օրը, որից հետո ցերեկվա տեւողությունը սկսում է կտրուկ ավելանալ, իսկ գիշերվա տեւողությունը՝ պակասել (դեկտեմբերի 22-24-ը դրանց տեւողությունը աննշան է փոխվում): Անհավասարաթեւ խաչի շրջված տարբերակը, որը ցուցանում է արեգակի օրապտույտը ամառային արեւադարձին, հանրահայտ չէ: Այն նշանավորում է լույսի վարընթացն ու խավարի վերելքը: Թերեւս, ի տարբերություն քրիստոնեական խաչի, որը խորհրդանշում է խաղաղությունն ու «չարին չհակառակվելը», սա խորհրդանշում է պայքարն ու չարի դեմ սրբազան պատերազմը: Միգուցե, նույն խորհրդապաշտությամբ էր առաջնորդվում Հիտլերը, երբ Սովետական Միության դեմ պատերազմ սկսեց հունիսի 22-ին՝ ամառային արեւադարձի օրը: Հայ եկեղեցական այրերը, երբ ճարահատյալ փորձում են հիմնավորել քրիստոնեության մարտնչող բնույթը, ասում են, թե «խաչը շուռ տալուց թուր է դառնում»:

Քրիստոնեական ավանդությունը ասում է, թե Պետրոսին խաչեցին գլխիվայր նրա կամքով՝ Քրիստոսից տարբերվելու համար: Իսկ հայտնի է, որ Պետրոսը Քրիստոսի ամենահամարձակ աշակերտն էր, որ չվարանեց ուսուցչին ձերբակալելու ժամանակ սրով կտրելու քահանայապետի ծառայի ականջը: Անհավասարաթեւ խաչը եզրավորող կորագիծը հիշեցնում է ձուն: Այլ տեղում արդեն ասվել է, որ Դիցահոր առնականությունը խորհրդանշող ֆալոսների նմանությամբ են եկեղեցիների գմբեթները, որի գագաթին խաչ է կանգնեցվում: Այս դեպքում խաչը նույնանում է Դիցահոր արարչական սերմի հետ: Այսինքն, անհավասարաթեւ խաչն ու եզրակորը Դիցահոր դիցածին ու արարչածին սերմի ու այն կրող Դիցամոր արգանդի ու տիեզերական ձվի՝ տիեզերքի սաղմնային վիճակի գաղափարն է արտահայտում:

զ) Քառաթեւ խաչն ավելի լայն իմաստով խորհրդանշում է համատիեզերական շարժումը, եւ, մասնավորապես, մոլորակների ու լուսատուների, համաստեղությունների շարժումը երկնակամարում: Համատիեզերական հավերժական ու կանոնավոր շարժումը սկզբնամիակ Արարչի (Աստծո) գոյությունը հիմնավորող հզոր փաստարկներից մեկն է՝ որպես այդ շարժման միակ սկզբնաղբյուր եւ սկզբնապատճառ: Օրինակ, Կաթոլիկ եկեղեցու ժամանակակից աստվածաբանության առաջին անքննելի հիմնադրույթը (դոգման) այն է, թե Աստված ամեն ինչի շարժման միակ սկզբնապատճառն է: Նմանապես, ավելի հին ժամանակներում Արիստոտելը մեկնում էր Աստծո գոյությունը՝ որպես ամենայն տարերքների շարժում առաջ բերող անշարժ ու անփոփոխ էություն: Իսկ Դեիստական քրիստոնեա - փիլիսոփայական ուղղությունը Աստծուն համարում է տիեզերքը շարժման մեջ դնող զորություն ու բնական օրենքների ստեղծող, որը սակայն չի միջամտում տիեզերքի գոյության հետագա ընթացքին: Այսինքն, ընդհանրաբար Աստվածը մեկնվում է որպես ամեն ինչի «արարիչ եւ շարժիչ»: Եվ այս տեսանկյունից խաչն արտահայտում է նաեւ շարժման գոյավորողի՝ Աստծո գաղափարը:

է) Համատիեզերական շարժման առավել ցայտուն խորհրդանշան է կեռխաչը (սվաստիկան), որի կեռիկները, ի տարբերություն ուղղաթեւ խաչի, ցույց են տալիս շարժման ուղղությունը: Եվ կեռիկների ուղղությունից կախված կեռխաչերը լինում են աջակողմյան ու ձախակողմյան:

Աջակողմյան կեռխաչը ներկայացնում է ձախից-աջ շրջապտույտը, որը համապատասխանում է լուսատուների (արեգակի, լուսնի ու աստղերի) օրապտույտին եւ խավարածրի աստղատների ներսում գարնանային օրահավասարի կետի բազմադարյա շրջապտույտին (նաեւ՝ արյան շրջանառությանը): Այն ապահովում է առաջընթացը («առաջ» բառը ստուգաբանվում է «առ աջ»՝ դեպի աջ):

Ձախակողմյան կեռխաչը ներկայացնում է աջից-ձախ շրջապտույտը, որը համապատասխանում է խավարածրի աստղատների ներսում լուսատուների տարեպտույտին: Կեռխաչը, որպես շարժման խորհրդանշան, ունի նաեւ գիտական մեկնաբանություն: Հայտնի է, որ տիեզերքում երկնային մարմինների շարժումը կատարվում է կորագծով՝ հիմնականում էլիպսաձեւ ու մասնակիորեն շրջանաձեւ, որոնց չորս գագաթներով տարվող գծերը հատվում են կենտրոնում: Կեռխաչի դեպի կենտրոն ուղղված գծերն ու դրանց ուղղահայաց կեռիկները ցուցանում են երկնային մարմնի շարժումը առաջ բերող զույգ ուժերի ազդման վեկտորները. դեպի կենտրոն ուղղված գիծը՝ կենտրոնաձիգ ուժի վեկտորը, իսկ կեռիկը՝ կենտրոնախույս, հետագծին շոշափող ուժի վեկտորը: Աջակողմյան ու

ձախակողմյան կեռխաչերի համադրված խորհրդանշան է X խաչը, որը ներկայացնում է աջ ու ձախ շարժումների միասնության գաղափարը:
ը) Քառաթեւ կ խաչի վերաբերյալ քրիստոնեական ավանդության համաձայն՝ սրա վրա է խաչվել Անդրեասը՝ Պետրոսի եղբայրը, որը բալկանյան ու մերձսեւծովյան ժողովուրդների, սկյութների ու նախառուսների մոտ քրիստոնեությունը տարածող առաքյալն էր: Սա պատերազմի խաչ է, որի նման է խաչվող թրերի պատկերով ճակատամարտի նշանագիրը, բացասման նշանը եւ խաչի բնույթն էլ համապատասխանում է սկյութական ցեղերի ռազմատենչ վարքին: Այս խաչն է ներկայացնում բազմապատկման «x» նշանը: Սա, մեր կարծիքով, նշանակում է պատերազմներից հետո կտրուկ (բազմապատիկ-երկրաչափական) առաջընթացը (պրոգրեսը) հաղթողի համար, ի տարբերություն հավասարաթեւ, ներդաշնակության խաչի, որը, հանձինս գումարման «+» նշանի, ցույց է տալիս բնականոն (գումարային-թվաբանական) առաջընթացը: Այս խաչն է հիշեցնում արեգակնային Զկներ աստղատան i խորհրդանիշը: Եվ, միգուցե, խորհրդավոր է, որ Անդրեասի խաչը դարձավ ռուսական ռազմածովային նավատորմի խորհրդանշանը:

* * *

Եռաթեւ խաչն ունի իր տիեզերա-բնապաշտական ուրույն խորհուրդները:
ա) Եռաթեւ Y խաչը նշանավորում է տիեզերակարգի երրորդությունները. դիցաբանական ու քրիստոնեական երրորդությունները, գոյության հիմնապահերը (սկիզբ, մեջ, վերջ), ծնունդի կողմերը (հայր, մայր զավակ), տարածության եռաչափությունը, ժամանակաձեւերը (անցյալ, ներկա, ապագա), դերանունների դեմքերը (օրինակ՝ ես, դու, նա), հոգու եռամիասնությունը (միտք, տենչանք, կամք) եւ այլն: Ըստ մեզ, եռաթեւ խաչի թեւերը ցուցանում են նաեւ կյանքի ուղու այն երեք խորհրդավոր՝ բախտի, փառքի ու սխրանքի ճանապարհները, որոնց ընտրության առաջ հայտնվում է հեքիաթային հերոսը (այդ մասին նա իմանում է խաչմերուկում նստած հալեւորից կամ գրվածից): Սխրանքի ճանապարհն է ներկայացնում խաչի ուղիղ թեւը, փառքինը՝ աջ թեւը, բախտինը՝ ձախ թեւը: Հայոց դիցաբանությունում ճամփորդների հովանավորն ու ճանապարհների տնօրինողը Տիրն է2 (նույն հեքիաթային հալեւորը), որը սահմանում է մարդկանց ճակատագրերը՝ կյանքի երկար ու կարճ ճանապարհները: Այս առումով չի բացառվում, որ եռաթեւ խաչը նաեւ Տիրի նշանախաչն է:
բ) Եռաթեւ շրջված պ խաչը նշանավորում է աշխարհի երեք կողմերի (հյուսիս-արեւելք, հարավ, հյուսիս-արեւմուտք) միասնությունն ու տարվա երեք եղանակների (պայմանականորեն՝ գարուն-ամառ-ձմեռ) հարափոփոխությունը: Աշխարհի այս կողմերի հաջորդականությունը համապատասխանում է արեգակի ցերեկային ու հորիզոնից ցած այն ընթացքին, երբ առկա է լույսը: Տարվա երեք եղանակների հետ կապված կարծիք կա, որ բրոնզեդարյա ժամանակներում մեզանում գործածվել է երեք (30 օրական, չորս ամսյա) եղանակից կազմված օրացույցը: Ընդ որում, այս դեպքում տարվա եղանակները համապատասխանում են կենդանաշրջանի չորս աստղատների՝ հուր-հող-օդ-ջուր հերթափոխությամբ պայմանավորված, պարբերաշրջանին: Որոշ հիմքեր կան կարծելու, որ հայոց ավելի վաղ դիցա-խորհրդապաշտական օրացույցը եւս բաղկացած էր երեք (40 օրական երեք ամսյա) եղանակից:
գ) Եռաթեւ շրջված խաչը դիտվում է որպես՝ աշխարհի երեք կողմերին ու տարվա եղանակներին համապատասխան, բնության երեք նախատարրերի (հուր, մեգ, ջրահող) փոխազդեցությունների խորհրդանշան, որի վերին (հարավային) ծայրին հուրն է, աջ ծայրին մեգն (ջրահագ օդն) է՝ նախաերկինքը նշանավորող տարրը, ձախ ծայրին ջրահողն է՝ նախաերկիրը նշանավորող տարրը: Եվ խաչի ծայրերով կազմված եռանկյունին ներկայացնում է նախատարրերի փոխակերպումների մեգ»հուր»ջրահող»մեգ խորհրդակարգը:
Երեք նախատարրերի ու դրանցից չորս տարրերի տրոհման մասին հիշատակվում է բիբլիական արարչագործությունում, երբ ասվում է, որ նախնական ջրերը (իմա՝ միգամածությունը) միջանկյալ հաստատության (նույնը՝ օդակամարի) ստեղծմամբ բաժանվեցին տակի ու վրայի ջրերի, եւ հաստատության տակի ջրերի (իմա՝ ջրահողի) բաժանումով ձեւավորվեց ցամաքն ու ծովը (հողն ու ջուրը): Իսկ լույս-հուրը արարչության սկզբից անխառն էր: Երեք նախատարրերի միասնությանը համարժեք է հոգու եռամիասնությունը.
- բանականությանը՝ մեգը. մեգը կազմող տարրերը նշանավորում են միտքը, ջուրը՝ սթափ միտքը, օդը՝ մտքի սրընթացությունը,
- ցանկություններին՝ ջրահողը. այն կազմող տարրերը նշանավորում են ցանկությունների բավարարումը, ջուրը՝ սիրո ու կրքի հագեցումը, հողը՝ բարեկեցությունը,

- ցասումին՝ հուրը (ամենաուժգին տարրը):
Երեք նախատարրերը համարժեք են նաեւ կյանքի ուղու երեք ճանապարհներին.
- հուրը՝ սխրանքին. հրեղեն են էպիկական ու հեքիաթային սխրագործ հերոսները, մարտնչող դիցերը՝ առյուծասպան Միհրն ու վիշապասպան Վահագնը, ամպրոպային Արա դիցահայրը,
- մեգը՝ փառքին. փառքը օդի ու ջրի նման է անցողիկ է, կարող է օդի պես «հօդս ցնդել» ու ջրի պես հոսել-անցնել,
- ջրահողը՝ բախտին, որը ներկայացնում է բարեկեցությունն ու ընտանեական երջանկությունը:
դ) Եռաթեւ խաչի նման են «հաչա»-ները՝ երկճյուղ հենացիցն ու պարսատիկը (հնում զենք է եղել): Ընդ որում, «հաչա»-ն հիշեցնում է «խաչ» բառը (հ-խ հնչյունափոխությամբ): «Հաչա» բառը նշանակում է նաեւ գլուխ, ծայր, լեռան գագաթ (հմմտ. լեռան r նշանագրի հետ):
Եռաթեւ խաչ է հիշեցնում եռաթեւ նետիրսլաքը (դեմից նայելիս)՝ նույն Հայկյան նետի սլաքը:
ե) Եռաթեւ T խաչը հիշեցնում է կշեռքը եւ, միգուցե, դրանով նշանավորում է աշնանային օրահավասարն ու աշնանամուտը (համընկնում է Կշեռք աստղատան սկզբին), լույսի անկումն ու խավարի իշխումը, Միհր-արեւի էջքը անդրաշխարհ: Եվ խորհրդանշական է, որ այս խաչի վերին՝ հրեղեն-երկնային թեւը, ի տարբերություն քառաթեւ խաչի, բացակայում է:

* * *
Խաչերն առկա են մարդու մարմնակազմությունում:
ա) … խաչ է կազմվում գլխով, կողմ պարզած ձեռքերով ու միասին դրված ոտքերով: Այս դեպքում խաչի կենտրոնը համընկնում է վզի փոսիկին (աղամախնձորի ներքեւում է):
բ) X խաչ է կազմվում կիսավեր պարզած ձեռքերով ու լայն բացված ոտքերով, նաեւ՝ ուսերով ու ուսաչափ բացված ոտքերով (ճիշտ դիրքի պարագայում կենտրոնը համընկնում է պորտին):
գ) Հավասարաթեւ լ խաչ է կազմվում արեւհայրոցն ու քթարմատը, ուսերը միացնող գծերով (կենտրոնը համընկնում է վզի փոսիկին):
դ) Կարճ հորիզոնական թեւերով հավասարաթեւ (բուն հայոց քրիստոնեական) խաչ է կազմվում՝
- պորտն ու գլխագագաթը (կամ հոգետունը), ուսերը միացնող գծերով (կենտրոնը համընկնում է վզի փոսիկին):
- պորտն ու վզի փոսիկը, պտուկները միացնող գծերով (կենտրոնը համընկնում է արեւհայրոցին):
ե) T խաչ է կազմվում դեմքի վրա՝ քթով ու հոնքերով (կենտրոնը համընկնում է քթարմատին):

Համարվում է, որ երկնային մարմինները համապատասխանում ու տիրում են գլխի յոթ ծակերին. Արեգակը՝ աջ աչքին, Լուսինը՝ ձախ աչքին, Երեւակը՝ աջ ականջին, Լուսնթագը՝ ձախ ականջին, Հրատը՝ աջ քթանցքին, Լուսաբերը՝ ձախ քթանցքին, Փայլածուն՝ բերանին: Նկատելի է, որ գլխի ծակերը կանոնավոր դիրք ունեն դեմքի T խաչի նկատմամբ: Այսինքն, մարդու գլխին դրոշմված է Երկրի (նույնը՝ T խաչի կենտրոնի) նկատմամբ երկնային յոթ մարմինների որոշ խորհրդավոր փոխդասավորությունը: Միգուցե, սա մարդու արարման պահի փոխդասավորությու՞նն է:

Պետք է ասել, որ վերոնշյալ խաչի կենտրոնները (քթարմատ, վզի փոսիկ, արեւհայրոց, պորտ) մարդու կենսաէներգետիկ (մարմնակիսող) առանցքի հիմնակետեր են: Պորտը նաեւ խորհրդապաշտական կենտրոն է: Պորտով անցնող գիծը մարդու մարմինը կիսում է վերին-երկնային ու վարի-երկրային մասերի. պորտամասին (գոտկատեղին) համապատասխանում է Կշեռք աստղատունը, որով կենդանաշրջանն ու տարին կիսվում են: Մարդու պորտը համանման է աշխարհի պորտերին՝ դիցաբանական «անդրաշխարհի դռներին», որոնցով անցնում են աշխարհի երկինք-երկրակենտրոն առանցքները: Մեզանում հիշատակվում է երկու այդպիսի դռների մասին, մեկը՝ Տարոնի Իննակյան վայրում, Գիսանեի ու Դեմետրի մեհյանների (հետագա Սուրբ Կարապետի եկեղեցու) տեղում, մյուսը՝ Էջմիածնի Մայր եկեղեցու (նախկին մեհյանի) տեղում:

Գլխագագաթը (կամ հոգետունը), արեւհայրոցն ու պորտամասը հոգու կենտրոններ են: Գլխագագաթը հոգու բանական մասի կայանատեղն է, որն առաջինն է լքում մարմինը: Սրանով է Սուրբ Հոգին իջնում մարդու վրա: Գլխագագաթի շուրջի մազածածկույթը հիշեցնում է մեր գալակտիկայի պարույրաձեւ կառուցվածքը: Այլ կարծիքով հոգետունն (գանգոսկրերի միացման տեղն) է հոգու բանական մասի կայանատեղն ու այն տեղը, որով հոգին մտնում է նորածնի մեջ (երեխաների մոտ այն փափուկ է եւ միայն հետո է կարծրանում):

Արեւհայրոցը (սրտի մոտ է) հոգու ցասումնական մասի կայանատեղն է (տես. «սրտոտ մարդ»՝ արտահայտությունը): Պորտամասը հոգու ցանկական մասի կայանատեղն է, որը վերջինն է լքում մարմինը մարդու վերջին շնչի հետ:

Ուսերի մասին ժողովրդական հավատալիքներից հայտնի է, որ ծննդյան օրից մարդու ուսերին բազմում են նրան պահպանող ու փորձող աներեւույթ հրեշտակ-գրողները: Նրանցից մեկը նստում է աջ ուսին ու գրի է առնում նրա բարի գործերը, իսկ մյուսը նստում է ձախ ուսին ու գրի է առնում չար գործերը: Սրանք ուղեկցում են մարդուն ամբողջ կյանքում: Առաջինը բարության է մղում, երկրորդը՝ չարության: Այս հավատալիքը այնքան հարգի էր հնում, որ գործնական կիրառություն ուներ. օրինակ, Վաղարշակ Ա. արքան երկու մարդու նշանակում է գրով հիշեցնողներ՝ մեկը բարին, մյուսը՝ վրեժխնդրությունը: Բարին հիշեցնողին հրամայում է թագավորի բարկանալու կամ անիրավ հրաման տալու դեպքում հիշեցնել իրավացին ու մարդասիրությունը3: Ի դեպ, ուսերին իշխում է Երկավոր աստղատունը, որը ներկայացնում է զույգ գրողներին՝ Տիրին ենթակա դիցէակներին:

Պետք է ասել, որ մարմնակազմությունում նկատվել է թզաչափերի օրինաչափությունը, որով է նաեւ պայմանավորված մարմնախաչերի առկայությունը: Իրարից թզաչափ են հեռու գլխագագաթը, քթի ծայրը, վզի փոսիկը, արեւհայրոցը, պորտը, սեռական էներգակետը, թզաչափ են վզի փոսիկից մինչեւ ուսերը, բազուկներն ու արմունկները եւ այլն: Եվ, որպես կանոն (համաչափ կառուցվածքի դեպքում) ինն թզաչափ է մարդու հասակը, որից չորսը կազմում է վերին մարմնամասը, իսկ հինգը՝ վարի մարմնամասը: Ուշագրավ է, որ թզաչափերի ու հայոց գլխավոր դիցերի թվաքանակները համընկնում են, ու թզաչափերի համամասնությունը համարժեք է չորս երկնաբնակ դիցերի (Արա, Միհր, Զարեհ-Բարշամ, Տիր) ու հինգ երկրաբնակ դիցերի (Մարե, Վահագն, Աստղիկ, Անահիտ, Նանե) աստիճանակարգին: Եվ, միգուցե, «թզաչափ»-ը նշանակու՞մ է «դիցաչափ» (տես. «թիզ» ու «դից» բառերի նմանությունը, մատների ու ձեռքի ափի դիցական խորհուրդները, թզով զուշակությունն ու ձեռնագուշակությունը):

Ազգային էպոսից հայտնի է, որ Քեռի Թորոսը կարողա- նում էր Սասնա նորածին դյուցազունների մարմնական նշանների միջոցով որոշել նրանց կյանքի առաքելությունը: Նա Դավթի աջ թեւի վրայի «մսե խաչի» նշանով կանխատեսում է նրա փառավորությունը: Այսինքն, մարմնական խաչանշանները՝ որպես առաքելության նախանշաններ, դրոշմված են երեւելի մարդկանց մարմնին, որոնք կարող են նկատել միայն բնատուր մարդիկ: Իզուր չէ, որ երեւելի մարդկանց կոչում են «նշանավոր»: Խաչեր կան մարդու ձեռքի ափին, որոնց ձեռնագուշակությունում էական նշանակություն է վերագրվում: Օրինակ, ձեռքի ափի կենտրոնում (սրտի ու խելքի գծերի մեջտեղում) գտնվող խաչը «խորհրդավոր» է կոչվում՝ հուշելով տիրոջ ինչ-որ խորհրդավոր առաքելության մասին:

Խաչերը առկա են նաեւ մարդու ու կենդանիների գենետիկական միկրոկառուցվածքներում: Քառաթեւ X խաչն է հիշեցնում մարդու ու կենդանիների սեռորոշ «X» կոչվող քրոմոսոմը, իսկ եռաթեւ Y խաչն է հիշեցնում մարդու ու կենդանիների սեռորոշ «Y» կոչվող քրոմոսոմը: Քառաթեւ խաչի են նմանվում թռչունները ճախրանքի ժամանակ: Իսկ, օրինակ, արագիլի տեսքը ճախրանքի ժամանակ նման է բուն հայոց քրիստոնեական հավասարաթեւ խաչին:

* * *

Խաչի մարմնա-հոգեպահպան ավելի վաղ խորհրդապաշտության դրսեւորում է քրիստոնեական խաչակնքումը: Հայ եկեղեցին սկզբում ընդունում էր հետեւյալ խաչակնքումը. բթամատը, ցուցամատն ու միջնամատը գոցված՝ աջ ձեռքը տարվում է ճակատից դեպի կուրծք, ապա ձախ ուսից՝ աջ ուս: Ավելի ուշ (8-րդ դարից) խաչակնքումը կատարվում է ամբողջ մարմնով՝ ձեռքն իջեցնելով գլխից մինչեւ փոր: Նկատելի է խաչակնքման կապը արդեն թվարկված մարմնախաչերի հետ: Առաջին դեպքում ինքնադրոշմվում է բուն հայոց նախաքրիստոնեական հավասարաթեւ խաչը՝ հանձինս ճակատ-կուրծք (նույնը՝ քթարմատ-արեւհայրոց) ու ձախ-աջ ուսեր թեւերի (երկուսն էլ երկու թզաչափ են), իսկ երկրորդ դեպքում ինքնադրոշմվում է բուն հայոց քրիստոնեական խաչը՝ հանձինս գլուխ-փոր (նույնը՝ հոգետուն-պորտ) չորս թզաչափ ու ձախ-աջ ուսեր երկու թզաչափ թեւերի (երկու դեպքում էլ խաչի կենտրոնը վզի փոսիկն է): Աջ ձեռքի ձախ ուսից դեպի աջ ուս շարժումը կրում է աջակողմյան՝ բարի ու

առաջընթաց դիտվող շարժման խորհուրդը, իսկ երեք մատների գոցումը ներկայացնում է Սուրբ երրորդությունը:

Ընդհանրապես, մատների գոցումը ընդունված է մտախոյանքների ու աղոթքների ժամանակ: Այն ներկայացնելով որոշակի ընտրված դիցերի միաբանությունը՝ օգնում է նրանցից զորություն ստանալու ու ոգեշնչվելու (թաքնատեսություններում մատները կոչվում են դիցայրերի անուններով): Խաչակնքման մեր պարագայում մատների գոցումը ցույց է տալիս Վահագն-Արամազդ-Հրոնոս եռամիասնությունը (հայոց դիցաբանության սանիկ-սանահայր-կնքահայր երրորդությունը), որը համահունչ է քրիստոնեության Որդի-Հայր-Սուրբ հոգի երրորդությանը (այս մասին՝ այլ տեղում):

* * *

Խաչերն են ընկած մի շարք խորհրդանիշների կազմավորման հիմքում: Շրջանի մեջ առնված խաչը ներկայացնում է Երկրի ժ խորհրդանիշը: Վարի թեւին կցված շրջանով խաչ է ներկայացնում Երկրի մեկ այլ խորհրդանիշը: Վերին թեւին կցված շրջանով խաչ է ներկայացնում Լուսաբերի (Վեներայի) խորհրդանիշը: Վերին թեւին կցված շրջանով ու նրա վերեւում լուսնամահիկով խաչ է ներկայացնում Փայլածուի (Մերկուրիի) խորհրդանիշը:

Երկրի վերը հիշատակված առաջին խորհրդանիշը ցույց է տալիս երկրագունդը՝ իր ընդերքի խաչ-հրով: Մյուս խորհրդանիշը ցույց է տալիս երկրագնդի խաչ-արեգակի ներքեւում գտնվելը: Լուսաբերի խորհրդանիշը ցույց է տալիս նրա առավոտյան ծեգի այն պահը, երբ նա խաչ-արեգակի վերեւում է: Փայլածուի խորհրդանիշը ցույց է տալիս նրա առավոտյան ծեգի այն պահը, երբ նա խաչ-արեգակի վերեւում ու մահիկ-լուսնակի ներքեւում է4:

Կեռխաչ է հիշեցնում Լուսնթագի խորհրդանիշը (նման է Z տառին): Տեսակետներ կան, որ կեռխաչն կամ քառակուսու մեջ առնված խաչն է ընկած հայոց մաշտոցյան այբուբենի տառերի կազմավորման հիմքում5 (մեր կարծիքով, հայոց մաշտոցյան տառերը տիեզերական ծպտված նշանագրեր են):

Հայոց տառերից խաչված Քրիստոսին է նմանեցվել Ք տառը, որը համահունչ է Ք-Քրիստոս կարծեցյալ համապատասխանությանը: Հետաքրքիր է, որ խաչանման X, Y, Z տառերով են նշանակվում մաթեմատիկական անհայտները՝ փոփոխական մեծությունները (միգուցե, որոշիչ հանգամանք է եղել խաչերի խորհրդավորությունը), եռաչափ տարածության կոորդինատների առանցքները՝ X-ը աբսիցների (երկարության) առանցքը, Y-ը (լայնության) օրդինատների առանցքը, Z-ը ապլիկատների (բարձրության) առանցքը:

Բ

Ազգային էպոսում խաչը, որ կրում էին Սասնա դյուցազունները իրենց աջ բազկին, հիշատակվում է տարբեր անուններով՝ Խաչ Պատրազի, Պատերազմի, Պատարագի, Պատրաստի: Սովորաբար ասվում է, որ դրանք վաղնջական նույն խաչի (Խաչ Պատրազու) տարբեր իմաստափոխված անվանումներն են: Սակայն, մեր կարծիքով, դրանք տարբեր խաչերի անվանումներ են: Այսպես, «Պատրազի» խաչանունը թեեւ հայերենով չի ստուգաբանվում, սակայն հնդեվրոպական նախալեզվում «պատր» բառը «հայր» է նշանակում: Ընդ որում, հայերենում առկա են «պատր» արմատով բառեր՝ պատրվակ (պատճառ), պատրոն (բրբռ. սկեսրայր), պատրույգ (ճրագի դյուրավառ երիզը), պատրուս (բրբռ. ծառի պատվաստ), որոնք ցուցանում են «հայրական» սկիզբը, իրավունքն ու հրային, սերող բնույթը: Քրիստոնեական «պատրիարք»-ը, որը կաթողիկոսից բարձր կոչում է, «հայրապետ» կամ «նահապետ» է նշանակում: Ուստի «Պատրազի»-ն կարող է ստուգաբանվել որպես «Հայրածին» («ազն» նշանակում է ծին, սերունդ)՝ ներկայացնելով շարժման գոյավորողի՝ Հայր Աստծո (Դիցահոր) գաղափարը: Իսկ «Պատրաստի» խաչանունը կարող է ստուգաբանվել որպես «Հայր Աստծո» («աստ» արմատն է ընկած Աստված բառի հիմքում)՝ ներկայացնելով տիեզերքի արդեն արարված, պատրաստի վիճակը: Այսինքն, գտնում ենք, որ Խաչ Պատրազին (Հայրածին խաչն) ու Խաչ Պատրաստին (Հայր Աստծո խաչը) Դիցահոր նշանախաչերն են: Առաջինը կարող էր լինել աջ ու ձախ շարժումների միասնությունը նշանավորող X խաչը, իսկ երկրորդը՝ հայոց բուն տարեմուտն ու տարեկեսը նշանավորող հավասարաթեւ լ խաչը (ի տարբերություն կեռխաչի՝ ուղղաթեւ խաչը ցույց է տալիս շարժումից

վերացարկված տիեզերքի պատրաստի վիճակը): Եվ, միգուցե, այս խաչերը մեր դյուցազուն նախնիները կրում էին արեւհայրոցի՞ն:

Էպոսում ասվում է, որ իրենց աջ թեւի խաչի վրա Սասնա դյուցազունները ճիշտ երդում էին ուտում, որը սեւանալով՝ տիրոջը հիշեցնում էր երդումը դրժելու մասին: Դիցաբանությունից հայտնի է, որ ուխտի, երդման, դաշինքների նախախնամ դիցը Միհրն է, որը հսկում է դրանց կատարումն ու պատժում խախտողներին: Ուստի, վերոհիշյալ խաչը Միհրի նշանախաչն է: Մյուս կողմից, Միհրը ներցեղային ու միջցեղային կապերի հովանավոր դիցն է, որը պահպանում է ազգերի ներքին միությունն ու ազգամիջյան համերաշխությունը՝ եւ սրանցով հանդերձ, խաղաղություն-ներդաշնակությունը համայն աշխարհում: Արարչակարգին սպառնացող հասարակական մեծ աղետների ժամանակ նա իր երկրային հայտնություններով փրկում է մարդկությունը եւ արդարություն հաստատում աշխարհում: Միհրի այս առաքելություններին համահունչ է պատարագը՝ քրիստոնեության գլխավոր արարողությունը: Այն արվում է Քրիստոսի փրկչական զոհաբերության հիշատակին, եւ նպատակն էլ հավատացյալներին հավատքի, համերաշխության ու խաղաղության մեջ պահելն է: Այսինքն, գտնում ենք, որ Խաչ Պատարագին Միհրի նշանախաչի իմաստային հիշատակությունն է: Այս առումով, ուշագրավ է «պատարագ» բառի «արագ» վերջնամասը, որը հիշեցնում է «Արէգ»-ը՝ Միհրի բուն անունը: Խաչ Պատարագին կարող էր լինել ձմեռային արեւադարձն ու Միհրի ծնունդը նշանավորող անհավասարաթեւ … խաչը կամ արեգակի օրապտույտը նշանավորող աջակողմյան կեռխաչը: Այս խաչը հայոց դյուցազունները կրում էին աջ բազկին կամ ուսին:

Անվանումից ակնառու է, որ Խաչ Պատերազմին պատերազմի, պայքարն ու աստվածամարտը ներկայացնող խաչ է: Հայոց դիցարանում պատերազմի ու հաղթության ահեղ դիցը Վահագն է: Այսինք, Խաչ Պատերազմին Վահագնի նշանախաչն է՝ Վահագնախաչը: Այն կարող էր լինել ամառային արեւադարձն ու պայքարը նշանավորող անհավասարաթեւ շրջված խաչը, պատերազմի X խաչը կամ խավարածրի աստղատներով արեգակի տարեկան շրջապտույտը (նույնը՝ Վահագնի տասներկու սխրանքները) նշանավորող ձախակողմյան կեռխաչը: Թերեւս, Վահագնախաչը հայոց քաջամարտիկները կրում էին ձախ բազկին կամ ուսին:

Միհրի նշանախաչի ու Վահագնախաչի խորհրդանշա- կան կրումը համահունչ է աներեւույթ դիցէակների մարդու ուսերին բազմելուն: Աջ ուսին բազմած՝ մարդասիրությունը հուշող, բարության մղող դիցէակը դրդում է նրան Միհրի խաղաղարար, հաշտարար առաքելության իրագործմանը, իսկ ձախ ուսին բազմած՝ վրեժխնդրությունը հուշող, պատժի մղող դիցէակը դրդում է Վահագնի մարտնչող, հաղթական առաքելության իրագործմանը:

* * *

Խորհրդապաշտության արդյունքում խաչը հայտնվեց աստղալից երկնքի պատկերասրահում: Հարավային խաչ անունն է կրում հարավային կիսագնդի համաստեղություններից մեկը, որը գտնվում է Կենտավրոսի (Հուշկապարիկի) համաստեղության ներքեւում (մարդաձիու աստղապատկերի ետեւի ոտքերի մոտ), ավելի մոտ աշխարհի հարավային բեւեռին: Այն բաղկացած է իրար հետ խաչվող եւ անհավասարաթեւ … խաչ կազմող ոչ պայծառ չորս աստղից ու, թաքնված լինելով Ծիր Կաթնի վրա, կարծես, օծվում է նրա ջրերում: Խորհրդավոր է խաչի ուղղվածությունը. նրա ուղղահայաց մասի շարունակությունը համարյա անցնում է հարավային բեւեռի վրայով: Այդ իսկ պատճառով, չնայած իր աննշան տեսքին, Հարավային խաչը դարձել է մի քանի պետությունների խորհրդանշան: Սա է պատկերված Ավստրալիայի, Նոր Գվինեայի, Նոր Զելանդիայի ու Արեւմտյան Սամոայի դրոշներին: Հայտնի է մեկ այլ խաչ-համաստեղություն, որը կոչվում է Կեղծ խաչ: Այն եւս հարավային կիսագնդի համաստեղություններից է ու բաղկացած է Արգոնավ համաստեղության Առագաստներ եւ Ողնուց ենթահամաստեղությունների խաչ կազմող հարակից չորս պայծառ աստղերից: Կեղծ խաչը տեսքով նման է Հարավային խաչին, սակայն ծագում է վերջինից մոտ երեք ժամ առաջ եւ ուղղվածությունն էլ հարավային բեւեռից խոտորվող է:

Այս խաչը, թերեւս, կոչվում է Կեղծ, քանի որ կազմված է պայծառ, աչք զարնող աստղերից, վաղ է ծագում, սակայն «կեղծ», բեւեռախոտոր (իմա՝ աստվածախոտոր) ուղղություն ունի: Մինչդեռ իրական

(Հարավային) խաչը, կազմված է աչք չզարնող աստղերից, ավելի ուշ է ծագում, սակայն, խորհրդավոր ու լույսի մեջ ողողված լինելով, «ճիշտ», բեւեռամետ (իմա՝ առ աստված) ուղղություն ունի: Ի դեպ, այս խաչերի մեկնությունները բնորոշ են մարդկային երկու հակադիր՝ ցուցամոլ ու փառամոլ եւ համեստ ու սխրագործ տիպերին:

* * *

Սկզբնական քրիստոնեական համայնքները խաչը չէին ընդունում, ինչպես մեր ժամանակներում որոշ աղանդներ (հոգեգալստականներ, եհովայի վկաներ եւ այլն)՝ այն համարելով Քրիստոսի տանջանքի ու մահվան գործիք: Ավելի ուշ ժամանակներում քրիստոնեության ու նախաքրիստոնեական կրոնների, դիցաբանության հաշտեցման արդյունքում, քառաթեւ խաչը իր պարզ տեսքով դարձավ քրիստոնեության գլխավոր խորհրդանշանը: Քրիստոնեական քառաթեւ խաչի մեզ հասած առավել խորհրդավոր ու ազդեցիկ, շքեղ եւ օրինաչափորեն ձեւավորված պատկերները միայն ընդհանուր գծերով են հիշեցնում նախնական քրիստոնեական խաչը, քանի որ ամբողջ այդ ընթացքում նրանք վերաիմաստավորվել ու ազգայնացվել էին: Հայը դրանում արթնացրել էր իր բուն հավատքն ու աշխարհընկալումը, իսկ Հայ եկեղեցին դրա շնորհիվ քրիստոնեական տաճարները դարձրել հայության համար առավել հրապուրիչ ու ձգողական: Վերը ասվածը հիմնավորելու համար ներկայացնենք հայկական-քրիստոնեական խաչերի խորհուրդները:

ա) Բուն հայոց քրիստոնեական հավասարաթեւ խաչի ուղղահայաց թեւերը ավելի երկար են, քան հորիզոնական թեւերը (այլաբանորեն հոգեւորը գերակշռում է մարմնավորին), իսկ հայոց բուն նախաքրիստոնեական հավասարաթեւ խաչի բոլոր թեւերը հավասար են (այլաբանորեն հոգեւորն ու մարմնավորը հավասարակշռված են): Այսինքն, մեր դիցապաշտ նախնիների մոտ հոգեւորն ու մարմնավորը, աստվածայինն ու աշխարհիկը ներդաշնակ էր:
բ) Հայոց քրիստոնեական խաչերի գերակշիռ մասի (առավելապես պատկերված խաչքարերի վրա) թեւերը երկելուստ են, որոնցից յուրաքանչյուրն ունի երեք ենթաթեւ: Այսինքն, սրանք կրում են ութ եւ քսանչորս թվերի խորհուրդները՝ առաջինը որպես աշխարհի կողմերի, բնության տարրերի, երկնային մարմիններիհ, իսկ երկրորդը որպես օրվա ժամերի թվաքանակ: Միաժամանակ, այս խաչերը կարելի է դիտել որպես աջակողմյան ու ձախակողմյան կեռխաչերի համադրություն:
գ) Հայոց քրիստոնեական խաչերի փոքրաթիվ մասի (նույնպես պատկերված խաչքարերի վրա) թեւերը եռաելուստ են: Այսինքն, այս խաչերը կրում են տասներկու թվի խորհուրդը՝ որպես արեգակի աստղատների ու տարվա ամիսներ թվաքանակ: Սրան միատեղ, այս խաչերը կարելի է դիտել որպես ուղղաթեւ խաչի, աջակողմյան ու ձախակողմյան կեռխաչերի համադրություն:
դ) Խաչքարերի վրայի խաչերի մի մասի տակ քանդակված են դեպի վեր ձգվող եւ աղոտ ձեւով ձկան պոչ հիշեցնող զույգ պատկերներ, որոնք, մեր կարծիքով, առնչվում են Ձկներ արեգակնային աստղատան հետ (պատկերվում է զույգ ձկների տեսքով): Այն իր հերթին առնչվում է քրիստոնեական խորհրդապաշտության հետ: Այսպես, Քրիստոսի ծնունդի տարեթվին ու մեր դարաշրջանում գարնանային գիշերահավասարի օրը (մարտի 21-ին) արեգակը Ձկներ համաստեղությունում է: Կամ երբ փարիսեցիները Քրիստոսից նրա աստվածայնությունը ապացուցող նշան էին պահանջում, նա՝ որպես իր վախճանի խորհուրդ, մատնանշում է Հովհան մարգարեի նշանը, որն է. ինչպես Հովհանը երեք օր եւ երեք գիշեր կետ ձկան փորում էր, այնպես էլ ինքը երեք օր եւ երեք գիշեր երկրի սրտում կլինի (խաչվելուց հետո-հեղ.): Ընդ որում, Քրիստոսի հարության հիշատակին տոնվող Զատիկի օրը որոշելու համար հիմք է ընդունվում գարնանային գիշերահավասարի օրը (նշվում է սրանից հետո ընկած լիալուսնին հաջորդող կիրակի օրը):
ե) Խաչքարերի վրայի որոշ խաչերի ներքեւում քանդակված է խոշոր ու շքեղ ձեւավորված շրջանաձեւ զարդանախշ, որին խնձորակ են կոչում: Այս խաչի ու խնձորակի համադրությունը հիշեցնում է Երկրի խորհրդանշանը:

* * *

Հայ եկեղեցին ներկայումս նշում է խաչին նվիրված չորս տոն:

ա) Խաչին նվիրված քրիստոնեական տոներից ամենահինն ու գլխավորը Խաչվերացն կամ Վերացման խաչն է (կոչվում է նաեւ Սուրբ խաչ): Աշխարհիկ միջավայրում այս տոնը հայտնի է Սբխեչ աղճատված անունով: Խաչվերացը Հայ եկեղեցու հինգ տաղավար (գլխավոր) տոներից մեկն է: Խաչվերացը

համընդհանուր տոն է: Այն սովորաբար մեկնվում է որպես Քրիստոսի խաչափայտին նվիրված տոն: Այսպես, պարսից Խոսրով Բ թագավորը հարձակվում է Բյուզանդիայի վրա, ու 614թ. գրավելով Երուսաղեմը, ավար է տանում Քրիստոսի խաչափայտը: Հերակլ կայսրը այն ետ բերելու համար հարձակվում է պարսիկների վրա եւ հաղթում: Կնքվում է հաշտության դաշնագիր, որի կարեւոր կետերից մեկն էլ խաչափայտի վերադարձն էր: Հերակլ կայսրը 628/9թ. հանդիսավորությամբ այն նորից Երուսաղեմ է փոխադրում, որից հետո բոլոր քրիստոնյա եկեղեցիներում սեպտեմբերի 14-ը տոնվում էր որպես Քրիստոսի խաչափայտի գերեդարձի հիշատակի օր: Ներկայումս Հայ եկեղեցին այն նշում է սեպտեմբերի 14-ին ամենամոտ (սեպտեմբերի 11-17-ը ընկած) կիրակի օրը:
Սակայն տոնի մեկ այլ մեկնությամբ նրա ակունքները հասնում են քրիստոնեության վաղ շրջանը, եւ որ այն նվիրված է Հակոբ տեառնեղբոր կողմից խաչի հրապարակային պաշտամունքի հաստատմանը: Մեր կարծիքով, սա համոզիչ չէ մի քանի առումներով: Նախ վաղ շրջանի քրիստոնյաները խաչը չէին ընդունում, իսկ տոնի Խաչվերաց կամ Վերացման խաչ անունը ավելի շուտ նշանավորում է այդ ժամանակ խաչի պաշտամունքի «վերացումը», եւ ոչ թե հաստատումը: Այսինքն, գտնում ենք, որ Խաչվերացի տոնը իրականում քրիստոնեության վաղ շրջանում խաչի դիցական պաշտամունքի վերացման հիշատակի օր է:
Հայ եկեղեցին Խաչվերացում ներմուծել է հին ժամանա-կների նախնիների պաշտամունքը: Աշխարհիկ միջավայրում այս տոնը գլխավորապես առնչվում է նոր մահացածի, ննջեցյալների հիշատակը հավերժացնելուն (մոմավառությամբ, խնկարկությամբ ու հոգեհացով), եւ այս առումով Խաչվերացը միակն է եկեղեցական տոնացույցում: Նկատելի է տոնի մոտիկությունը աշնանային գիշերահավասարի օրվան (սեպտեմբերի 23-ին), որից հետո հուր-խաչը խորհրդանշականորեն անցնում է հող տարերք՝ անդրաշխարհ, ու մահվան խորհրդակիր մութը իշխում է կյանքի խորհրդակիր լույսի վրա: Նախնիների պաշտամունքը հավերժացնելու Խաչվերացի թաքնախորհուրդի մասին է վկայում հետեւյալը: Տավրոսյան լեռներում կար մի վայր, ուր դեռ մինչեւ մեր դարասկիզբը անհիշատակելի ժամանակներից, ամեն տարի սեպտեմբերի 14-ին շրջակա գավառներից հավաքվում էին բարեկամ ու թշնամի ազգերի մարդիկ (հայեր, քրդեր, ասորիներ եւ այլն)՝ զոհ մատուցելու Աստծուն որպես հիշատակ ջրհեղեղից հետո մարդկության նահապետ Նոյի առաջին փրկչական զոհաբերության: Խաչվերացի տոնի շարունակություն կազմող ութօրեքի երկուշաբթի, ուրբաթ եւ շաբաթ օրերը եւս կոչվում են Խաչի տոներ:

բ) Խաչի մյուս տոնը Գյուտխաչն է: Այն համընդհանուր տոն է, եւ մեկնվում է որպես 327թ. Հեղինե թագուհու կողմից Քրիստոսի խաչափայտը Գողգոթայի բլուրին (Հիսուսի խաչվելու տեղում) գտնելու (գյուտի) հիշատակի օր: Հայ եկեղեցին Գյուտխաչը նշում է Խաչվերացին հաջորդող յոթերորդ կիրակի օրը (հոկտեմբերի 23-29-ը): Տոնը աշխարհիկ տարածում չունի եւ նրան դիցա-բնապաշտական խորհուրդներ չեն վերագրվում: Թեեւ, ըստ մեզ, չի բացառվում նրանում խաչի պաշտամունքի վերականգնման «գյուտի» թաքնախորհուրդը: Նկատելի է տոնի մոտիկությունը չարը խորհրդանշող արեգակնային Կարիճ աստղատան սկզբին (հոկտեմբերի 21-ին կամ 24-ին)՝ նշանավորելով խաչի պաշտամունքի պանծացումը ընդդեմ չարի ու չարություն սերմանող «կարճամարդկանց»՝ դավաճանների, ազգուրացների ու համաշխարհային «սատանայական» ուժերի:

գ) Մեկ այլ խաչատոն է Երեւման խաչը, որի ծագումը կապվում է այն ավանդության հետ, թե իբր 351թ. մայիսի 7-ին՝ Հոգեգալստյան օրը, ցերեկով Երուսաղեմի վրա երկնքում մի քանի ժամ հսկա լուսավոր խաչ է երեւացել, որի ծայրերից մեկը հասնում էր Գողգոթայի բլուրը, իսկ մյուսը՝ Ձիթենյաց լեռը (Քրիստոսի մահվան ու համբառնման վայրերը): Քրիստոնյա եկեղեցիները այն սկզբնապես տոնում էին մայիսի 7-ին: Կաթոլիկ եկեղեցին այս տոնը չունի: Ներկայումս Հայ եկեղեցին Երեւման խաչը նշում է Զատիկին հաջորդող հինգերորդ կիրակի օրը (ապրիլի 19-ից՝ մայիսի 23-ը): Ընդհանուր առմամբ, նկատելի է տոնի կապը մայիս ամսվա հետ, որը խորհրդանշական ամիս է հայերիս համար: Մայիսին են տեղի ունեցել հին ու նոր ժամանակների հայոց վճռական ճակատամարտերը՝ Ավարայրը (մայիսի 26-ին), մեր դարասկզբի մայիսյան (Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի) ճակատամարտերը, Շուշիի մերօրյա ազատագրումը (մայիսի 9-ին), ինչպես նաեւ նույն օրը Հայրենական Մեծ պատերազմի ավարտը, որի նախօրեին հայ զինվորները պարեցին հաղթության ավանդական քոչարին Ռայխստագի վրա:

դ) Բուն հայկական-քրիստոնեական խաչատոն է Վարագա խաչը: Հայ եկեղեցին այն տոնում է Խաչվերացին հաջորդող երկրորդ կիրակի օրը (սեպտեմբերի 25-ից՝ հոկտեմբերի 1-ը): Վարագա խաչի մասին եկեղեցական ավանդությունը պատմում է, թե Քրիստոսի խաչափայտի մի մասունքը, որն իրենց

հետ Հայաստան էին բերել Հռիփսիմյան կույսերը եւ թաքցրել Գալիլիա կոչված ժայռի մեջ (Վարագա վանքի մոտակայքում), հանկարծ տասներկու լուսավոր սյուների ձեւով երեւում է երկու ճգնավորների եւ հանգչում այն տարածքում, ուր հետագայում Վարագավանքն է կառուցվում: Այն, որ այս ավանդությունը անհաջող (գուցե, միտումնավոր) հորինվածք է, ապացուցում է աչք զարնող հետեւյալ ոչ անհայտ հակասությունը. Քրիստոսի խաչափայտը գտել է Հեղինե թագուհին 327թ., իսկ Հռիփսիմյան կույսերը Հայաստան են եկել 301թ.: Ուստի գտնում ենք, որ այս դեպքում գործ ունենք Վահագնի իմաստափոխված, քրիստոնեացված խորհրդապաշտության հետ, որի առանցքը կազմում են Վահագնախաչը (նույն՝ Խաչ Պատերազմին) եւ արեգակի աստղատները ներկայացնող նրա տասներկու թեւերը7: Եվ, ըստ այդմ, գտնում ենք նաեւ, որ Վարագավանքը կառուցվել է Վահագնի նախկին մեհենատեղում: Մեր պնդումների օգտին են վկայում մի քանի հանգամանքներ:
- Վարագա խաչը տոնվում է Սուրբ Գեւորգի տոնի հաջորդ օրը (վերջինս նշվում է շաբաթ օրը), իսկ «վիշապասպան» ձիավորի տեսքով պատկերվող Գեւորգը անվանափոխված Վահագն է:
- Համարժեք տոների վերոնշյալ շաբաթ-կիրակի հաջորդականությունը առկա է մեկ այլ դեպքում եւս: Հայ եկեղեցին Շողակաթի (ըստ մեզ՝ Անահիտ դիցուհու մեհենանունն է) տոնը նշում է Աստվածածնի վերափոխման (Խաղողօրհնեքի) տոնի նախընթաց շաբաթ օրը, որը Անահիտի դիցատոնի վերափոխված տարբերակն է:
- Վարագա խաչի տոնի առթիվ երգվող շարականում խաչը հիշատակվում է որպես «ամենահաղթ» նշան, իսկ, ինչպես գիտենք, Վահագնը հայոց ռազմիկներին քաջություն շնորհող ամենահաղթ դիցն է:
- Վարագավանքը գտնվում է Վարագ լեռան լանջին (վերջինս գտնվում է Վանա լճի հարավ-արեւելյան կողմում): Նկատելի է Վարագ լեռանվան նմանությունը Վահագն դիցանվան հետ (հավանական է Վահագն-Վահագ-Վարագ բառանցումը):
- Վարագ լեռը հայոց նշանավոր դիցօթեւան լեռներից է: Այսպես, ըստ ավանդազրույցի՝ արեգակը ամեն առավոտ ելնում է Վանա լճի հատակից ու, հենվելով Վարագ լեռան վրա, համբառնում է երկինք (միջնադարի արեւորդիները արեգակին Վահագն էին կոչում՝ երեւի, նկատի առնելով նրա «արեգակունք» աչքերը): Աստղիկ դիցուհու անունն է կրում այս լեռան ամենաբարձր գագաթը (հայտնի է Վահագն-Աստղիկ սիրային կապը): Վարագ լեռան անունով էր կոչվում հայոց նախաքրիստոնեական տոմարի ամսվա 29-րդ օրը:

Այսքանից հետո կցանկանայինք հարգել Վարագա խաչի տոնի հիմնադիր հայոց լուսահոգի Ներսես Գ. Տայեցի Շինարար կաթողիկոսի հիշատակը (աթոռակալությունը՝ 641-661 թթ)՝ այս խորհրդավոր տոնը կյանքի կոչելու ու հայոց դիցական մոռացված հավատալիքները սերունդներին ավանդելու համար:

1 - Նմանապես հայոց բնօրրանը՝ Հայկական բարձրավանդակը, կենտրոնական դիրք է գրավում Մեծ Սարահարթի ներսում: Այն գտնվում է եվրոպական եւ ասիական բնությունները մարմնավորող Ալպերի ու Պամիրի, Աֆրասիան եւ Եվրասիան բնորոշող Եթովպիական բարձրավանդակի ու Ուրալի միջեւ, սակայն իր բնական առանձնահատկություններով տարբերվում է աշխարհագրական այս միջավայրերից:
2 - Տիրի արձանը ժամանակին կանգնեցվել էր Արտաշատ մայրաքաղաքից դուրս՝ ճանապարհի վրա: Տիրի արձանի այս տեղադրությունը բացատրվում է նրա ճամփորդության ու առեւտրի հովանավոր լինելով: Հելլադայում ճանապարհների մոտ դրվող քարե կոթողները Տիրին համարժեք դից Հերմեսի անունով էին կոչվում:
3 - Ցանկալի կլիներ, որ մեր պետական բարձրաստիճան այրերը խորհրդականներ ընտրելիս ու նրանց խորհուրդներից օգտվելիս առաջնորդվեին նույն սկզբունքով: Այս դեպքում նրանց գործողություններն ավելի հավասարակշռված, շրջահայաց ու արդյունավետ կլինեին:
4 - Ըստ մեզ, Փայլածուին վերագրվող խորհրդանիշը ավելի շուտ համապատասխանում է Լուսաբերին եւ հակառակը: Լուսաբերի առավոտյան ավելի վաղ ծեգի պահին Լուսինը դեռ երկնքում է, մինչդեռ Փայլածուի արեւածագին ավելի մոտ ծեգի պահին Լուսինը արդեն շրջված է լինում:
5 - Թեեւ, այս ձեւով կարելի է հիմնավորել տառերի մեծ մասի կազմավորումը, սակայն որոշ՝ Ծ, Ջ, Զ, Ձ, Չ, Շ, Ճ. Ց տառերի կազմավորումը վիճելի է:
6 - Մեր նախնիներին հայտնի էր նաեւ Ուրան մոլորակը, որին, մեր կարծիքով, կոչում էին Արամ անունով:
7 - Վահագնի հունական համարժեք դիցամարդ Հերակլեսը հայտնի է իր տասներկու սխրանքներով, որոնց առարկաները հիշեցնում են կենդանաշրջանը բնորոշող կերպարները. օրինակ, Նեմեյան առյուծը՝ Առյուծը, մարդաձիերը (կենտավրոսները)՝ Աղեղնավորը (այս աստղատունը պատկերվում է մարդաձիու տեսքով), Կրետյան ցուլը՝ Ցուլը, Ավգյան ախոռները՝ Ջրհոսը (ախոռները մաքրվում են

հոսող ջրերի միջոցով), ամազոնուհիների Իպոլիտ թագուհու գոտին՝ Կշեռքը (գոտին կապվում է այս աստղատան կողմից իշխվող մարմնամասի վրա) եւ այլն:

4. Հայոց Եկեղեցական Տոների Դիցաբանական Թաքնա Որհուրդները

Հայոց եկեղեցական տոնացույցի գլխավոր տոները հինգն են, որոնք «տաղավարաց» են կոչվում անցյալում տաղավարներով տոնվելու պատճառով: Դրանք են՝ Աստվածահայտնությունը, Զատիկը, Պայծառակերպությունը, Աստվածածնի վերափոխումը, Սուրբ խաչը:

- * -

+Աստվածահայտնություն. Հայ եկեղեցին Աստվածահայտնությունը (Քրիստոսի ծնունդը) նշում է հունվարի 6-ին: Անցյալում այն եղել է ինՆօրյա (հունվարի 5-13-ը) տոնաշրջան, որը հիշատակում էր նրա կյանքի նախաառաքելության շրջանի խորհրդանշական դեպքերը: Այս տոնաշրջանն են ներկայացնում եվրոպական «ծննդյան տոները»: Մինչեւ 4-րդ դարը քրիստոնեական եկեղեցիները Ծնունդը նշում էին հունվարի 6-ին: Հայ եկեղեցին հավատարիմ է մնացել ավանդույթին: Կաթոլիկ եկեղեցին Ծնունդը նշում է դեկտեմբերի 25-ին, իսկ Ուղղափառ եկեղեցին՝ հունվարի 7-ին: Կաթոլիկ եկեղեցին Քրիստոսի ծնունդը հարմարեցրել է Միհրի ծնունդի դիցատոնին եւ տոնում է ձմեռային արեւադարձին (դեկտեմբերի 22-ին) հաջորդող երրորդ օրը, որից հետո ցերեկվա տեւողությունը կտրուկ աճում է, իսկ գիշերվանը՝ նվազում (դեկտեմբերի 22-24-ը դրանք աննշան են փոխվում): Հունվարի 6-ը եւս խորհրդանշական օր է: Մեր ժամանակներում Երկիրը արեգակնամոտ դիրքում է գտնվում հունվարի 2-5-ը, երբ նրա շարժման արագությունը ամենամեծն է: Եվ հունվարի 6-ը դեկտեմբերի 25-ից (իրական արեւադարձից) տասներկու օր հետո է ընկած: Այսինքն, հունվարի 6-ը իրենով համադրում է ձմեռային իրական արեւադարձի ու Երկրի արեգակնամոտ դիրքի խորհուրդները:

***

Աստվածահայտնության հետ են կապված Անվանակոչությունը, Մկրտությունը եւ Տրնդեզը:

+Անվանակոչություն. Անվանակոչությունը հիշատակում է ծննդյան ութերորդ օրը Հիսուսի տաճար տանելն ու անվանակոչելը՝ մովսեական օրենքի համաձայն: Հավանաբար այս խորհրդածեսը օրերի տարբերությամբ առկա էր նաեւ դիցական պաշտամունքներում: Հայ եկեղեցին Անվանակոչությունը տոնում է հունվարի 13-ին՝ Ծնունդից յոթ օր հետո: Կաթոլիկ եկեղեցին այն տոնում է հունվարի 1-ին:

+Մկրտություն. Մկրտությունը հիշատակում է Հիսուսի Հորդանան գետում մկրտվելը, Սուրբ Հոգի ստանալը (առաջին աստվածավկայությունն) ու քարոզչության սկիզբը: Տոնին կատարվում է ջուր օրհնելու արարողություն՝ խաչի ջրում ընկղմում եւ ջրի մեռոնում, որը հայտնի է աչալվա կամ Ջրօրհնեք անվամբ: Առաջներում Ջրօրհնեքը կատարվել է գետի կամ լճի մեջ, երբ խաչը նետվել է ջուրը եւ այն հանողը հռչակվել է տոնի կնքահայր: Ջրօրհնեքը ջրի խորհրդապաշտությունից ներմուծված ծես է (միգուցե, ջրի հատակից խաչ-հրո ծագման հավատալիքի դրսեւորում է):

Հայտնի է, երբ 1022թ. Պետրոս Ա. կաթողիկոսը հույների հետ Բյուզանդիա մեկնելիս Ճորոխ գետում ջրօրհնեք էր կատարում, գետը հանկարծ սկսում է հոսել հակառակ ուղղությամբ, որի համար կաթողիկոսը անվանակոչվում է Գետադարձ: Սա նրա սրբազանությունը հավաստող դեպք է դիտվում, սակայն, ըստ մեզ, գետի անբնական հոսքն ավելի շուտ հավաստում է նրա անաստվածությունն ու ազգուրացությունը. Գետադարձը Անին բյուզանդացիքին վաճառողներից էր: Հայ եկեղեցին Ծնունդն ու Մկրտությունը միաժամանակ է տոնում: Սա հիմնավորվում է նրանով, թե երեսնամյա Հիսուսը մկրտվեց ծննդյան օրը: Կաթոլիկ եկեղեցին Մկրտությունը նշում է հունվարի 6-ին, իսկ Ուղղափառ եկեղեցին՝ հունվարի 19-ին, այսինքն՝ Ծնունդից տասներկու օր հետո:

Xհովհաննես-Կարապետի Ծնունդ. Հայ եկեղեցին Անվանակոչության հաջորդ օրը՝ հունվարի 14-ին, նշում է Հովհաննես-Կարապետի (Մկրտիչի) ծնունդը: Մկրտիչի ծնունդը Քրիստոսի ծնունդից հետո նշելը հիմնավորվում է Հիսուսի մասին Մկրտիչի այս վկայությունով. «Նա է ինձանից հետո եկողը, որ ինձանից առաջ եղավ (իմա՝ ամսով շուտ ծնվեց-ըստ հեղ.)...»: Հնարավոր է, որ սրանում տեղ է գտել նաեւ դիցահայտնությունների (մասնավորապես՝ Քրիստոսի հայտնության) հետ կապված ինչ-որ

խորհրդապաշտություն, քանի որ Մկրտիչը հանդես է գալիս որպես Աստծո որդու գալստյան ավետաբեր, նրա առաքելությունը նախապատրաստող կարապետ:

ՏՆՆԴԵԶ. Տրնդեզը, որի եկեղեցական անվանումը Տյառնընդառաջ («Տիրոջն ընդառաջ») է, տոնվում է ծննդյան քառասուներորդ օրը՝ փետրվարի 14-ին: Կաթոլիկ եկեղեցին այն տոնում է փետրվարի 2-ին: Եկեղեցական ավանդությամբ տոնը հիշատակում է քառասնօրական Հիսուսի ընծայումը տաճարին՝ մովսեական օրենքի համաձայն, ու նրան հրավառ ջահերով «ընդառաջ գնալը»: Սակայն տոնին խարույկավառումը դիցական նշանավոր հրատոնից ներմուծված եղանակների բարեխառնմանն ուղղված հմայածես է: «Տրնդեզ»-ը ստուգաբանվում է որպես «ատր-հրո դեզ»՝ խարույկ, որը հնում միասնաբար տոնվել է հրապարակներում («հրապարակ» նշանակում է «հրո շրջան»): Ազարիա Զուղայեցու օրացույցով (տարեմուտը՝ մարտի 21-ին) պարզվում է Տրնդեզի բնապաշտական թաքնախորհուրդը: Սրանում փետրվարի 14-ը սկզբնավորում է Զյունահալ ամիսը: Ի դեպ, մեր ժամանակներում արեգակը փետրվարի 16-ին մտնում է ձմեռ Ž գարուն անցման սկիզբը՝ ձնհալ-«ջրերի հոսումն» խորհրդանշող Զրհոս աստղատունը:
Տարբեր կարծիքներ կան Տրնդեզի դիցատոն լինելու մասին: Ըստ ոմանց այն նվիրված էր Տիրին: Այլոց կարծիքով այն նվիրված էր Միհրին: Առավել ընդունելի է երկրորդը, քանի որ խարույկավառումը համապատասխանում է Միհրի հրեղեն բնույթին: Մյուս կողմից, այն տոնվելով Քրիստոս =Միհրի ծնունդից քառասուն օր հետո, հիշեցնում է մեզանում առկա ծննդյան ծեսը, երբ նորածին մանկանը ի տեսություն՝ այցելում են ծննդյան 40-րդ օրը:
- * -

ԶԱՏԻԿ. Զատիկը տոնացույցի կենտրոնական տոնն է, որը կողմնորոշիչ է հիմնական շարժական տոների օրը որոշելու համար: Այն նշվում է գարնանային օրահավասարից (մարտի 21-ից) հետո ընկած լիալուսնին հաջորդող կիրակի օրը՝ 35-օրյա շարժականությամբ (մարտի 22-ից՝ ապրիլի 25-ը): Զատիկը հիշատակում է Քրիստոսի հարությունը: Իրականում նրա հիմքում դիցա-բնապաշտական նշանավոր տոն է ընկած: Այն հիշեցնում է հայոց գարնանամուտ-Ամանորը՝ բնության գարնանային «հարության» տոնը, որի անունը նշանակում է «հին ու նոր տարիները զատող»: Իսկ նրա տոնումը գարնանային առաջին լիալուսնից հետո հարմարեցում է եբրայական հին օրացույցին:
Զատիկին ձվի ներկումը բնության գարնանային զարթոնքի հմայածես է, քանի որ ձուն աշխարհի օրինակն է. դեղնուցը հիշեցնում է երկիրը, սպիտակուցը՝ ջուրը, թաղանթը՝ օդը, իսկ կճեպը՝ երկինքը: Ձուն որպես կանոն ներկում են կարմրա-դեղնավուն վառ երանգներով: Եկեղեցին խրախուսում է ձվի կարմիր գույնով ներկումը՝ որպես Քրիստոսի թափված արյան հիշատակություն: Թեեւ, հմայագիտության մեջ չարի հետամուտ (սեւ հմայություն) է դիտվում երկնքի խորհրդանշական առարկաների (այս դեպքում՝ ձվի կճեպի) արնաներկումը: Իրականում ձվի ներկումը երկնքի ու երկրի երկունքի, շառագունման նմանակում է, եւ իր մեջ կրում է նաեւ Վահագնածնունդի խորհուրդը:
Զատիկի շարժականության հետ կապված ներմուծվել է տարվա «տարեգիր» հասկացողությունը (սա եւս հուշում է հնում Զատիկի տարեմուտ լինելը): Այն ցույց է տալիս, թե տվյալ տարում մարտի 21-ից քանի օր հետո է տոնվում Զատիկը: Տոնի 35-օրյա շարժականությամբ պայմանավորված՝ տարեգիրը ընդունում է 1-35 արժեքներ եւ մեզանում նշանակվում է հայոց այբուբենի Ա-Փ տառերով: Եթե տարեգիրը մեկ (Ա) է, ապա Զատիկը մարտի 22-ին է, իսկ եթե տարեգիրը 35 (Փ) է, ապա Զատիկը ապրիլի 25-ին է: որհրդավոր է Զատիկի շարժականության օրերի ու մաշտոցյան այբուբենի 36 տառերի քանակների մոտ հավասարությունը: Ընդ որում, այբուբենի վերջին՝ Ք տառը, որով տարեգիր չի նշանակվում, նշանավորում է Ք-Քրիստոսին (կարծվում է, որ այն խաչված Քրիստոսի պատկերագիրն է): Եվ, միգուցե, հավանական է տարվա ու տարեգրի տառերի խորհուրդների համապատասխանությունը: Օրինակ, 2004թ. տարեգիրը 31 (Տ) է, որին համապատասխանում է Տ-Տեր բառն ու «տերություն անելու» խորհուրդը1:

Ճրագալոյցեր. Աստվածահայտնության ու Զատիկի նախատոնակները կոչվում են Ճրագալոյց (Ճրագալույս): Այդ օրերին երեկոյան եկեղեցիներում վառվում են բոլոր լույսերը, ու մարդիկ մոմեր վառած եկեղեցի են այցելում: Ճրագալոյցը՝ լույսերով, վառվող մոմերով հանդերձ, խորհրդանշում է տիեզերական լույսը՝ աստղերը: Ըստ դիցաբանության՝ արեգակն ու աստղերը Ամենատես Միհրի բազում աչքերն են (օրինակ՝ «արէգակ»-ը կոչվում է «Արէգ-Միհրի աչք»):

***
Զատիկն ու նրան հաջորդող վեց կիրակիները կոչվում են զատկական: Դրանք են՝ Կրկնազատիկը, Կանաչ ու Կարմիր կիրակիները, Երեւման խաչը, Հարության կիրակին եւ Երկրորդ Ծաղկազարդը:

Ի Կրկնազատիկ. Կրկնազատիկը կամ Նոր կիրակին համարվում է ոչ հրեաների քրիստոնեություն ընդունելուն նվիրված տոն: Հնարավոր է, որ սկզբնական շրջանում (մինչեւ Նիկիայի 325թ. եկեղեցական ժողովը, երբ որոշվեց Զատիկը տոնելու համընդհանուր կարգը) ոչ հրեաները, ի տարբերություն հրեաների, Քրիստոսի հարությունը տոնում էին Կրկնազատիկին: Սրանում Հայ եկեղեցին տեսնում է նաեւ Հին կտակարանի վրա Նոր կտակարանի հաստատման խորհուրդը: Կարծիք կա, թե ժամանակին հայոց եկեղեցական տարին սկսվել է Նոր կիրակիով, որի համար էլ այն կոչվել է «նոր»:

Ի Կանաչ Ու Կարմիր Կիրակիներ. Անվանումներից երեւում է, որ այս կիրակիները առնչվում են բնության զարթոնքի փուլերի ու գերիշխող գույների հետ: Կանաչ կիրակին կոչվում է նաեւ Աշխարհամատրան կիրակի: Եկեղեցական ավանդությամբ՝ այն վերաբերում է վերնատանը, ուր Հիսուսը Հաղորդության խորհուրդը հաստատեց, եւ ուր նրա մահից հետո հավաքվում էին առաքյալներն ու առաջին քրիստոնյաները, որի համար էլ այն կոչվեց «աշխարհի առաջին մատուռ»՝ Աշխարհամատուռ: Սակայն մատուռը որեւէ նահատակի շիրիմին կամ նրա հիշատակին կառուցված փոքր եկեղեցի է: Ուստի, վերնատունը, որը նախատեսված էր հաղորդության ծեսերի համար, չէր կարող մատուռ կոչվել:
Եվ Աշխարհամատրան անվան «մատրան» արմատը հիշեցնում է թե Հռոի ամսվա մեկ այլ՝ Մատրան անունը, եւ թե «մարտ»-ը (նաեւ Մարտ ամսանունը), իսկ «Աշխարհամատրան»-ն էլ հիշեցնում է «աշխարհամարտ»-ը՝ աշխարհով մեկ չարի դեմ մարտը: Ավանդությունը ասում է, թե Հռոի ամսանունը ծագում է Հայկի որդի Խոռի անունից, որից սերված Խոռխոռունիների նախարարական տան ընտիր զորականներից էր կազմվում հայոց թագավորական թիկնազորը: Իսկ Մարտ ամսանունը ծագում է Մարս դիցանունից, որը հռոմեական դիցարանի պատերազմի ահեղ դիցն էր: Ընդ որում, գտնում ենք, որ ճիշտը, թերեւս, Աշխարհամատրան կիրակին Կարմիր կամ էլ Կարմիր կիրակին Աշխարհամատրան կոչելն է, քանի որ տոնի քրիստոնեական մեկնությունը՝ կապված Հաղորդության ծեսի հետ (կարմիր գինու ու Քրիստոսի արյան նմանեցում), եւ կարծեցյալ թաքնախորհուրդը (աշխարհամարտ) առնչվում են կարմիր գույնի հետ: Կիրակիների անունները հուշում են նաեւ անցյալում սրանց այլ նշանակության մասին: Մեզանում «կանաչ-կարմիր» է կոչվում ծիածանը՝ Աստծո գոտին: Իսկ գոտին խորհրդանշում է բեղունությունը: Մյուս կողմից, «կանաչ-կարմիր կապելը» նշանակում է ամուսնանալ. օրինակ, նորապսակները կանաչ-կարմիր ժապավեն են կրում, որում կարմիրը խորհրդանշում է առնականությունը, իսկ կանաչը՝ կանացիությունը: Այսինքն, հնարավոր է, որ այս օրերը ամուսնական ծիսօրեր էին. կանաչ կիրակին՝ պսակադրության օրը, իսկ կարմիրը՝ խնամականչի օրը (խնամականչը կոչվում է նաեւ «կարմրականչ»):

Ի Երկրորդ Ծաղկազարդ. Երկրորդ ծաղկազարդը զատկական վերջին կիրակին է՝ փաստորեն տոնվելով Ծաղկազարդից յոթ շաբաթ հետո: Այն նշանավորում է բնության երկրորդ ծաղկունքը՝ ծաղիկների աճումը: Տոնը հիմնականում նշվում է մայիսին: Իսկ Զուղայեցու օրացույցով ապրիլի 20-ից մայիսի 19-ը կոչվում է Ծաղկավետ ամիս: Տոնը հայտնի է նաեւ Մեծահրաշի կիրակի անվամբ, կարծես թե, սրանում պահպանելով տիեզերական ինչ-որ «մեծ հրաշքի» մասին հիշողությունը:

Ի Ծաղկազարդ. Ծաղկազարդը տոնվում է Զատիկից մեկ շաբաթ առաջ: Եկեղեցական մեկնաբանությամբ այն նշանավորում է Քրիստոսի մուտքը Երուսաղեմ, երբ նրան դիմավորում էին արմավենու ոստերով: Տոնի բուն քրիստոնեական անվանումը «Փրկչի գալուստը Երուսաղեմ» է: Իրականում Ծաղկազարդի հիմքում բնության առաջին ծաղկունքը՝ ծառերի ծաղկումը նշանավորող բնապաշտական տոն է ընկած: Տոնի մյուս անվանումը Ծառզարդար է, որը նշանակում է «ծառով զարդարում» կամ «ծառի զարդարում»: Սովորություն է տոնին ուռենու կամ ձիթենու ոստերով զարդարել տունն ու բակը: Անցյալում սովորություն կար եկեղեցիներում ծառ զարդարել, նրա ճյուղերից պտուղներ կախել ու ճյուղերին մոմեր վառել, որը ծառերի պտղաբերությանը ուղղված հմայածես է ու հիշեցնում է մերօրյա Ամանորի տոնածառը զարդարելը: Թերեւս, «ծառզարդար»-ը նշանավորում է հենց ծառի բնական «ծաղկազարդը»: Ըստ մեզ, այս ծեսը հուշում է Ծառզարդարի

նշանադրության ծիսօր լինելը. սովորույթ կար, երբ նշանվող տղայի մայրը ծառի վրայի մոմերից մոմ վառելով, որին մատանի էր ագուցված, տալիս էր ընտրյալ աղջկա ձեռքը, որից հետո աղջիկը նշանված էր համարվում: Ընդ որում, Կանաչ կիրակին (պսակի կարծեցյալ ծիսօրը) Ծաղկազարդից երեք շաբաթ հետո է ընկած:

Հիամբարձում. Համբարձումը տոնվում է Զատիկից քառասուն օր հետո (ապրիլի 30-ից՝ հունիսի 3-ը)՝ Երկրորդ ծաղկազարդի նախընթաց հինգշաբթի: Տոնը հիշատակում է հարությունից քառասուն օր հետո Քրիստոսի երկինք համբարձվելը՝ ըստ ավետարանական ավանդության: Իրականում այն ծաղկունքի, հասունության ու սիրո տոն է: Տոնը հայտնի է նաեւ Ծաղկամոր տոն անվամբ, որը հուշում է Աստղիկի դիցատոն լինելը: Աստղիկին կոչում էին Վարդամատ, որը նշանակելով «վարդյա մատներ ունեցող» կամ Վարդամայր, որը հավասարազոր է «Ծաղկամոր»-ը: Տոնի օտարահունչ (պարսկերեն, թե՞ թուրքերեն) Զանգյուլում անվանումը բառացի նշանակում է «վարդամարմին» կամ «վարդահոգի»: Տոնի առանցքը կազմում է ջրով ու ծաղիկներով վիճակ գցելը, որը եկեղեցին մեկնում է յուրովի, իբր թե այն հիշեցնում է առաքյալների վիճակահանությունը Հուդայի տեղը զբաղեցնելու համար: Եթե հաշվի առնենք այն դիցապատումները, երբ ծաղկունքի դիցուհին տարվա մի մասը ամուսնու՝ անդրերկրի տիրակալի մոտ լինելով բուսականությունը թառամում է, իսկ տարվա մյուս մասը վերերկրում՝ ծնողների մոտ լինելով բուսականությունը ծաղկում է, ապա գտնում ենք, որ Ծաղկամոր տոնի դիցական գլխավոր թաքնախորհուրդը անդրերկրի տիրակալ Վահագնի մոտից Աստղիկի ամենամյա դարձն է երկնային հոր մոտ, այսինքն՝ Աստղիկի անդրերկրից երկինք համբառնումն է: Ընդ որում, համբարձման գաղափարը ավելի լայն է. օրինակ, հավատալիք կա, թե մահացածի հոգին համբարձվում է երկինք եւ քառասուն օր հետո հասնում է վերին երկնք՝ լուսահոգիների կացարան: Տոնի մյուս թաքնախորհուրդը երեւում է հետեւյալում: Հավատում են, թե Համբարձման գիշերը (չորեքշաբթի, լույս հինգշաբթի) ջրերը մի պահ կանգ են առնում ու լռում, սակայն դրան հակառակ՝ բնությունը լեզու է առնում, երկինքն ու երկիրը, աստղերը, սար ու քարը, ծառերն ու ծաղիկները իրար ընդառաջ են գնում ու ողջագուրվում, համբուրում մեկմեկու: Գտնում ենք, որ սրանում տիեզերական կենակցության, զգայական սիրո գերագույն խորհուրդն է ընկած: Ամեն տարի այս գիշերը քարանձավից ելնում է Փոքր Միհրը, երեւի թե, իր սիրեցյալի հետ զսպված տարփանքը բավարարելու նպատակով:

Հոգեգալուստ. Հոգեգալուստը նշվում է Զատիկից յոթ շաբաթ հետո (մայիսի 10-ից՝ հունիսի 13-ը): Տոնը հիշատակում է Քրիստոսի հարությունից հիսուն օր հետո Սուրբ Հոգու իջնելը առաքյալների վրա, ու նրանց տարբեր, անհասկանալի լեզուներով խոսալը՝ ըստ ավետարանական ավանդության: Հոգեգալուստի ավանդությունն ու մարդկության ընդհանուր նախալեզվի խառնակության կրոնա-պատմական ավանդազրույցը համախորհուրդ են: Բել (ժամանակի ամենասկիզբ դից) ինքնահռչակված Տիտանյան Նեբրովթը հիմնել էր բազմազգ կայսրություն ու նրանում սահմանել մեկ միասնական լեզու: Հետո հղացել էր Բաբելոնի աշտարակաշինության գաղափարը, որին մասնակցում էին բոլոր ազգերը: Սակայն հետեւում է աստվածների ցասումը եւ աստվածային հզոր հողմը կործանում է աշտարակը եւ մարդկանց յուրաքանչյուրին տալիս է մյուսներին անհասկանալի լեզուներ: Բիբլիական տարբերակով աստվածները իջնում են երկիր եւ խառնակում մարդկային միալեզուն: Իրականում Նեբրովթին սպանում է Հայկ նահապետը, որին հաջորդում է կայսրության մասնատումը, ազգերի անկախության վերականգնումն ու լեզուների զարթոնքը: Այսինքն, Սուրբ Հոգու իջնելը առաքյալների վրա եւ տարբեր լեզուներով նրանց խոսալը համահունչ է աստվածների երկիր իջնելուն ու միալեզուն խառնակելուն: Այլ կողմից, Նեբրովթը, որն ինքնակամ հռչակվել էր Բելի հայտնություն, կարող էր առաջնահերթ առաջացնել Բելի ցասումը, քանի որ աշտարակը կործանվեց նրա պատժող տարերքի՝ «աստվածային հողմի» միջոցով:
Այսպիսով, գտնում ենք, որ տոնի հիմքում Նեբրովթի համաշխարհային բռնատիրությունից ազգերի ազատագրումը հիշատակող անցյալի նշանավոր տոն է ընկած, որին նպատակային զուգակցվել է Սուրբ Հոգու գալստյան խորհրդաբանությամբ, քանի որ Բել-Հրոնոսը որոշակիորեն նույնանում է Սուրբ Հոգու հետ: Տոնի մեծ կարեւորության մասին է վկայում նաեւ այն Զատիկից յոթ շաբաթ՝ «յոթնիցս յոթ» օր հետո նշելը (յոթը քրիստոնեության երկրորդ սրբազան թիվն է): Այսքանով տոնը հայերիս համար ազգային նշանակություն է ստանում, քանի որ Նեբրովթին կործանող աստվածամարտիկը մեր նահապետն է: Ուշագրավ է, որ Նավասարդը՝ Բելի նետահարման օր, տոնվում է օգոստոսի 11-ին, որը ընկած է ամառնամուտից (հունիսի 22-ից) հիսուն օր հետո, ինչպես Հոգեգալուստը՝ Բելի կայսրության

կործանման կարծեցյալ օրը Զատիկից (գարնանամուտից) հիսուն օր հետո: Ի դեպ, ամառնամուտը խորհրդանշող անհավասարաթեւ թուր-խաչը նշանավորում է չարի դեմ սրբազան պատերազմը, իսկ գարնանամուտը խորհրդանշող հավասարաթեւ խաչը՝ աշխարհի ներդաշնակությունը, աստվածակարգը:

- * -

+Վարդավառ. Վարդավառը տոնվում է Զատկից տասնչորս շաբաթ հետո (հունիսի 28-ից՝ օգոստոսի 1-ը): Եկեղեցին այն նշում է որպես Քրիստոսի այլակերպության կամ պայծառակերպության տոն՝ ի հիշատակ Թաբոր լեռան վրա նրա աստվածային կերպարանափոխության, երբ նրա երեսը փայլեց ինչպես արեգակը ու հանդերձները լույսի պես սպիտակ դարձան: Եվ եթե Մկրտությունը Քրիստոսի աստվածավկայությունն է գետում, ապա Այլակերպությունը աստվածավկայությունն է լեռան վրա. երկու դեպքում էլ Աստծո ձայնը երկնքից վկայում է նրա սիրելի որդի լինելը: Իրականում Վարդավառը Աստղիկ դիցուհուն նվիրված ջրատոն էր: «Վարդավառ»-ը տարբեր, սակայն փոխլրացնող, ստուգաբանություններ ունի: Մի տարբերակով այն նշանակում է «ջրցանություն», որը տոնակատարման գլխավոր ծեսն է (ջրցանությունը անձրեւաբերությանն ուղղված հմայածես է): Մեկ այլ տարբերակով այն նշանակում է «հրավառ», որը համապատասխանում է տոնի ամառվա շոգին (հիմնականում Հրոտից ամսին) նշելուն, երբ արեգակը կիզակետում է, այրում ու չորացնում է բնությունը, գետերը սակավաջուր են դառնում ու կարիք կար Աստղիկից անձրեւ աղերսելու: Առավել ընդունելի է «վարդերի վառում» ուղղակի իմաստը, որ նշանավորում է Աստղիկին վարդեր ընծայելու վառման ծեսը: Ի դեպ, հայ եկեղեցական այրերը Քրիստոսին նմանեցնում են վարդի հետ, որը եթե մինչ այլակերպությունը որպես կոկոն վարդ էր, ապա այլակերպվելով՝ իբրեւ վարդ վառվեց: Հայ եկեղեցին տոնի ջրցանության ծեսի, աղավնի թռցնելու սովորույթի մեջ փորձում է տեսնել արձագանքներ համաշխարհային ջրհեղեղի ու Նոյան աղավնու մասին: Օրինակ, ավանդազրույցն ասում է, թե Նավասարդ ամիսը սկսվում է այն օրից, երբ Նոյը Մասիսի գագաթից իջնում է Նախիջեւան (առաջին կայանատեղը) ու պատվիրում որդիներին իրար վրա ջուր լցնել, որպեսզի ջրհեղեղի հիշատակը անմոռաց մնա: Ընդ որում, նախկինում Վարդավառը տոնելու օրը՝ օգոստոսի 6-ը, համապատասխանում է Ավելյաց ամսի 1-ին՝ Նավասարդի նախընթաց հինգերորդ օրը: Այս դեպքում եւս առկա է առնչությունը Աստղիկ դիցուհու հետ, քանի որ ըստ ավանդության նա Նոյի ջրհեղեղից հետո ծնված դուստրն է, որը մեզանում նմանեցվել է Դիցահորը, իսկ համաշխարհային ջրհեղեղը՝ աշխարհաստեղծմանը: Այսքանով, գտնում ենք, որ Վարդավառի բուն դիցաբանական թաքնախորհուրդը Աստղիկ դիցուհու ծնունդն է:

+Տապանակի Տոն. Այն նշվում է Վարդավառին նախորդող շաբաթ օրը: Տոնը հիշատակում է մովսեսական ուխտի հին տապանակը և նրա փոխարինումը նոր ուխտի խորհրդանշական տապանակով Քրիստոսի եկեղեցիով: Խորհրդավորն այն է, որ հին տապանակի տասնաբանյան Մովսեսը գրի առավ Սինա լեռան վրա, իսկ Քրիստոսը նոր ուխտի ինն երանիները, հին ուխտի լրացումները շարադրեց լեռան հայտնի քարոզում: Լեռի անունը հայտնի չէ եւ հնարավոր է, որ դա լիներ Թաբոր լեռը, ուր նոր ուխտը նրան ոգեշնչվեց պայծառակերպության (նույնը՝ մտքի «պայծառացմա՞ն»-հեղ.) ժամանակ: Վերոնշյալի առնչությամբ ուշագրավ է հետեւյալը: Բյուրակնի նշանավոր լեռներից մեկը կոչվում է Հավատամք (գտնվում է Կարնո դաշտի հյուսիսում): Ըստ ավանդազրույցի՝ Գրիգորի մեհենաքանդության ժամանակ լեռան վրա, ուր մեհյաններ կային, լուսեղեն մի խաչ է երեւացել, որը երեք օր ու գիշեր փայլել է արեգակի պես: Տեսնելով սա՝ շատ դիցապաշտ հայեր գոչել են. «հավատամք» (նույնը՝ հավատում ենք), որի համար էլ լեռը կոչվել է Հավատամք: Իրականում լեռան անունը առավել խորհրդավոր է, քան թվում է: Մանավանդ, որ մեզանում ավանդույթ էր դարձել նշանավոր դիցական վայրերը կապել բիբլիական կերպարների ու քրիստոնյա սրբերի հետ: Միգուցե սա այն լեռն է, ուր դիցական վաղ անցյալում հայերս Աստծուց ստացանք հայոց հավատքի պատվիրանները՝ Հայոց Հավատամքը:

- * -

+Աստվածածնի Վերափո Ումը. Վերափոխումը Աստվածածնի տոներից ամենահինն է եւ մեզ մոտ հայտնի է դեռ 4-րդ դարից. 303թ. կառուցված Էջմիածնի մայր տաճարը նվիրված էր Վերափոխման տոնին: Այն կոչվում է նաեւ Աստվածածնի հանգիստ կամ Աստվածածնի ննջում: Տոնը հիշատակում է Աստվածամոր վախճանը (նույնը՝ ննջումը կամ հանգիստը) եւ երկինք համբառնելը (նույնը՝ վերափոխվելը կամ «վերեւ տեղափոխվելը»): Սկզբնական շրջանում բոլոր եկեղեցիները այն տոնում

էին օգոստոսի 15-ին: Ներկայումս Հայ եկեղեցին Վերափոխումը տոնում է օգոստոսի 15-ի մերձակա (օգոստոսի 12-18-ը ընկած) կիրակի օրը: Տոնը հայտնի է նաեւ աղողորհնեք անվամբ, քանի որ այդ օրը խաղողի առաջին բերքի օրհնություն՝ խաղողորհնեք է կատարվում: Խաղողորհնեքը դիցական պտղատոնից ներմուծված ծես է, երբ տարվա առաջին հունձքը կամ բերքը ընծայվում էր մեհյաններին: Ավելին, տոնակատարման օրը մոտ է Նավասարդի 1-ին (օգոստոսի 11-ին), երբ նախաքրիստոնեական Հայքում նշվում էր Հյուրընկալ Վանատուրի՝ «ամենաբեր նոր պտուղների Ամանորի» դիցի տոնը: Դիցա-բնապաշտական տեսանկյունից բերքաքաղը նշանակում է բերքի մահացում եւ նրանում առկա դիցուհու ոգեմասնիկների հեռացում, որը համահունչ է Աստվածամոր վախճանի ու երկինք վերափոխման խորհրդաբանությանը:
Սովորաբար կարծիք կա, որ Խաղողորհնեքը նվիրված էր Անահիտ դիցուհուն: Իսկ խաղողը՝ մեր բնիկ միրգը, հայոց բեղմնավոր արեւի ու բերքառատ հողի, դիցաբանորեն Միհրի ու Անահիտի արարման արգասիք է: Նկատելի է «խաղող» ու «խաղաղ» բառերի նմանությունը (հմմտ. Միհրի խաղաղարարության հետ) եւ կարելի է ասել, որ «խաղող ուտողը խաղաղ ու խաղաղարար կլինի»:

***

Վերափոխումը գլխավորում է Աստվածածնի յոթ հիմնական տոների շարքը: Աստվածածին կամ Աստվածամայր կոչումը համարժեք է Դիցածին կամ Դիցամայր կոչմանը, որը ենթադրում է նրա տոներում Մարե դիցամոր պաշտամունքի ներմուծումը (տես. նաեւ Մարիամ եւ Մարե անունների նմանությունը):

+ Աստվածածնի Մոր՝ Աննայի Հղիությունը. Տոնը հիշատակում է ավանդությունից հայտնի Մարիամի մոր՝ Աննայի հղիությունը: Հայ եկեղեցին Աննայի հղիությունը, ինչպես Մարիամինը, համարում է «անարատ»՝ առանց սեռական մերձեցման, որը համարժեք է դիցերից դյուցազնածին մայրերի հղիության (ըստ մեզ՝ ոգեկրման) դիցաբանական դրույթին: Խորհրդավոր է Աննա անունը, որը բաղկացած է «ան» եւ «նա» հակառակ ընթերցվող մասերից, որում «Ան»-ը Դիցահոր անուններից է2: Այսպես, Անի ամրոցը Արամազդի գլխավոր մեհենատեղին էր, «Եան-յան» է հայոց (հնում միայն նշանավոր տոհմերի) ազգանունների վերջնամասը, որը ցուցանում է կրողի հայրական պատկանելիությունը: Անու էր կոչվում շումերական դիցաբանության դիցահայրը: Չինական Դաո կրոնա-իմաստասիրությունում Յան է անվանվում արական նախասկիզբը: Կամ «Մանի»-ն Դիցամոր անվանումներից է, ընդ որում, հայերենում բառասկզբի «մ»-ն իմաստաշրջում է բառը. օրինակ՝ հայր (այր)-մայր, այրել-մարել, հառնել-մեռնել: Տոնը նշվում է դեկտեմբերի 9-ին, որը համապատասխանում է Քաղոց ամսի 1-ին: Քաղոց ամիսը ըստ ոմանց մեկնաբանվում է որպես անասունների (գուցե, նաեւ մարդկա՞նց-հեղ.) զուգավորության ամիս: Այսինքն, գտնում ենք, որ այս տոնը եւս կրում է դիցաբանական թաքնախորհուրդ, որն է՝ Դիցահոր Դիցամորով ինքնահղիացումը կամ այլ դիցընկալումով՝ Դիցահոր մոտ Դիցամոր արարման գաղափարի հղացումը:

+Աստվածածնի Ծնունդը. Տոնը հիշատակում է Մարիամի ծնունդը: Այն տոնվում է սեպտեմբերի 8-ին՝ Աննայի հղիությունից ինն ամիս հետո: Անշեղ օրացույցի (Արէգի 1-ը գարնանամուտին համընկնելու) դեպքում Քաղոց ամիսը, որի առաջին օրը Դիցահոր կարծեցյալ ինքնահղիացման ծիսօրն է, զուգորդվում է Այծեղջյուր աստղատանը: Այս դեպքում Դիցամոր կարծեցյալ ծնունդի ծիսօրը կհամընկնի Կշեռք աստղատան սկզբին, որը նշանավորում է Միհրի էջքը անդրաշխարհ՝ Դիցամոր տիրույթ: Կշեռքը երբեմն պատկերվում է կշեռք կրող կնոջ տեսքով, որով, ըստ մեզ, ներկայացվում է Դիցամոր դատը անդրաշխարհ ընկած մեղավոր հոգիների նկատմամբ:

+Աստվածածնի Ընծայումը Տաճարին. Տոնը հիշատակում է երեք տարեկան Մարիամի ընծայումը տաճարին: Այն տոնվում է նոյեմբերի 21-ին, որը մոտ է Դիցահոր խորհրդանշական Աղեղնավոր աստղատան սկզբին (նոյեմբերի 23-ին): Կարելի է ասել Աստվածածնի ընծայումը տաճարին համահունչ է Դիցամոր տրմանը Դիցահորը:

+Ավետումն Սուրբ Կույսի. Տոնը հիշատակում է Գա- բրիել հրեշտակապետի ավետումը կույս Մարիամին Սուրբ Հոգուց հղիանալու մասին: Այն նշվում է ապրիլի 7-ին՝ Ծնունդից ինն ամիս առաջ,

որը նահանջ տարիներին համընկնում է Ահեկան ամսի 1-ին: Գարնանային զարթոնքի այս ամիսը նվիրված էր Ահուրներին՝ հրեղեն դիցէակներին (նույնը՝ Հուրիներին):

+Աստվածածնի Գոտու Գյուտը. Տոնի առնչությամբ ասվում է, թե Արկադիոս կայսեր օրոք (395-408թթ.) Երուսաղեմում գտնվել է Աստվածածնին պատկանած գոտի ու տարվել է Կ.Պոլիս: Հույները այն տոնում են օգոստոսի 30-ին: Տոնը հայոց տոնացույց է ներմուծվել Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի օրոք (18-րդ դար): Հայ եկեղեցին այն տոնում է Վերափոխմանը հաջորդող երկրորդ կիրակի: Նկատելի է տոնի դիցաբանական հենքը, քանի որ գոտին խորհրդանշում է բեղունությունը: Օրինակ, ծիածանը անվանվում է Արամազդի գոտի, որի յոթ գույները նշանավորում են նրա յոթ ուստր-դուստրերին:

+Աստվածածնի Տուփի Գյուտը. Տոնի առնչությամբ ասվում է, թե Լեւոն կայսեր օրոք (457-474թթ.) Գալիլիայում գտնվել է Աստվածածնի լաչակի տուփը ու տարվել է Կ.Պոլիս: Տոնը հայոց տոնացույց է ներմուծվել Սիմեոն Երեւանցու օրոք: Այն նշվում է Հոգեգալուստին հաջորդող հինգերորդ կիրակի: Այս դեպքում եւս նկատելի է տոնի դիցաբանական հենքը, քանի որ լաչակը խորհրդանշում է կանացի պարկեշտությունն ու ողջախոհությունը, որը բնորոշ է մեր բոլոր դիցուհիներին:

- * -

Հինգը եկեղեցական տոնացույցի գլխավոր տոների թվաքանակ լինելը խորհրդանշական է ու հիմնավորվում է մի քանի փոխկապակցված հանգամանքներով: Այսպես, հինգն են՝
- հայոց դիցարանի գլխավոր դիցայրերը՝ Արա, Միհր, Վահե, Տիր, Զարեհ (Բարշամ),
- բնության հիմնական տարրերը՝ եթեր, հուր, օդ, ջուր, հող,
- տիեզերական հրո դրսեւորումները՝ արեգակ, աստղեր, գիսավորներ, կայծակ, հրաբուխ,
- մարդու ձեռքերի ու ոտքերի մատները (օրինակ, ձեռքի մատները վերագրվում են դիցայրերին),
- մարդու ձեռքերը, ոտքերն ու գլուխը միասին, որոնցով կազմվող հնգաթեւ աստղ ներկայացնում է հիմնական տարրերի փոխակերպումների խորհրդակարգը,
- մարդու արտաքին զգայարանները՝ տեսողություն, լսողություն, համ, հոտ, շոշափելիք,
- Ավելյաց ամսի օրերը, որոնք կենդանաշրջանից դուրս են ու կոչվում են «արարչական» օրեր,
- Նոյի հիշատակված զավակները՝ Հապետ, Զրվան, Տիտան, Մանիտոն, Աստղիկ:

Հինգը գտնվում է 1-9 թվանշանների (1,2,3,4,5,6,7,8,9) կամ 0-10 թվերի (0,1,2,3,4,5,6,7,8,9,10) կենտրոնում: Հինգի կենտրոնական դիրքը երեւում է նաեւ ինն թվանշանների շեղանկյուն դասավորության (համապատասխանում է ութաթեւ աստղին) եւ տաս թվերի եռանկյուն դասավորության դեպքում:

Հինգը թիվն է ներկայացնում քառաթեւ խաչը՝ չորս թեւերով ու կենտրոնով: Ըստ էության X խաչն է ներկայացնում զառերի վրայի հինգի կետապատկերը: Յոթանասուներկու հնգօրյակ է պարունակում հայոց օրացուցային տարին՝ առանց ավելյաց օրերի (360=5x72): Իսկ 72-ը խորհրդավոր թիվ է. 72 տարին մեկ գարնանային գիշերահավասարի օրը մեկ աստիճանով տեղաշարժվում է խավարածրում, 72-ն են Քրիստոսի աշակերտները, հին ազգերը ու նրանց պահապան հրեշտակները:

Հայոց եկեղեցական տոնացույցի խրախճատոներ են բարեկենդանները, որոնք տասն են: Դրանք են Առաջավորաց, Բուն, Լուսավորչի, Վարդավառի, Վերափոխման, Սուրբ խաչի, Վարագա խաչի, Հիսնական շրջանի, Հակոբի, Ծնունդի բարեկենդանները: Բացի Ծննդյան բարեկենդանից, մյուսները նշվում են կիրակի օրերին, որոնց հաջորդում են շաբաթապահքերն ու պահոց շրջանները: Ծննդյան, Վարդավառի, Վերափոխման, Սուրբ խաչի, Վարագա խաչի բարեկենդանները նշվում են համապատասխան տոներից մեկ շաբաթ առաջ: Բարեկենդանները պահոց շրջանների մեջ չմտնող ճոխ ուտիքի վերջին օրերն են, երբ սննդի մեջ ու կենցաղում սահմանափակում չկա ու խրախուսվում են զվարճանքները: Սրանցով եկեղեցին, կարծես թե, փորձել է կարգավորել հասարակական կենցաղը՝ հանդիսությունները (ամուսնությունները, հավաքույթները) նախատեսելով այս օրերին:

Խբուն Բարեկենդան. Այն տոնվում է Զատիկից յոթ շաբաթ առաջ (փետրվարի 1-ից՝ մարտի 7-ը կամ 6-ը): Տոնը հայտնի է նաեւ Աբեղաթող անվամբ, որը նշանակում է «աբեղաների թողություն, արձակում վանական խիստ կյանքի կանոններից»: Եվ հիմնավորումն էլ իբր այն է, թե ինչպես Աստծուն ընդունելի եղավ Նոյի առաջին անգամ աբեղաթող լինելը (ջրհեղեղից հետո գինովնալը), այնպես էլ ընդունելի է

աբեղաների (վանականների) մեկ-երկու օրով զվարճանալը: Այն դեռ մոտ անցյալում շաբաթական տեւողությամբ համազգային ճոխ տոն էր, որն իր կերակուրների առատությամբ, ծեսերի շքեղությամբ գերազանցում էր Ամանորը: Հայ եկեղեցին Բուն Բարեկենդանն է դիտում եկեղեցական տարվա սկիզբը: Տոնը առնչվում է դիցական պաշտամունքին: Այսպես, «բարեկենդան»-ը նշանակում է «բարի կենդանություն», որը վերաբերում է «նիրհող ու զարթնող» դիցի խորհրդապաշտությանը: Այն մաղթանք է դիցին «բարի քուն ու զարթնում», ինչպես որեւէ մեկին ճանապարհելիս՝ մաղթում ենք «բարի վերադարձ»: Հայոց մոտ «նիրհող ու զարթնող» դիցը Դիցահայրն է3, որի նիրհը համարժեք է բիբլիական արարչության հանգստի օրվան ու վեդայական տիեզերաշրջանների Բրահմայի գիշերին: Բարեկենդանին հաջորդում է յոթշաբաթյա պահոց շրջանը մինչեւ Զատիկ: Այսինքն, դիցական պաշտամունքում Բուն բարեկենդանը նշանավորում էր Դիցահոր արարման տարեշրջանի ավարտը, որը վերսկսվում է Ամանոր-Զատիկին: Բարեկենդանների քանակը համապատասխանում է վերջին շրջանի դիցերի թվին: Ուստի հավանական է, որ մյուս բարեկենդաններն էլ են առնչվում դիցական պաշտամունքին: Դրանցից չորսը նախորդում են տաղավարաց տոներին եւ հնարավոր է, որ դրանք տաղավարաց տոների հիմքում ընկած դիցատոներն էին. եկեղեցին տաղավարաց տոները սահմանելով մեկ շաբաթ հետո, փորձել է մեղմել այդ օրերի դիցահաճո խրախճանքները եւ պատշաճացնել քրիստոնեության սակավակենցաղ բնույթին:

- * -

Եկեղեցական տոնացույցով տարվա համարյա կեսը պահեցողության օրեր են: Այն պահանջում է սննդական ու ֆիզիկական զսպվածություն, որը զուգակցվում է զղջումին ու ապաշխարհանքին: Պահքն ավելի շուտ հայտնի է «պաս» անվամբ, որը «սպաս» բառի սղված ձեւն է ու «սպասելու»՝ զսպվելու իմաստ ունի: Ըստ խստության աստիճանի՝ կա պահքի երեք տեսակ. Ծոմ, Պարզ պահք ու Նավակատիք:

Ծոմ. Ծոմը ամենախիստ պահքն է: Ծոմին թույլ է տր վում օրվա մեջ միայն մեկ անգամ (երեկոյան կողմ) ու միայն բանջարեղեն ուտել: Կա ծոմի երկու շրջաններ՝ Առաջավորաց ու Մեծ պահքերը: Սրանց շաբաթ, կիրակի օրերը ծոմ չեն:

Xմեծ Պահք. Մեծ պահքը հաջորդում է Բուն բարեկենդանին: Այն տեւում է քառասուն օր եւ ավարտվում է Ծաղկազարդի նախընթաց ուրբաթ: Հայտնի է նաեւ Քառասնորդաց անվամբ: Մեծ պահքը հիշատակում է Քրիստոսի քառասնօրյա փորձությունը անապատում: Այն երբեմն կոչվում է Աղուհաց կամ Աղցք, քանի որ աղն ու հացը ծոմի նվազագույն եւ ապաշխարանքը խորհրդանշող սնունդն է: Նախկինում ծոմին միայն աղ ու հաց էին ուտում կամ ծոմը լուծում (ավարտում) էին աղ ու հացով: Դիցական պաշտամունքում Մեծ պահքը նշանավորում էր Դիցահոր նիրհի՝ արարումներից զերծ «ձմեռային» տարեշրջանն ու Ժուկ-Հրոնոսի պաշտամունքը, որի իշխանության ներքո արարումները դադարում են ու բնությունը հանգստանում-«մեռնում» է (հմմտ. «ձմեռ»-ի հետ): Պահքի շրջանից հայտնի է Ախլոճ-Ակլատիզը, որը պատկերվում է սպիտակամորուս ծերունու տեսքով (հմմտ. Ձմեռ պապի հետ): Եվ Բուն բարեկենդանի հանդեսները հիշեցնում են հռոմեացիքի սատուրնալիական տոնները (Սատուրն=Հրոնոս): Բուն բարեկենդանի շաբաթվան նախորդող շաբաթ օրը նշվում է Սահակ Պարթեւի տոնը, որի դերակատարը՝ Մեծ պապ անվամբ, այցելում էր տներն ու «բարեկենդան» մաղթում:

Xառաջավորաց Պահք. Առաջավորաց պահքը շաբաթապահք է ու միայն մեր եկեղեցուն է հատուկ: Մյուս եկեղեցիները սա չունեն եւ ժամանակին շատերը դեմ են եղել: Կարծիք կա, թե այն «առաջավորաց» է կոչվում, քանի որ Մեծ պահքից առաջ է ընկած կամ հանդիսանում է հայոց առաջին ծոմը՝ հաստատված Գրիգորի կողմից: Պահքը հաջորդում է Առաջավորաց բարեկենդանին, որը տոնվում է Զատիկից տաս շաբաթ առաջ (հունվարի 11-ից՝ փետրվարի 15-ը): Նրա շաբաթ օրը նշվում է Սուրբ Սարգսի տոնը, որի համար այն կոչվում է նաեւ Սուրբ Սարգսի պահք: Առաջավորացի դեմ չարախոսողները ասում էին, թե այն անվանակոչվել է Սուրբ Սարգսի ավետաբերի անունով, որը շրջելով երկրով մեկ՝ ավետում էր սրբի գալստյան մասին: Շրջագայության ժամանակ Առաջավորացը մեռնում է, եւ Սարգիսն ի հիշատակ ծոմ է սահմանում: Ասվածից նկատելի է, որ Առաջավորաց կոչվածը սրբի նախակերպար դիցն է:

Պարզ պահք. Սրա ժամանակ եւս թույլ է տրվում օրվա մեջ միայն մեկ անգամ (երեկոյան կողմ) ուտել: Սակայն բանջարեղենից զատ կարելի է ճաշակել բուսական հյութեղեն (ձեթ, գինի), բացառությամբ

նաեւ մեղր, որը կենդանական կիթ է նկատվում: Արգելվում են կթեղենը (հավկիթը), կաթնեղենը, ձկնեղենն ու մսեղենը: Պարզ պահք են օրապահքերն ու շաբաթապահքերը:
Նավակատիք. Սա ամենամեղմ պահքն է, որին միայն մսեղենն է արգելվում: Նավակատիք են նախատոնակները՝ տոների նախօրեակները (հիմնականում շաբաթ օր են): Նավակատիքի սննդական մեղմացումը պայմանավորված է նրան հաջորդող տոնի հանգամանքով: Ըստ տեղողության պահքերը լինում են օրապահք ու շաբաթապահք:
Օրապահք. Օրապահք են չորեքշաբթին եւ ուրբաթը: Չորեքշաբթին հիշատակում է Քրիստոսի մատնությունը, իսկ ուրբաթը՝ խաչելիությունը (ուրբաթը նաեւ մեռելոց է): Հնում հրեաների մոտ պահք էին հինգշաբթին ու երկուշաբթին՝ որպես Մովսեսի Սինա լեռը բարձրանալու ու լեռից իջնելու օրեր: Ուրբաթի հետ կապված հայտնի է հետեւյալը: Ուրբաթ է մարդու (այր ու էգի) արարման օրը՝ բիբլիական արարչության օրերում: Ուրբաթագիրք է կոչվել հին հայոց հմայական գիրքը, իսկ հետեւողները՝ ուրբաթատեսք կամ ուրբաթալեզք: Ուրբաթարոր է կոչվել չար զորությունից պաշտպանող հուռութը, որն անխոս պատրաստում էին դարբինները Ավագ (Զատիկի նախընթաց) ուրբաթ լուսածագին ու կարում երեխաների շորին: Ուրբաթ օրերը քարայրներում (ուրբաթայրերում) պատարագ է մատուցվել ու պատվիրվել է լինել քչախոս, չտրվել վայելքների (տես. նաեւ ուրբաթախոս՝ քչախոս, ուրբաթադեմ՝ տխրադեմ արտահայտությունները):
Այլ մեկնաբանությամբ ուրբաթ եւ չորեքշաբթի պաս պահելու, մոմավառության ու խնկարկության նպատակը ուրբաթամուտի եւ չորեքմուտի վնասատու ոգիներից (իմա՝ դիցէակներից) պաշտպանվելն է: Սակայն դիցաբանական համակարգում այս օրերի տիրական լուսատուները՝ Լուսնթագն ու Արուսյակը, բարետու եւ օրերն էլ բարի են դիտվել: Այսինքն, այս դեպքում առկա է հակասությունը դիցաբանական ու քրիստոնեական համակարգերի միջեւ: Միգուցե, ուրբաթ եւ չորեքշաբթի պաս սահմանելով՝ եկեղեցին չեզոքացրել է այս օրերի վայելքներն ու զվարճությունները:
Շաբաթապահք. Շաբաթապահքի միայն առաջին հինգ օրերն են պաս. շաբաթ օրը նավակատիք է, իսկ կիրակին պահքից զերծ է: Կա տասներկու շաբաթապահք: Յուրաքանչյուր ամիս ունի մեկ շաբաթապահք: Նույն ամսվա մեջ երկու շաբաթապահք ընդունելի չէ: Զուգադիպելու դեպքում պահվում է դրանցից մեկը: Գործնականում առարկայական են միայն տաս շաբաթապահքը, քանի որ դրանցից մեկն Մեծ պահքի մեջ է, իսկ երկրորդը համընկնում է Ավագ շաբաթին (Զատկաշաբաթին): Շաբաթապահքերից հինգը նախորդում են տաղավարաց տոներին, իսկ չորսը վերագրվում են տարվա եղանակներին: Շաբաթապահքերից ինը հաջորդում են բարեկենդաններին: Դրանց կարգը հետեւյալն է. հունվարին պահվում է Ծննդյանը, փետրվարին՝ Առաջավորացը, մարտին՝ Մեծ պահքի երկրորդ շաբաթը (գարնանայինն է), ապրիլին՝ Զատկաշաբաթը, մայիսին՝ Եղիայինը (հաջորդում է Հոգեգալուստին), հունիսին՝ Լուսավորչինը (ամառայինն է), հուլիսին՝ Վարդավառինը, օգոստոսին՝ Վերափոխմանը, սեպտեմբերին՝ աչվերացինը, հոկտեմբերին՝ Վարագա խաչինը (աշնանայինն է), նոյեմբերին՝ Բուն հիսնական շրջանինը, դեկտեմբերին՝ Հակոբինը (ձմեռայինն է):
Այն, որ շաբաթապահքերը առնչվում էին դիցական պաշտամունքին, հուշում է Լուսավորչի պասի հետ կապված ավանդազրույցը: Սա, որը հայտնի է Պառավի պաս անվամբ, լինում է ամառվա շոգին, երբ ռանչպարները զբաղված են հունձով (Ռուսինյանի օրացույցում հունիսը կոչվում է Հնձար՝ հունձի ամիս): Ժամանակին մի պառավ ամառը պաս է պահել, որպեսզի աստված հով անի, եւ որդին կարողանա հեշտ հունձ անել: Իսկ «պառավ»-ը քրիստոնեական ժամանակներում Դիցամոր հեգնական անունն է:

Այսպիսով, գտնում ենք, որ դիցապաշտությունում շաբաթապահքերը խրախճալի դիցատոներին հաջորդող, պահեցողությամբ ու ապաշխարհանքով դիցերին ուղղված աղերսներ էին, որպեսզի, օրինակ, դեկտեմբերը ձյունառատ լինի (Ռուսինյանի մոտ դեկտեմբերը կոչվում է Ձյուներ՝ ձնաբեր), հունվարին սառնամանիքները մեղմանան (հունվար= Սառներ), փետրվարին փոթորիկներ չլինեն (փետրվար=Մրրկեր), մարտը խռովահույզ չլինի, ապրիլը ծաղկավետ լինի (ապրիլ=Ծաղկին), մայիսին մարգերն կանաչեն (մայիս= Մարգին), հունիսին հով անի, հուլիսը անձրեւաբերի (հուլիսին Վարդավառի պահքն է), օգոստոսը մրգատու (օգոստոս= Մրգար), սեպտեմբերը բերքառատ լինի (սեպտեմբեր=Կթոն), հոկտեմբերին բուսականությունը չփչանա (հոկտեմբեր= Թառմոն), նոյեմբերը մառախլապատ չլինի (նոյեմբեր=Միգոն): Պահեցողության առողջապահական նկատառումները եւս ոչ պակաս կարեւոր են: Եվ պահքերի ու բարեկենդանների դասավորությունը կարող է նախատիպ լինել նմանատիպ աշխարհիկ համակարգերի մշակման համար:

- * -
Հայոց եկեղեցական տոնացույցի դիցահարույց տոնե- րից են Սուրբ Սարգսի ու Գեւորգի տոները:

Խուրբ Սարգսի Տոն. Սարգիսը հայոց ամենասիրված սուրբն է: Տոնը նշվում է Առաջավորաց պասի շաբաթ օրը (հունվարի 17-ից՝ փետրվարի 21-ը): Ըստ ավանդության Սարգիսը հույն զորավար էր, որը Հայքին սահմանակից Կապադովկիայում քրիստոնեություն էր տարածում: Հուլիանոս Ուրացողի օրոք (360-363թթ.) նա իր որդի Մարտիրոսի հետ ապաստանում է Հայքում՝ Տիրանի մոտ: Երբ Հուլիանոսը շարժվում է Պարսկաստանի վրա, Սարգիսը ծառայության է մտնում Շապուհի մոտ ու քաջությամբ աչքի է ընկնում նրա դեմ կռվում: Սակայն Շապուհը տեղեկանալով, որ նա քրիստոնյա է ու հավատափոխել է շատերին, պահանջում է նրանից երկրպագել կրակն ու զոհ մատուցել: Եվ մերժում ստանալով՝ նահատակում է որդուն, ապա գլխատում Սարգսին4:
Ըստ մեկ այլ ավանդության Սարգիսը Տրդատի զորավարներից էր, որը քառասուն զորականների հետ օգնության է հասնում Հռոմի կայսերը ու պարտության մատնում բարբարոսների բանակը: Սակայն կայսրը մտավախելով, թե սրանք կարող են կործանել իրեն, խնջույք է կազմակերպում ու դավադրաբար կոտորում բոլորին, բացի Սարգսից, որն ազատվում է մի հռոմեացի կնոջ շնորհիվ: Սարգիսը, ընկերների վրեժը լուծելու համար, հարձակվում է Հռոմի վրա ու մեծ կոտորած անում: Սակայն իբր զղջալով՝ իր անվամբ քառասուն եկեղեցի է կառուցում եւ սահմանում եռօրյա ծոմ՝ ի հիշատակ քաջ զորականների: Վերոհիշյալից անկախ՝ Սարգսի շուրջ պատկերացումներից պարզ է նրա դիցական նախակերպը՝ հողմային դից լինելը: Նա սպիտակ ձիավոր է, նրա ձիու ռունգներից ամպեր են ցայտում ու ձնաբերում, Սարգսի նիզակ խաղացնելուց սաստիկ բուք է բարձրանում: Նա բքախեղդ է անում բոլոր նրանց, ովքեր որպես սրբի իրեն չեն ընդունում: Տոնին շատերը պոկում էին իրենց մազերը եւ աղոթելով հանձնում քամուն՝ հավատալով, թե սուրբը մազերի հետ կտանի նաեւ իրենց ցավերը: Նրա պատվին փոխինդ են սարքում ու դնում դրսում, որպեսզի սուրբը նրա վրա դրոշմի ձիու սմբակը (ալյուրը հողմային դիցերի ընծան է): Նա ջահելների հովանավորն է: Նրա բարեհաճությանը արժանանալու համար ջահելները, հատկապես աղջիկները, շատակեր չպետք է լինեն, որպեսզի սուրբը նրանց հարսանիքին բուք չանի: Սարգիսը գայլերի տիրակալ է, գելկապի աղոթքներում, որպես խափանիչ, նշվում է նրա անունը (գայլը հողմային դիցերի կենդանին է): Նրա որդու Մարտիրոս անունը հիշեցնում է հնդկական դիցաբանության օդեղեն դիցէակների «մարութ» անուն: Հայտնի է եւ Մարութա լեռը Սասունում (սրանց օթեւա՞նը):
Այսպիսով, սրբի կերպարում ծպտված է հայոց դիցարանի ձմռան փոթորկաբեր դիցը՝ Զոպաբեր-Զարեհը, նույն ծերունի Ժուկը: Սարգիսը եկեղեցական պատկերագրությունում ներկայանում է որպես սպիտակամորուս ծերունի: Սրբի քառասուն զորականները հիշեցնում են Մեծ պահքի քառասուն օրերը: Եվ խորհրդանշական է, որ երկու ծոմերն էլ կրում են Զարեհ-Ժուկի խորհրդապաշտության հետքերը, որը հավատավորներից պահանջում է չափավորություն ու զսպվածություն վայելքներում: Արդեն ասվել է, որ Սարգսի նախակերպար դիցին կոչում էին Առաջավորաց: Այն վերագրելի է ժամանակի դիցերին, որոնք ժամանակից (իմա՝ արարումից) առաջ էին: Մյուս կողմից, այլ ազգերի մոտ Դիցահոր համարժեք դիցերը դիտվել են ժամանակի դիցերի որդիները: Քաղդեացիների մոտ Բելը Արամազդի, պարսիկների մոտ Զրվանը Որմիզդի, հույների մոտ Հրոնոսը Զեւսի հայրն էր: Սակայն սա ընդհանուր կանոն չէր ու բնորոշ չէր մեր դիցաբանությանը: Շումերների մոտ հողմերի տիրակալ Էնլիլը դիցահայր Անույի որդին էր: Հույների մոտ Հրոնոսը Ուրանի ու Գեայի որդին էր, որոնք հայտնի են որպես դիցահայր ու դիցամայր: Մեզանում Նոյը նմանեցվել է Դիցահորը, իսկ նրա ավագ որդի Զրվանը՝ ժամանակի դիցերին: Այսինքն, Զարեհ-Ժուկի «առաջավորաց» կոչումը ներկայացնում է Դիցահոր առաջին որդի լինելն ու առաջավոր կոչումը՝ դիցական կնքահայրությունը:

Խուրբ Գեվորգի Տոն. Այն նշվում է Վարագա խաչի տոնի նախընթաց շաբաթ օրը (սեպտեմբերի 24-ից՝ սեպտեմբերի 30-ը). գտնվում է Վարագա խաչի շաբաթապահքում: Գեւորգը հարգված սուրբ է շատ ազգերի մոտ ու որոշ երկրների (օրինակ՝ Անգլիա, Վրաստան) հովանավորն է համարվում: Ըստ ավանդության Գեւորգը Դիոկղետիանոս կայսեր (284-305թթ.) ժամանակակից զորավար էր՝ ծագումով Կապադովկիայից, որը քրիստոնեական հավատքից չի հրաժարվում ու գլխատվում է: Սակայն սրբի «վիշապասպան» կերպարը հիշեցնում է «վիշապաքաղ» Վահագնին. եկեղեցական պատկերագրությունում նա ներկայանում է որպես վիշապին սպանող երիտասարդ դյուցազուն: Եկեղեցին փորձել է սա հիմնավորել յուրովի՝ ավանդելով վիշապին սպանելու պատմություն, որը ակունքներով դիցապատում է: Իբր Մերձավոր Արեւելքի քաղաքներից մեկի մոտ հայտնվում է մի

վիշապ՝ չթողնելով, որ բնակիչները օգտվեն քաղաքի մոտի գետից, որի համար նրան պատանիներ ու աղջիկներ էին տրվում: Երբ հերթը հասնում է քաղաքի տիրակալի աղջկան, Գեւորգը ձիով պատահաբար անցնում է այդ տեղերով եւ իմանում եղելությունը: Նա աղոթելով ուժասպառ է անում վիշապին, որը ընկնում է նրա ոտքերի տակ (տիպիկ քրիստոնեական մոտեցում է «աղոթքով չարին հաղթելը»): Դրանից հետո աղջիկը վիշապին, ինչպես շանը, պարանը վիզը գցած բերում է քաղաք: Սա տեսնելով՝ քաղաքաբնակները լսում են սրբի քարոզներն ու մկրտվում ջրում, որից հետո Գեւորգը սպանում է վիշապին:
Գեւորգի վահագնակերպը նկատելի է այլ հանգամանքներում եւս: Նա «քրիստոնեասեր» զինվորականության հովանավոր սուրբն է: Սրբի գարնանային տոնը շատ ժողովուրդների մոտ նշվում է ապրիլի 23-ին: Այդ օրը առաջին անգամ անասուններն արձակվում են արոտավայր, մատաղվում է առաջին գառնուկը: Ներկայիս խավարածրում ապրիլի 23-ը ընկած է Վահագնից իշխվող Խոյ աստղատան առջեւում (սկիզբը ապրիլի 18-ին է): Ընդհանրապես Գեւորգը համարվում է մարդկանց եւ անասուններին գայլերից, գազաններից ու օձերից պաշտպանող սուրբ (տես. գայլ1խոյ հակադրությունը, օձ=վիշապ նույնացումը): Մեզ մոտ նրան են դիմում նաեւ թշնամիներից պաշտպանվելիս ու փորձանքի ժամանակ: Նա մարտնչող է, եւ ինչպես Մշո Կարապետ-Վահագնը, մասնակցում է ճակատամարտերին: Խաչակրաց արշավանքներից վերադառնալիս ասպետները պատմում էին, թե սուրբը մասնակցել է Երուսաղեմի առումին (1099թ.)՝ հայտնվելով կարմիր խաչ կրող սպիտակ թիկնոցով (սա Գեւորգի խաչն է): Գեւորգը վրացիների ամենահարգի սուրբն է:
Գեորգի=Գեւորգը նրանց հարգի անուններից է: Վրաստանը որոշ լեզուներում կոչվում է սրբի անունով. օրինակ, անգլերենում այն կոչվում է Ջեորջիա=Գեորգիա: Միգուցե, պատճառն այն է, որ Վրաստանում հարգի էր մեր Վահագնի պաշտամունքը. հայտնի է, որ Հայկազյան Տիգրանի որդի Վահագնը աստվածացվել էր ու Վրաստանում նրա հասակով արձան էր կանգնեցվել, որը պատվում էին զոհերով:
Գեւորգի տոնը Ջավախքում կոչվում էր Ծռատոն: Այդ օրը ոչ ոք գործ չէր անում: Հավատում էին, թե շատերը գործ են արել եւ ոտքերն ու ձեռքերը ծռվել են: Իսկ եթե ստիպված էին որեւէ անհետաձգելի բան անել, ապա պատժից խուսափելու համար, դրանից անմիջապես հետո մի քիչ գարի էին ցանում ու հավատում, թե ցանած գարին ծուռ է աճում՝ իր վրա կրելով սրբի պատիժը: Այսինքն, հնում Գեւորգի տոնին արգելված էր գործ անելը: Այս տեսանկյունից, նպատակահարմար տոնը Աշխատանքի ազգային տոն դարձնելու համար:
Տոնի նշումը աշնանային օրահավասարին (սեպտեմբերի 23-ին) հաջորդող մոտակա օրերին եւ Խաչվերացից երկու շաբաթ հետո եւս հուշում են Գեւորգի վահագնակերպը: Աշնանային օրահավասարից հուր-արեւը խորհրդանշականորեն անցնում է անդրաշխարհ՝ Վահագնի տիրույթ: Խաչվերացի ու Գեւորգի տոնի մերձավորությունը հիշեցնում է Դիցամայր-Վահագն էակցությունը. երկուսն էլ անդրերկրյա ու հրա-հողեղեն են: Ի դեպ, վերջին շրջանում նրանց մեհյանները իրար կողքի էին՝ Գիսանեի ու Դեմետրի մեհյանները Տարոնի Իննակնյան վայրում, Ոսկեմոր ու Վահագնի մեհյանները Աշտիշատում:

Խաչի Հրեշտակապետների Տոն. Տոնը նվիրված է Միքայել ու Գաբրիել հրեշտակապետներին եւ ամենայն երկնային զորություններին: Այն նշվում է Սուրբ աչին հաջորդող 7-րդ կամ 8-րդ շաբաթ օրը (հիմնականում նոյեմբերի 5-ից՝ նոյեմբերի 12-ը): Ուշագրավ է, որ տոնակատարման օրերը մոտ են Տրե ամսի 1-ին (նոյեմբերի 9-ին): Տրե ամիսը նվիրված էր Տիրին, որի համարժեքը Գաբրիել հրեշտակապետն է՝ որպես Աստծո պատգամախոս ու հոգեառ:

- * -

Որոշ կարեւոր տոների միջեւ ընկած ժամանակահատվածները կոչվում են Միջոցներ: Օրինակ, Բուն Բարեկենդանից Զատիկ, Զատիկից Հոգեգալուստ, Հոգեգալուստից Վարդավառ յոթ շաբաթ է, Վերափոխումից Սուրբ Խաչ չորս կամ հինգ շաբաթ է, Սուրբ Խաչից Հիսնական բարեկենդան ինն կամ տաս շաբաթ է: Տարին բաժանվում է շրջանների՝ Հայտնության, Զատկական ու Հիսնական: Հայտնության շրջանը տեւում է Ծնունդի բարեկենդա- նից՝ դեկտեմբերի 29-ից մինչեւ Առաջավորաց բարեկենդան: Սա ձմեռային շրջան է:

Զատկական շրջանը, որը կոչվում է նաեւ արքայական, տեւում է 24 շաբաթ: Այն բաժանվում է Նախազատկական եւ Հետզատկական շրջանների: Նախազատկական շրջանը (Առաջավորաց բարեկենդանից մինչեւ Զատիկ) տեւում է 10 շաբաթ, իսկ Հետզատկական կամ Հինանց շրջանը

(Զատիկից մինչեւ Վարդավառ)՝ 14 շաբաթ: Հոգեգալուստով ավարտվում է Հինանց առաջին յոթշաբաթյա շրջանը: Թեեւ «հինանց»-ի նշանակությունը պարզ չէ, սակայն այն հիշեցնում է «հին անցը»՝ հնի անցումը կամ Հին տարուց Նոր տարուն անցումը: Հինանցի առաջին շրջանը ուտիք է, սակայն հարսանիք չի թույլատրվում, որը որոշակիորեն հուշում է Հինանցի անցման շրջան լինելը, որի ժամանակ, բնականաբար, պետք է գործեր հարսանեկան արգելքը:

Հիսնական շրջանը բաժանվում է Նախահիսնական ու Բուն հիսնական շրջանների: Նախահիսնական շրջանը տեւում է Վարդավառից մինչեւ Հիսնական բարեկենդան (նոյեմբերի 15-21-ը), իսկ Բուն հիսնական շրջանը՝ Հիսնական Բարեկենդանից մինչեւ Հայտնության շրջան:
Եթե հաշվի առնենք, որը տարվա եղանակների սկիզբ են օրահավասարներն ու արեւադարձերը, իսկ Զատիկը ընդունենք անշարժ՝ գարնանամուտին, ապա Զատկական շրջանը ձմեռա-գարնանային, իսկ Հիսնական շրջանը ամառա-աշնանային են: Եվ այս շրջանները, անկախ տեւողությունից ու սկզբից, հիշեցնում են տարվա երեք եղանակները՝ ձմեռ-նագարուն, ամառնաաշուն, ձմեռ, որոնց համապատասխանում են մեզը, հրահողը, ջուրն ու եռաթեւ Y խաչը, որի ծայրերով կազմված եռանկյունին ներկայացնում է նախատարրերի փոխակերպումների մեզ»հրահող»ջուր»մեզ կարծեցյալ կարգը: Եվ հնարավոր է, որ Բուն Բարեկենդանը՝ ճոխությամբ չզիջելով Ամանորին եւ լինելով եկեղեցական տարվա սկիզբ, հնում եղել է տարվա ու ձմեռնագարնան սկիզբ: Սա տարբերվում է երեք եղանակների այլ հերթակարգից՝ ձմեռնագարուն, ամառ, աշնանաձմեռ, որոնց համապատասխանում են մեզը, հուրը, ջրահողն ու եռաթեւ շրջված պ խաչը, որի ծայրերով կազմված եռանկյունին ներկայացնում է նախատարրերի փոխակերպումների մեզ»հուր»ջրահող»մեզ կարծեցյալ կարգը: Երկու խորհրդակարգերն էլ ներկայացնում են տիեզերաստեղծման հնարավոր տեսարանները: Առաջինը ներկայացնում է տիեզերական անիմանալի մեզից «հրաշեկ» նյութի ստեղծումը, որից եւ հաջորդաբար համաշխարհային օվկիանոսի ու օդակամարի ծագումը: Երկրորդը ներկայացնում է տիեզերական մեզից տիեզերական հրո ստեղծումը, որից եւ հաջորդաբար «ջրահող» նյութի ու օդակամարի ծագումը (իհարկե, նման հարցում հեղինակավոր խոսքը գիտությանն է):

- * -
Քրիստոնեական հիմնական շարժական տոները նշվում են կիրակի, շաբաթ ու հինգշաբթի օրերին:

ա) Կիրակի են նշվում Տաղավարաց ու Խաչի տոները, Ծաղկազարդները, Հոգեգալուստը, բարեկենդանները, Աստվածածնի գոտու գյուտն ու տուփի գյուտը: Դիցաբանությունում կիրակին կոչվում է «Արեգակի օր» ու նվիրված է Միհրին (տես. «կիրակի» ու «կրակ» բառերի նմանությունը): Կիրակի է բիբլիական արարչության առաջին՝ լույսի ստեղծման (լույսը խավարից զատելու) օրը: Առաջնային տոները կիրակի օր նշելը, թերեւս, պայմանավորված է Քրիստոսի ու Միհրի խորհրդապաշտության հաշտեցմամբ:

բ) Հինգշաբթի են նշվում Համբարձումը, Վարդանանց, Սահակի Պարթեւի ու Մաշտոցի տոները: Դիցաբանությունում հինգշաբթին կոչվում է «Հրատի օր» եւ նվիրված է Վահագնին: Հինգշաբթի էր Քրիստոսի ու աշակերտների խորհրդավոր ընթրիքի օրը: Քրիստոնեական ժամերգությունում հինգշաբթին նվիրված է առաքյալներին: Ըստ էության առաքյալները քրիստոնեության առաջին զինվորներն էին եւ հավատացյալների կենդանի բազմությունը ավանդաբար կոչվում է մարտնչող կամ զինվորյալ եկեղեցի: Վարդանանց տոնը հինգշաբթի նշելը խորհրդանշական է, քանի որ եկեղեցին, հանձինս նրանց, միշտ փորձում է (թերեւս, ոչ այնքան բնորոշ) նշանավորել հայոց ռազմի ուժն ու քաջությունը: Սահակի ու Մեսրոպի տոնը հինգշաբթի նշելով, եկեղեցին, թերեւս, ցույց է տվել իր վերաբերմունքը նրանց նկատմամբ՝ որպես Ազգի ու Աստծո համար մարտնչած զինվորյալների, քան թե մշակույթի ու դպրության գործիչների5:

գ) Շաբաթ են նշվում Սուրբ Սարգսի, Գեւորգի, Հրեշտակապետների, Տապանակի տոները: Այս օրն են նշվում նաեւ քրիստոնեության եւ հայ առաջնային սրբերի հիշատակի տոները.
- Քրիստոսի տասներկու եւ յոթանասուներկու աշակերտների, չորս ավետարանիչների, առաջին երեք տիեզերաժողովների հայրապետների տոները,
- Աբգար ու Տրդատ թագավորների, Թադեոս ու Բարդուղիմեոս առաքյալների տոները, Գրիգորի հետ կապված տոները (Լուսավորչի վիրապ մտնելը, վիրապից ելնելը, նշխարների գյուտը, որդիների ու

թոռների հիշատակը),
- Սահակ Պարթեւի, Ներսես Մեծի, Թարգմանչաց տոները, ամենայն սրբերի տոնը:
Դիցաբանությունում շաբաթը կոչվում է «Երեւակի օր» եւ նվիրված է Զարեհ-Հրոնոսին, որն իշխում է տիեզերական «հանգստի» (արարումներից զերծ) ժամանակներում: Շաբաթ է Քրիստոսի գերեզմանում գտնվելու օրը, բիբլիական արարչության յոթերորդ՝ Աստծո (նաեւ՝ եբրայեցիների) հանգստի օրը: Ի դեպ, Երեւակը երկրից հեռու յոթերորդ լուսատուն է: Սրբերի հիշատակը շաբաթ օրը նշելը, թերեւս, խորհրդանշական է, քանի որ այս աշխարհից տեղափոխվելով, նրանք իրենց հանգիստն են գտնում Աստծո երկնային արքայությունում:

* * *
Հայոց եկեղեցական տոների դիցաբանական թաքնախորհուրդների վերծանումը կարեւորվում է նաեւ նրանով, որ հնարավորություն է տալիս մերօրյա հայ դիցապաշտներին դիցաճանաչողության տեսանկյունից գնահատել դրանք ու փորձել վերականգնել Հայոց դիցական տոնացույցը:

1 - Մերօրյա գերտերությունները (օրինակ՝ ԱՄՆ-ը) «տերություն անելը» հասկանում ու գործադրում են իրենց համար շահեկան ձեւով. աշխարհին ու մարդկությանը «տիրել»:
2 - Թող հակասական չթվա, որ Աննան իգանուն է, քանի որ շատ իգանուններ կազմվում են արական անուններից կամ սկզբում այդպիսին էին. Օրինակ, հայտնի է Անիան անունով Հայասայի թագավոր:
3 - Միհրի քարայրում «փակվելն ու դուս գալը» կամ «հեռանալն ու հայտնվելը» այլ խորհրդաբանություն է:
4 - Եթե Սարգիսը հույն լիներ եւ քրիստոնեահալած Հուլիանոս Ուրացողի դեմ մարտնչած, ապա ուղղափառ եկեղեցին չէր փնովի Առաջավորաց պասը, եւ Սարգիսն էլ այդքան սիրված չէր լինի մեր մոտ:
5 - Վարդանանց տոնը նշվում է Բուն բարեկենդանի նախընթաց հինգշաբթի, իսկ Սահակի ու Մեսրոպի տոնը Վարդավառին նախորդող երրորդ հինգշաբթի:

Ժամերգություններ. Հայ եկեղեցու ժամերգությունները ինն են՝ Գիշերային, Առավոտյան, Արեւագալի, Ճաշի երրորդ, վեցերորդ, իններորդ ժամերի, Երեկոյան, աղաղական, Հանգստյան: Գործնականում նշվում են միայն յոթը: Արեւագալինն ու Խաղաղականը արվում են սրբերի ու պահոց օրերին, չեն արվում Հինանց շրջանում ու տերունական օրերին: Ճաշի երեք ժամերինը առանձին նշվում էին վանքերում եւ սովորաբար արվում են մեկտեղ: Ժամերգությունները կատարվում են օրվա որոշակի ժամերին. Գիշերայինը՝ արշալույսից երեք ժամ առաջ, Առավոտյանը՝ արշալույսին, Արեւագալինը՝ արեւածագին, Ճաշի ժամերինը՝ արեւածագից երեք, վեց, ինն ժամ հետո, Երեկոյանը՝ մայրամուտից մոտ երկու ժամ առաջ, Խաղաղականը՝ մայրամուտին, Հանգստյանը՝ քնելուց անմիջապես առաջ: Դրանք նշանավորում են «երրորդության երրորդությունը», հրեշտակների ինն դասերը, եւ երեքական կարգով նվիրված են Սուրբ երրորդության դեմքերին: Հորն են նվիրված Գիշերայինը, Ճաշի վեցերորդ ժամինը եւ Հանգստյանը՝ որպես օրվա սկիզբ, միջօրէ ու վերջ: Որդուն են նվիրված Առավոտյանը, Ճաշի իններորդ ժամինը եւ Երեկոյանը՝ որպես Քրիստոսի հարության, հոգեվարքի ու թաղման պահեր: Սուրբ Հոգուն են նվիրված Արեւագալինը, Ճաշի երրորդ ժամինը եւ Խաղաղականը:

Քանի որ Ժամերգությունների ու հայոց գլխավոր դիցերի քանակները համընկնում են, եւ դրանց կատարման կամ կողմնորոշիչ ժամեր են արշալույսը, արեւածագը, մայրամուտը, որը համահունչ է հայոց տոմարում օրվա ժամերի որոշման կարգին, ուստի գտնում ենք, որ ժամերգությունները փոխառնվել են մեհենական պաշտամունքից, որում օրվա որոշակի ժամերին են կատարվել դիցերի ամենօրյա պաշտամունքը՝ դիցերգությունները:

Ստորեւ ներկայացնում ենք մեր որոշ պարզաբանումները վերոհիշյալի կապակցությամբ:
ա) Հայտնի է, որ Արամազդին սովորաբար պաշտամունք էր մատուցվում առավոտները: Գուցե, դա եղել է գիշերվա Առավոտ ժամին («Առավոտ»-ը նշանակում է Արայի ժամ), որը տարբերվում է մեր իմացած առավոտ-լուսաբացից: Առավոտ ժամն ընկած է արշալույսից (Այգ ժամից) երեք ժամ առաջ, երբ կատարվում է Գիշերային ժամերգությունը: Այսինքն, հավանական է, որ Գիշերայինը Արա=Արամազդի դիցերգության համարժեքն է: Ոմանք Առավոտ ժամը տեղադրում են Այգից անմիջապես առաջ: Այս դեպքում հավանական է, որ Առավոտյան ժամերգությունն է Արամազդի

դիցերգության համարժեքը: Իսկ Գիշերայինը Աստղիկի դիցերգության համարժեքն է, քանի որ Առավոտ ժամից երեք ժամ առաջ Լուսակն=Լուսնակ ժամն է (Աստղիկի գիշերային լոգանքի պա՞հը). Լուսնակը Աստղիկի խորհրդանշական լուսատուն է:

բ) Հայտնի է, որ արեգակնային դիցերի դիցերգությունը կատարվել է արեւածագին՝ Ծայգ ժամին: Ուստի, Արեւագալի ժամերգությունը, որը նշանավորում է Քրիստոսի երկրորդ գալուստը, Միհրի դիցերգության համարժեքն է:

գ) Ճաշի երրորդ ժամի ժամերգությունը առաջնահերթ նշանավորում է առաքյալների վրա Սուրբ Հոգու իջնելու եւ Քրիստոսի խաչելիության պահերը: Քանի որ Սուրբ Հոգին առնչվում է հողմային դիցերի հետ, ուստի հնարավոր է, որ այս ժամերգությունը Զարեհ-Հրոնոսի դիցերգության համարժեքն է:

դ) Քանի որ Վահագնից իշխվում է տարվա ամենաշոգ ամիսը՝ Հրոտիցը, ուստի գտնում ենք, որ Վահագնի դիցերգությունը համանման կերպով պետք է արվեր օրվա ամենատաք պահին՝ Հուրթափյալ ժամին: Ներկայիս ժամերի հետ համեմատական կարգով Հուրթափյալից մեկ ժամ առաջ՝ Հրակաթ ժամին է կատարվում Ճաշի վեցերորդ ժամի ժամերգությունը, որի խորհուրդներից մեկն էլ «դժոխքի իշխանի» գայթակղություններից պաշտպանվելն է: Իսկ քրիստոնեության «դժոխքի իշխանը» (հուդայականության Սատանան), հայոց Սանդարամետապետ=դժոխապետը հունա-հռոմեական դիցաբանության հանդերձյալ աշխարհի տիրակալ Հադես-Պլուտոնի եւ անդրաշխարհի հրեղեն իշխան Վահագնի մերժված կերպարն է: Այսինքն, այս ժամերգությունը Վահագնի դիցերգության համարժեքն է:

ե) Երեկոյան ժամերգությունը հիշատակում է Քրիստոսի թաղման՝ «հողին հանձնելու» պահը: Եվ քանի որ դիցական համակարգումը հող տարերքը իշխվում է բուսականության մայր դիցուհուց՝ Անահիտից, ուստի հավանական է, որ այս ժամերգությունը Անահիտի դիցերգության համարժեքն է:

զ) Հայոց դիցաբանությունում Դիցամայր-արեւամայրը առնչվում է խավարի, արեւմուտքի ու մայրամուտի հետ. օրինակ, «արեւամուտ=մայրամուտ»-ը նշանակում է «մոր մոտ Արեւի հանգրվանելը»: Եվ քանի որ Խաղաղական ժամերգությունը, որը նշանավորում է Քրիստոսի դժոխք իջնելն ու հոգիներին խաղաղեցնելը, կատարվում է մայրամուտին (Խավարակ ժամին), ուստի այն Սանդարամայր=դժոխամայր վերակոչվածԴիցամոր երկրպագության համարժեքն է: Միաժամանակ, ժամերգության անվանումը կրում է «խաղաղվելու»՝ առօրյա հոգսերից հանգստանալու խորհուրդը, ինչպես, ըստ ավանդազրույցի, Արեւը ցերեկվա շրջագայությունից հետո հանգիստն է գտնում մոր մոտ:

է) Հանգստյան ժամերգությունը արվում է քնելուց անմիջապես առաջ՝ որպես հանգիստ քնի աղերս: Իսկ քունը սովորաբար նմանեցվում է հանդերձյալ կյանքին: Նկատի առնելով, որ հայոց մոտ քունն ու երազները նախախնամում է Տիրը, որը նաեւ մարդկանց հոգեառն է, հետեւաբար այս ժամերգությունը Տիրի դիցերգության համարժեքն է:

Դժվար է Ճաշի իններորդ ժամի ժամերգության մեկնությունը: Թերեւս, այն կարող է լինել Նանեի դիցերգության համարժեքը, քանի որ ժամերգությունների շարքում միայն Նանեինը չգտնվեց:

Խորհրդավոր է Ժամերգությունների շեղանկյուն դասավորությունը (տես. ստորեւ):

Գիշերային
1.ՀԱՅՐ
Առավոտյան Արեւագալի 2.ՈՐԴԻ 3.ՀՈԳԻ
Ճաշի 3-րդ Ճաշի 6-րդ Ճաշի 9-րդ
4.ՀՈԳԻ 5.ՀԱՅՐ 6.ՈՐԴԻ
Երեկոյան Խաղաղական
7.ՈՐԴԻ 8.ՀՈԳԻ
Հանգստյան
9.ՀԱՅՐ

Ինչպես երեւում է՝ երկինք-երկիր առանցքը խորհրդանշող շեղանկյան ուղղահայաց անկյունագիծը

կազմում են Հոր ժամերգությունները, իսկ հորիզոնը խորհրդանշող հորիզոնական անկյունագիծը՝ Սուրբ երրորդության դեմքերի (Ճաշի ժամերի) ժամերգությունները: Հորիզոնական անկյունագծից վեր ու վար դասավորվածները եւս նվիրված են երրորդության դեմքերին եւ Որդու ժամերգությունները գտնվում են Հոր ժամերգությունների աջ կողմում (հմմտ. երկնային արքայությունում Քրիստոսի Հոր աջ կողմում բազմելու հետ): Միաժամանակ, ժամերգությունների դասավորությունը բացահայտում է «երրորդություն երրորդության» խորհրդավոր խաչը (տես. միացնող գծերը), որի նմանօրինակները առկա են եւ մեր ցասման խաչերում, եւ քրիստոնեական խաչերում:

Ժամերգությունների եւ ինն թվերի համադրությունից երեւում է, որ Հոր հետ առնչվում են մեկ, հինգ եւ ինն թվերը (սկիզբը, կենտրոնը եւ վերջը): Հինգի խորհուրդների մասին արդեն ասվել է:

Մեկը խորհրդանշում է եւ Աստծո միակությունը արարչությունից (իմա՝ ժամանակից) առաջ, եւ արական սկզբնաէություն լինելը: Մեկը որպես նշանագիր հիշեցնում է կուսական ֆալոսը, այն գլխավորում է կենտ թվերը, որոնք ինն թվերի շարքում հինգն են (նույնքան են եւ դիցայրերը) եւ երկուսի չեն բաժանվում (բաժանումը հավասարազոր է ծնելուն): «1»-ին նման է «!» հրամայական, հաստատող նշանը (հմմտ. Աստծո «ամենահաստատ» կոչման եւ անփոփոխելի, հաստատուն լինելիության հետ): Իսկ «մեկ»-ը հիշեցնում է «մեգ» -ը՝ տիեզերական առաջին նախատարրը:

Ինը խորհրդանշում է հայոց առաջնային դիցարանի ամբողջությունը՝ Դիցահորն ու Դիցամորը եւ յոթ ուստր-դուստր դիցերին (Արա, Մարե եւ Միհր, Վահե, Տիր, Զարեհ, Նանե, Անահիտ, Աստղիկ), եւ դրանից բխող որոշ համախմբությունները: Այսպես, ինն են՝
- բնական թվանշանները՝ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9,
- արեգակնային համակարգության մոլորակները՝ Մերկուրի, Վեներա, Երկիր, Մարս, Յուպիտեր, Սատուրն, Ուրան, Նեպտուն, Պլուտոն,
- Երկիրը եւ մեր հներին հայտնի երկնային մարմինները՝ Արեգակ, Լուսին, Մերկուրի, Վեներա, Մարս, Յուպիտեր, Սատուրն եւ Ուրան1,
- ութաթեւ աստղի թեւերը, հավերժանշանի գալարներն ու կենտրոնը միասին,
- բնության տարրերը՝ նյութը (հյուլեն), եթերը, հուրը, օդը, ջուրը, հողը, քարը, մետաղը, փայտը,
- կնոջ հղիության ամիսները,
- ձեռքի գծերը՝ կյանքի, խելքի, ամուսնության, սրտի, բախտի, ճակատագրի, առողջության, նախասիրության եւ ապարանջանների գծերը,
- հների հիշատակած արտաքին և ներքին զգայարանները՝ հասարակ զգայություն (իմա՝ ինտուիցիա), երեւակայություն, մտածողություն, հիշողություն և հինգ արտաքին զգայարանները,
- համերը՝ քաղցր, գեր, բարկ, փոթոթ (տտիպ), կծու, դառ, թթու, աղի, անհամը,
- ամառային եւ ձմեռային արեւադարձերին գիշերվա ու ցերեկվա ժամերը, որի խորհուրդը գիշերվա կամ ցերեկվա տեւողության ինն ժամից նվազ չլինելն է,
- արվեստի հիմնական տեսակները՝ երգարվեստ, պարարվեստ, երաժշտություն, թատերարվեստ, նկարչություն, քանդակագործություն, զարդարվեստ, բանահյուսություն, ճարտարախոսություն,
- հիմնական գիտությունները՝ իմաստասիրություն («գիտությունների գիտությունը»), մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, աստղագիտություն, կենսաբանություն, մարդաբանություն (անատոմիա), պատմագիտություն, լեզվաբանություն,
- Քրիստոսի պատվիրան-երանիները,
- հրեշտակապետերը՝
- բիբլիական տարբերակով՝ Գաբրիել, Միքայել, Ռափայել, Անայել, Ուրիել, Դակուել, Բարաքիել, Ադոնիել, Փանուել,
- այլ տարբերակով՝ Ռափայել (ամեն չարից պահապան), Հռաքիել (լեռների), Սուքայել (կրակի), Սարաքինել (ծնունդների), Մազանայել (մայրերի), Հովիել (քնի), Աթանայել (մանուկների), Մեղվոս (ջրերի), Կոետիոս (լուսատուների),
- քրիստոնեական աստվածաբանությունում հրեշտակների երեք դասերի համախումբը.
Ա) Աթոռք, Քերովբեներ, Սերովբեներ, Բ) Տերություններ, Զորություններ, Իշխանություններ, Գ) Պետություններ, Հրեշտակապետեր, Հրեշտակներ,

Հայ եկեղեցու հոգեւոր աստիճանները՝
- դռնապանություն, ընթերցողություն, երդմնեցուցչություն, ջահընկալություն, կիսասարկավագություն, սարկավագություն, քահանայություն, եպիսկոպոսություն, կաթողիկոսություն,
- դրոշմման մարմնատեղերը՝ ճակատը, աչքերը, ականջները, քիթը, բերանը, ձեռքերը, սիրտը, թիկնամեջը, ոտքերը:

Իննի հետ առնչվում այլ խորհրդավոր հանգամանքներ եւս:
ա) Մաշտոցյան այբուբենը բաղկացած է 36=4x9 տառից: Դրանք դասավորվում են ինն տառանի չորս սյունակով, որից ածանցված տառերի թվային նշանակություններն ընդունում են 1-9, 10-90, 100-900, 1000-9000 եւ սրանց բյուրապատիկ (10000-պատիկ) արժեքներ: Եվ տառերի առաջին թվային նշանակություններով կազմվող ամենամեծ թիվը 9999-ն է (ՔՋՂԹ):
բ) Ինն քառասնօրյակ է պարունակում տարին՝ 360=(9x40)+5 (ավելյաց օրեր):
գ) Ինն թվանշանից՝ 1-ից եւ ութ 0-ից է բաղկացած հարյուր միլիոնը՝ 100000000, որը կոչվում է «գունդ» կամ «բյուր բյուրաց» (ստացվում է բյուրը իրենով բազմապատկելիս): Իսկ «գունդ»-ին համահունչ է Արամազդի «կունդ»՝ գլխավոր, ճաղատ կոչումը: Ի դեպ, ներկայիս պատկերացումներով տիեզերքը գնդաձեւ է, եւ գալակտիկաները գտնվում են նրա մակերեւույթին:
դ) Իններորդ տեղում է Արամազդի խորհրդանշական Աղեղնավոր աստղատունը:
ե) Ինն հազար տարի տրվեց հորից՝ Զրվանից, Ահրիմանին տիեզերքում իշխելու համար (հավանաբար խոսքը դիցական որեւէ ժամանակահատվածի մասին է):
զ) 3600 տարի (չորս ինն հարյուրյակ) է պարունակում մեկ շարը՝ քաղդեացիների տիեզերաժամը: 432000 տարի (48=4 x12 ինն հազարյակ) է պարունակում Մեծ-աստվածային տարին (բաղկացած է 120 տիեզերաժամից):
է) Ինն թզաչափ է մարդու հասակը:

Իննի հետ են առնչվում Հայոց աշխարհի որոշ վայրերը.
1) Իննակնյան վայրը Տարոնում, Քարքե լեռան լանջին, որն այդպես է կոչվել ինն քաղցրաբուխ ակնաղբյուր ունենալու համար: Այստեղ էին Դեմետրի ու Գիսանեի մեհյանները:
2) Ինն սրբոց գերեզմանք (նաեւ՝ Սուրբ Նշան) կոչվող վանքը Թորդան գյուղում, ուր գտնվում էր Տրդատի, Գրիգորի ու նրբա սերունդների պանթեոնը: Այստեղ էր ժամանակին Բարշամինա դիցի մեհյանը:
3) Ինն գյուղը Դերսիմ գավառում, Աղսու ձորի մեջ: Գյուղում կային ինն եկեղեցիներ: Ձորամիջում, ժայռերի մեջ կային արհեստական քարայրներ, որոնցից մեկը կոչվում էր «Իշխանաց թախտ»: Այստեղ էր «Քառասուն մանուկ» ուխտատեղին, ուր, հայերից բացի, այցելում էին նաեւ քրդերը:
4) Ինն մասունք անապատը եւ նույնանուն վանքը Արցախում՝ Մարդակերտի Կասապետ եւ Մոխրաթաղ գյուղերի մոտ: Այստեղ էր Ջրաբերդի մելիքների տոհմական գերեզմանը:

***
Ըստ «Աշխարհացույց»-ի՝ հայոց երկրամասերից ինն գավառ ունեին Բարձր Հայքը, Գուգարքը, Պարսկահայքը, Մոկքը, որը, թերեւս, խորհրդավոր է Բարձր Հայքի պարագայում: Այսպես.

ա) Բարձր Հայքը մեր ամենաբարձր երկրամասն է: Հնարավոր, որ այն նաեւ Հին Աշխարհի ամենաբարձր երկրամասն էր, որի համար էլ կոչվել է «աշխարհի կատար»: Նմանապես, այստեղով ձգվող Բյուրակն լեռների ամենաբարձր գագաթը՝ Սերմանցը, խորհրդանշականորեն կոչվում էր «երկրի գագաթ»: Սերմանցի համար կարծվում է, որ այն Դիցահոր արարչական սերմնացանի լեռնագագաթ է:

բ) Բարձր Հայքից սկիզբ են առնում չորս գետեր եւ հոսում չորս ուղղություններով. Արեւմտյան Եփրատը՝ դեպի արեւմուտք, Արաքսը՝ դեպի արեւելք, Գայլը՝ դեպի հարավ, Վոհը (Ճորոխը)՝ դեպի հյուսիս:

գ) Այստեղ (Բյուրակն լեռներում) է Հավատամք լեռը, ուր, ըստ մեզ, հայերս ի վերուստ ստացանք Հայոց Հավատամքը: Բյուրակն լեռներում էին հայոց կտրիճները փնտրում հաղթության շնորհատու բրաբիոն հրաշագործ ծաղիկը:

դ) Ասվում է, թե Բյուրակն լեռներն այսպես են կոչվել բյուր քաղցրահամ աղբյուրներ՝ «բյուր ակներ» ունենալու համար, որոնցում կան եւ «անմահական» ջրեր բխեցնողներ: Բյուրը (10000-ը) իր հերթին խորհրդավոր է. այն Ա-ի երկրորդ թվային նշանակությունն ու երկրորդ «սկիզբն» է (տես. նաեւ Ա-Աստված համապատասխանությունը):

ե) Բարձր Հայքը վերջին շրջանի գլխավոր մեհենական կենտրոնն էր: Այստեղ էին հիմնականում կենտրոնացված գլխավոր մեհյանները. Դարանաղի գավառում Արամազդի ու Բարշամինայի, Եկեղյաց գավառում Անահիտի ու Նանեի, Դերջան գավառում Միհրի մեհյանները: Եվ, միգուցե, խորհրդավոր է հինգ մեհյանների գտնվելը երեք գավառներում, որը հիշեցնում է եռանկյունում պարփակված խաչը: Ընդ որում, տաս գլխավոր մեհյանները տեղաբաշխված էին Հայքի երեք երկրամասերում՝ Բարձր Հայքում, Տարոնում (Վահագնինը, Աստղիկինը եւ Ոսկեմայր=Դիցամորինը) եւ Այրարատում (Տիրինն ու Վանատուրինը), որը հիշեցնում է եռանկյունում պարփակված շրջանը. տասը խորհրդանշում է շրջանը, քանի որ 1և10 թվանցումն ու շրջապտույտը համարժեք են (տես. նաեւ 10= 1+0=1): Ընդ որում, բազում տվյալներ հիմք են տալիս պնդելու, որ Վանատուր-Մաժան քրմապետի պաշտամունքը Արամազդի տեղային պաշտամունքն էր: Այս դեպքում, Արամազդ-Վանատուր կապը եւս հիշեցնում է 1և10=1 անցումը:

Խորհուրդներ. Եկեղեցու խորհուրդները (նույնը՝ խորհրդածես-միստերիաները) յոթն են. Մկրտություն, Դրոշմում, Ապաշխարհություն, Ձեռնադրություն, Հաղորդություն, Պսակ, Օծում:

Մկրտություն. Մկրտության խորհուրդը մկրտվողի սկզբնական (ադամական) մեղքից մաքրվելն ու նվիրումն է եկեղեցուն: Այն արվում է ջրով՝ հեղմամբ, ընկղմամբ ու ցանմամբ: Հայ եւ Ուղղափառ եկեղեցիները մկրտում են ընկղմամբ ու հեղմամբ, կաթոլիկները՝ հեղմամբ, այն էլ միայն գլուխը: Մկրտությունը նազովրեական աղանդի նույն խորհրդածեսն է (Հովհ. Մկրտիչն ու Հիսուսը նազովրեցի էին) եւ տարբեր է Քրիստոսի կարծեցյալ մկրտությունից. Հովհ. Մկրտիչի վկայությամբ՝ ի տարբերություն իրեն, Քրիստոսը պետք է մկրտեր «Սուրբ Հոգով եւ կրակով» (հնարավոր է, որ Հիսուսի աշակերտները մկրտվել էին նման կարգով): Հայ եկեղեցին ընդունում է, իսկ Կաթոլիկ եկեղեցին մերժում է մանկամկրտությունը:

Կարծիք կա, որ դիցական պաշտամունքում մկրտությունը (իմա՝ նվիրումը Հավատքի Տաճարին-հեղ.) կատարվել է «հրով ու ջրով»: Դա կարող էր լինել մեհյաններում՝ հրատեղ-հորի (գուբի), տներում՝ թոնրի շուրջ կամ տաք ջրում, ինչպես նաեւ բնական ջրերում՝ «ջերմուկներում»: Սրա խորհուրդները երեւում են մի քանի պարագաներում:

ա) Հուրը փորձության ենթարկող, մաքրագործող ու արարող է: Էպոսում հրով է փորձվում մանուկ Դավիթը՝ արդյունքում դառնալով թլոր: Կաթոլիկների մոտ հրե վայր է դիտվում մեղավոր հոգիների քավության կայանատեղը՝ Քավարանը: Մեր մոտ հուրը օջախի, հոր, արու զավակի խորհրդանիշն է, ինչպես թոնիրը, «տան ծուխը» (օրինակ, որդու կորուստը այլաբանվում է որպես «տան ծուխը մարել» կամ տես. այր (տղամարդ, քարայր2)-հայր-այրել կապակցությունը): Դիցական աշխարհայեցողությամբ՝ հայերս հրածին ենք. մարմնով կերտվել ենք երկրի ընդերքի հրահեղուկից, ինչպես մեր հրային լեռները:

բ) Ջուրը մաքրագործող ու ծնող է: Այն բնությունը լիացնող է ու երբեմն այլաբանվում է որպես տղամարդու սերմ (տես. կաթնաղբյուրները): Ջուրը խորհրդանշում է գիտելիքը (տես. «գետ» եւ «գիտենալ» բառերը), եւ ինչպես գետն է հոսում ու չի ճահճանում, այնպես էլ գիտելիքը պետք է միշտ հոսի, որպեսզի չլճանա: Հայոց աշխարհը քաղցրահամ ու սառնորակ ջրերի ավազան է, որից են սկիզբ առնում տարածաշրջանի չորս խոշոր գետերը՝ Արաքսը, Քուռը, Եփրատը, Տիգրիսը:

գ) Հուրն ու ջուրը անհաշտ տարրեր են, սակայն Հայոց աշխարհում դրանք ներդաշնակ են՝ հանձինս հրաբխային լեռների ու լեռնածին ջրերի: Ի դեպ, մեր երկրի օտարների կոչած Նաիրի անվանումը ստուգաբանվում է եւ ջրի, եւ հրո երկիր:

Նկատելի է «Մկրտություն» եւ «մկրատ» բառերի նմանությունը, որն, ըստ մեզ, զուգադիպություն չէ: Այսպես, մեր օրերում էլ դեռ սովորույթ է մինչեւ մկրտությունը (սովորաբար յոթ կամ երեք տարեկանը) երեխայի մազերը չկտրելը: Այսինքն, եզրակացնում ենք, որ դիցական մկրտության մասն էր կազմում մկրտվողի մազերը կտրելը: Կամ ժամանակին անզավակ ծնողները Սուրբ Կարապետի գերեզմանին աղոթում էին, որ իրենց արու զավակ պարգեւի եւ ուխտում էին երեխայի մազերը չկտրել այնքան ժամանակ, մինչեւ կրկին չայցելեին նրա գերեզմանին, որի վրա էլ նրա մազերը կտրում էին: Ընդ որում, սա Գիսանե=Դիցամոր մեհենատեղն էր, որի նվիրյալները գես էին պահում: Եվ Կարապետի գերեզմանին մազեր կտրելը հիշեցնում է հրածամ Դիցամորը (նույնը՝ Էպոսի Դեղձուն Ծամին) մազեր ընծայումը: Ի դեպ, շատ ազգերի նվիրյալ ռազմիկների (մեզանում Թուխ Մանուկների) մոտ երկար մազ պահելը կարգ էր՝ հավատալով, թե իրենց զորությունը նաեւ դրանում է:

Արժե նշել մկրտության հետեւյալ պահը, երբ մկրտվողը, դեմքով դառնալով դեպի արեւմուտք, ասում է «Հրաժարիմքը»՝ հրաժարումը սատանայի իշխանությունից, հետո շրջվելով դեպի արեւելք՝ ասում է դավանության համառոտ բանաձեւը՝ «Հավատում ենք ամենասուրբ երրորդությանը...»: Սա հիշեցնում է միջնադարի արեւորդիների բռնի հավատափոխությունը, երբ նրանց ստիպում էին երեսն ուղղել դեպի արեւմուտք ու երեք անգամ թքել՝ իբր սատանայի երեսին: Այս առումով ցանկալի կլիներ, որ Հայ եկեղեցին խմբագրեր «Հրաժարիմքը», քանի որ աշխարհի բոլոր կողմերն էլ Աստծո արարչության արդյունք են, ուստի եւ մերժելի չեն:

Մկրտության գլխավոր անձը կնքահայրն է, որին կոչում ենք քավոր: Քավորը հնում այն անձն էր, որի առաջ սանիկները քավում էին իրենց մեղքերը: «Քավոր»-ը, թերեւս, ծիսական բառ է, քանի որ նման է արարատյան Կուեռա-Կուառ(ս), համարժեք հին հնդկական Կիվերա, վրացական Կվիրիա, Արտաշեսի Ա-ի պաշտած Քռյուս=Քրոնոս(Հրոնոս) դիցանուններին: Իսկ Հրոնոսի համարժեք Բարշամը քավորության դիցական նախատիպն ու, բնականաբար, նախախնամողն է: Մյուս կողմից, «քավոր»-ը հիշեցնում է «քուրմ»-ը (հմմտ. «Քրոնոս»-ի հետ): Այս դեպքում բացահայտվում է քավորության ընտանեավարական համակարգի բուն իմաստը, այն է. աշխարհականները մանուկներին մկրտում (նվիրում էին տաճարին)՝ կնքահայր դարձնելով քրմերին, որոնք պատասխանատու էին նրանց դաստիարակության համար:

Հնում քավորի գործառույթ էր կատարում դայակը. հայտնի կարգ էր, երբ ազնվազարմ տոհմերը իրենց զավակներին հանձնում էին բարեկամ տոհմերի խնամքին: Ընդ որում, մեր պահապան ոգիներին եւս կոչում են «դայակ», որը, թերեւս, ծագում է Արամազդի մեկ այլ՝ Դիայ (նույնը՝ Մեծ Արա) անունից եւ նշանակում է «Դիայի ակ=աչք» (տես. հայերիս Արորդի=Արայի որդի, նրա շնչով արարված, լինելը): Դայակների մասին ասվում է, թե նրանք տեսնում ու լսում են մեզ, սակայն մենք նրանց ոչ տեսնում ենք, ոչ լսում: Սրանք, թերեւս, նախնիների հոգիներն են (հմմտ. «դայակ» եւ «դիակ» նմանահունչ բառերը): Նշենք նաեւ, որ Արա դիցանվանը համահունչ է «ուրու-ուրվական»-ը՝ նախնիների հոգիները, որոնք տեսնվում են սերունդներին եւ պահպանում են նրանց ու տները:

Հաղորդություն. Հաղորդության խորհուրդը Քրիստոսի հետ հոգեհաղորդակցվելն է հացի ու գինու խորհրդանշական ճաշակումով, որում հացը խորհրդանշում է Քրիստոսի մարմինը, գինին՝ արյունը: Հայ եկեղեցում ընդունված է տարեկան գոնե հինգ անգամ (տաղավարաց տոներին) հաղորդվելը: Հայ եկեղեցին ընդունում է, իսկ Կաթոլիկ եկեղեցին մերժում է մանկահաղորդությունը:
Հայ եկեղեցին՝ ի տարբերություն Ուղղափառ եւ Կաթոլիկ եկեղեցիների, հաղորդության ժամանակ օգտագործում է բարձրորակ եւ զուտ ցորենից թխված անխմոր հաց՝ բաղարջ, եւ անապակ (ջուր չխառնած) գինի: Կաթոլիկ եկեղեցին օգտագործում է բաղարջ եւ սառը ջուր խառնած գինի, իսկ Ուղղափառ եկեղեցին՝ խմորից հունցած հաց եւ սառ ու տաք ջուր խառնած գինի: Այսինքն, Հայ եկեղեցին Հաղորդությունում ներմուծել է իր ընկալումը հայի հասկացած Քրիստոսի (իրականում Միհրի) ոգեղեն անաղարտության ու մարմնի կատարելության վերաբերյալ, սրանով հանդերձ՝ Հայի, որպես նախաստեղծ ցեղի, արյան մաքրության եւ մարմնական գեղեցկության խորհուրդը:

Կարծիք կա, որ Հաղորդությունը Միհրի պաշտամուն- քային խորհրդածեսերից է: Եվ Սասնա դյուցազունների հայտնի խորհրդախոսքը՝ «Հացն ու գինին, Տեր կենդանին», Միհրին ուղղված ոգեկոչ է (ոչ թե Հաղորդությունից է առնված), որում հացն ու գինին խորհրդանշում են Միհրի արգասավոր

զորությունը. հացը՝ «ոսկեհատիկ» ցորենի, գինին՝ «արեւշատ» խաղողի արգասիք են (երկուսն էլ արեւասեր, արեւագույն բերք են)։ Իսկ որ գինին շատ հարգի էր նաեւ հնում եւ, միգուցե, ծիսական խմիչք էր, հուշում է այն, որ Ադրամելեքից (Էպոսի Բաղդասարից) սերված Գնունիների նախարարական տոհմի անունը մեկնաբանվում էր որպես «գինի ունի» եւ տոհմի գործն ու անունն էլ զուգադիպում էին. Գնունիները հայոց թագավորների համար ընտիր եւ համեղ գինիներից ըմպելիքներ էր պատրաստում։ Թերեւս, ամենախորհրդավորն այս խոսքում «Տեր կենդանին» (նույնը՝ «կենդանի տեր» կամ «տերը կենդանի է») բառերն են, որոնք նշանակում են Միհրի կենդանի լինելը, թեկուզ բանտարկված կամ փակված, եւ նրան կենդանության (երկրային հայտնության) մաղթանք են։ Օրինակ, դիցապաշտ հայերը (5-րդ դար) հավատում էին, թե դեւերից բանտարկված Արտավազդը (իմա՝ Միհրը- հեղ.) կենդանի է ու մի օր դուրս գալով, ի նպաստ մեզ, տիրելու է աշխարհին։ Այս համատեքստում է նաեւ՝ հայոց էպոսում «չարացած» աշխարհից հիասթափված Փոքր Միհերի կենդանի փակվելը քարայրում եւ այնտեղից դուրս ելնելը գալիք «բարի» ժամանակներում։

* * *

Հաշվի առնելով քրիստոնեության խորհուրդների նշանակությունն ու բնույթը, գտնում ենք, որ սրանք բոլորն էլ ունեին իրենց համազոր խորհրդածեսերը հայոց դիցական պաշտամունքում։ Օծման եւ Դրոշմման նախաքրիստոնեական բնույթի ու խորհրդավորության մասին արդեն ասվել է։ Ինչ վերաբերում է Ապաշխարհությանը, Զեռնադրությանն ու Պսակին, ապա ակնհայտ է, որ առաջինը մարդու մեղայականն գերբնականի առջեւ՝ անկախ հավատքի բնույթից, իսկ վերջին երկուսը նաեւ քրմության գործառույթներ էին։ Մինչդեռ դիցական պաշտամունքում առկա էր նաեւ Զոհաբերության խորհրդածեսը, որը թեեւ քրիստոնեության խորհուրդներում բացակայում է, սակայն գոյատեւել է մատաղի ու պտղիի տեսքով։

Հնարավոր է, որ դիցապաշտության ամենօրյա խորհրդածես էր «Հավատքի հաստատումը», որի մասնակի դրսեւորումներն են՝ Ազգի ու Հայրենիքի համար մարտնչելը, աստվածահաճո ապրելը, չարի դեմ պատերազմելը, աստվածակարգի աշխարհաստեղծումն ու աշխարհին տերություն անելը3։ Այդպիսին են՝ իսլամում «ջիհադը»՝ յուրաքանչյուր մուսուլմանի սրբազան պարտքը աշխարհով մեկ տարածելու իսլամը, քրիստոնեության խաչակրաց արշավանքներն ու միսիոներությունը՝ աշակերտներին ուղղված Քրիստոսի վերջին պատվիրանի համաձայն՝ բոլոր ազգերի մոտ տարածելու քրիստոնեությունը։ Այդպիսին էին եւ հնում դիցերի անունից մղվող պատերազմներն ու հաղթանակները նրանց վերագրելը, աշխարհակալ նվաճումները, երբ նվաճվածներին նաեւ կրոնական արժեքներ էին պարտադրվում (օրինակ՝ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները, երբ Հին աշխարհում սփռվեց հելլենիզմը), ժամանակին հայ-արիական արշավանքները, որի արդյունքում հայոց դիցաբանությունը դարձավ շատերի սեփականությունը (սա ակնառու երեւում է համեմատական դիցաբանության պարագայում)։ Սրանցում տարբեր էին տարածման ձեւերը, եւ եթե սեմականների ու եբրայեցիների մոտ ընդունված էր ազգեր կոտորելը, ապա հայերիս մոտ հակառակն էր՝ սփռելով աստվածային լույսն ու տեղաբնիկ ազգերին ուսուցանելով իրենց գիտելիքները, մերոնք որպես կանոն մերվում, ձուլվում էին դրանցում եւ, ցավոք սրտի, կորցնում կապը բնօրրանի հետ։

Այսպիսով, գտնում ենք, որ դիցական պաշտամունքի հիմնական խորհրդածեսերը (ինչպես դիցերգությունները) ինն էին հետեւյալ հերթակարգով. Մկրտություն, Դրոշմում, Հաղորդություն, Զոհաբերություն, Ապաշխարհություն, Զեռնադրություն, Պսակ, Օծում, Հավատքի տարածում։ Մկրտությունն ու Դրոշմումը կարգել ենք սկզբում՝ որպես Հավատքի տաճարին նվիրման խորհրդածեսեր, Հաղորդությունը, Զոհաբերությունն ու Ապաշխարհությունը դրանցից հետո՝ որպես յուրաքանչյուր հավատավորի պարտականություններ։ Զեռնադրությունը, Պսակն ու Օծումը դասավորել ենք սրանցից հետո, քանի որ նվիրապետական՝ քրմական գործառույթներ են։ Հավատքի տարածումը տեղադրել ենք վերջում, քանի որ այն յուրաքանչյուր հավատավորի ու նվիրյալի (քուրմի) կյանքի առաքելությունն է։

* * *

Յոթ թվի խորհրդավորությունը երեւում է մի շարք փոխկապակցված հանգամանքներում, որոնցից մի քանիսում այն ներկայանում է որպես ինն թվի մասնակիություն։ Այսինքն, յոթ թվին վերագրվող որոշ խորհուրդներ իրականում վերաբերում են ինն թվին։ Այսպես, յոթն են՝

- հայոց դիցարանի չորս ուստր եւ երեք դուստր դիցերը՝ Միհր, Վահե, Տիր, Զարեհ ու Նանե, Անահիտ, Աստղիկ, (հմմտ. յոթի ստացման 7=4+3 խորհրդավոր բանաձեւի հետ),

- ծիածանի (Արամազդի գոտու) գույները՝ մանուշակագույն, երկնագույն, կապույտ, կանաչ, դեղին, նարնջագույն, կարմիր, որոնց համապատասխանում են սովորական (սպիտակ) լույսի բեկումից առաջացող լուսային երանգները: Եթե ավելացնենք լույսի ու խավարի (Դիցահոր ու Դիցամոր) խորհրդանշական գույները՝ սպիտակն ու սեւը, ապա ինը գույն է ստացվում:

- հների հիշատակած երկնային գոտիները (ասվում է նաեւ ինն գոտիների մասին),

- մարդու գլխի ծակերը՝ աչքեր, ականջներ, քթանցքներ, բերան: Գտնում էին, որ դրանց վրա ազդում են յոթ երկնային մարմինները. Արէգակը՝ աջ, Լուսինը՝ ձախ աչքին, Երեւակը՝ աջ, Լուսնթագը՝ ձախ ականջին, Հրատը՝ աջ, Լուսաբերը՝ ձախ քթանցքին, Փայլածուն՝ բերանին:

- հիմնական ներքին օրգանները՝ ուղեղ, սիրտ, թոքեր, լյարդ, լեղապարկ, փայծեղ, սերմնաստեղծ օրգանները: Եթե ավելացնենք շարքում պակասող երիկամներն ու ստամոքսը, ապա ինը ներքին օրգան է ստացվում: Գտնում էին, որ դրանց վրա եւս ազդում են յոթ երկնային մարմինները. Արէգակը՝ սրտին, Լուսինը՝ ուղեղին, Փայլածուն՝ թոքին, Լուսաբերը՝ սերմնաստեղծ օրգաններին, Հրատը՝ լեղապարկին, Լուսնթագը՝ լյարդին, Երեւակը՝ փայծեղին, նաեւ Երկիրը՝ ստամոքսին:

- հիմնական մետաղները՝ ոսկի արծաթ, պղինձ, երկաթ, անագ, արճիճ: Եթե ավելացնենք այլումինը (ամենատարածված մետաղը) եւ ցինկը (հմմտ. «ծին» եւ «ծունկ» բառերի հետ), ապա ինը մետաղ է ստացվում: Հայտնի է հետեւյալ կապը. Արէգակ-ոսկի, Լուսին-արծաթ, Փայլածու-սնդիկ, Արուսյակ-պղինձ, Հրատ-երկաթ, Լուսնթագ-անագ, Երեւակ-արճիճ (կամ ցինկ):

- նոտաները. դո, ռե, մի, ֆա, սոլ, լյա, սի: Սրանք հիշեցնում են դիցանուններ, իմաստասիրական հասկացություններ ու հայոց այբուբենի տառերի լրիվ անվանումները. օրինակ՝ դո-Դաո(տիեզե՞րք)-Դ(Դա), ռե-Արա-Ռ(Ռա) կամ Ր(Ռե), մի-Մա[ն]-Մ(Մեն), ֆա-Վահե, լյա-լույս-Լ(Լյուն), սի-Ս(Սե), իսկ «սոլ»-ը տարբեր լեզուներում նշանակում է եւ աղ, եւ արեւ: Ուշագրավ է, որ առաջին երեք նոտաների «դո-ռե-մի» ու դրանց հայերեն նմանահունչ «դա-ռե-մեն» արտասանությունը, որն, ըստ մեզ, համազոր է տիեզերք-արարիչ-ծնիչ՝ «Դի-Ար-Մա[ն]» եռամիասնությանը, հիշեցնում է վեդայական «դհարմա»-ն (աստվածային կարգ, արդարություն), նաեւ հայերենի «դարման»-ը (դեղ, ճար, սփոփանք):

- Մենդելեեւի, որը խորհրդապաշտ էր, հեղինակած տարրերի պարբերական աղյուսակի պարբերությունները, որոնք համապատասխանում են ատոմի շուրջ էլեկտրոնների ուղեծրերի քանակին,
- բիբլիական արարչագործության օրերը,
- մեզ հայտնի շաբաթվա օրերը, որոնք իշխվում են դիցերից եւ ազդվում են խորհրդանշական երկնային մարմիններից: Հայտնի են մի քանի համապատասխանություն՝ կիրակին շաբաթ հերթակագով.
- հունա-հռոմեական եւ հնդկական դիցաբանությունից հայտնի Արէգակ-Լուսին-Հրատ-Փայլածու-Լուսնթագ-Արուսյակ-Երեւակ տարբերակը հանրահայտ է: Սրանում որեւէ օրինաչափություն չի նկատվում: Ի դեպ, Հին Հռոմում որոշ ժամանակ շաբաթը ինն օրյա էր:

- Ղ. Ալիշանի մոտ հիշատակված Արէգակ-Լուսին-Փայլածու-Արուսյակ-Հրատ-Լուսնթագ-Երեւակ տարբերակը, որում նկատվում է համապատասխանությունը Երկրից ունեցած դրանց հեռավորության աճին (բացառությամբ Արեգակի)՝ ըստ Ա. Շիրակացու հաղորդածի: Ընդ որում, այս երկնամարմինների Երկրից իրական հեռավորությունը նշվածին չի համապատասխանում միայն Փայլածուի ու Արուսյակի պարագայում (ճիշտը ստացվում է վերջիններիս տեղերը փոխելու դեպքում):

- բաբելական Երեւակ-Լուսնթագ-Հրատ-Արէգակ-Արուսյակ-Փայլածու-Լուսին տարբերակը, որը նման է Ալիշանի մոտ նշվածին՝ միայն հակառակ հերթակարգով եւ այն տարբերությամբ, որ սրանում

Արէգակի օրը կենտրոնում է: Ի դեպ, Շիրակացին հիշատակելով վերջիններիս հեռավորությունը Երկրից, արեգակին տեղադրում է կենտրոնում՝ անկախ հեռավորությունից:

- լուսնի տեսանելի պարբերաշրջանի (28 օր) չորս հիմնական փուլերի օրերը (լուսնի լրիվ պարբերաշրջանը կազմում է մոտ 29,5 օր, որից մեկ ու կես օրը այն չի երեւում երկնակամարում:

- մաշտոցյան այբուբենի ձայնավորները՝ Ա, Է, Ը, Ի, ՈՒ, Ո, Ե եւ 28-ն են (28=4x7) բաղաձայնները («Յ»-ն կիսաբաղաձայն է): Յոթերորդ տեղում է «Է» տառը՝ միակ ձայնավոր հնչյունը, որն արտասանվում է առանց կից հնչյունների: «Է»-ն իմաստավորում է «Էություն»-ն ու Աստծուն, եւ որպես նշանագիր հիշեցնում է Արամազդի խորհրդանշական երկնամարմնի՝ Լուսնթագի խորհրդանիշը:

- քրիստոնեական բարոյախոսությունում գլխավոր առաքինություններն ու «մահացու» մեղքերը՝ խոնարհություն, եղբայրասիրություն, հեզություն, աշխատասիրություն, ողորմածություն, չափակերություն, ողջախոհություն եւ հպարտություն, նախանձ, բարկություն, ծուլություն, ագահություն, որկրամոլություն, ողջախոհություն:

- Յոթի հետ կապված հայտնի են այլ մասնավոր դեպքեր եւս: Յոթ պայծառ աստղերից են կազմված Մեծ ու Փոքր Արջի համաստեղությունները (վերջինում է ներկայումս գտնվում երկնքի հյուսիսային բեւեռը), յոթնօրյա էին վաղ անցյալում հարսանեկան ու մահվան հանդեսները, յոթն են հեքիաթային եղբայրները, յոթնագլուխ են վիշապները, նաեւ Հովհանու հայտնությունում՝ երկնային վիշապից (Վիշապ համաստեղությունի՞ց-հեղ.) զորություն ստացած եւ ծովից ծնված գազանը: Բիբլիայում Աստված սպառնում է յոթնապատիկ վրեժ առնել նրանից, ով կփորձի սպանել Կայենին ու նրա վրա նշան է դնում: Յոթ կապանքի տակ էր փակված Փոքր Մհերը, որը կոտրելով փակ դռները՝ վերադառնում է Սասուն եւ առնում Դավթի մահվան վրեժը:

Յոթ թվի համար ասվում է, որ այն կուսական է, ինչպես Նանե-Աթենասը: Կուսական է, որովհետեւ այն ոչ ծնում է թվերի տասնյակի որեւէ թիվ, ոչ էլ ծնվում է դրանցից որեւէ մեկից (յոթը ոչ մի թվի վրա չի բաժանվում եւ չի ստացվում որեւէ թվերի բազմապատկումից): Հայտնի է, որ վեցամսյա եւ ութամսյա ծնվածները չեն ապրում, իսկ յոթ ամսականները ապրում են, երեխաներն ատամ են հանում յոթ ամսական ժամանակ եւ փոխում են դրանք յոթ տարեկան հասակում:

* * *

Ծիսական նշանակության որոշ բառերի մեկնությունը բացահայտում է ծեսերի իմաստը: «Արարողություն»-ում նկատվում է արարող՝ արարչությանը նպաստող դրա հմայական իմաստը: «Աղոթք»-ը, համահունչ լինելով «աղոտք»-ին, հուշում է այն մթնշաղերին (աղոտ լույսի պահին) անելու վաղեմի կարգը: «Երկրպագություն»-ը, բառացի նշանակելով «երկիր պագանել՝ համբուրել», հիշեցնում է Դիցամորը «համբուրելու» խորհրդածեսը: Հայ եկեղեցական ծիսագիրքը կոչվում է Մաշտոց, որի «մաշտ» արմատը նշանակում է մազաթափ, ճաղատ ու հիշեցնում է Արամազդի «կունդ» կոչումը: Կարծվում է, որ այսպես է կոչվել հայոց հին հավատքի (ըստ մեզ՝ Դիցահոր) սրբազան գիրքը: Մաշտոցները երեք տեսակի են՝ Հայր, Մայր, Փոքր, որոնք պարունակում են հոգեւոր երեք բարձր աստիճաններին վերապահված ծեսերը:

Հայր մաշտոցը պարունակում է կաթողիկոսական ծե- սերը, Մայր մաշտոցը՝ եպիսկոպոսական ծեսերը, իսկ Փոքր մաշտոցը քահանային վերապահված խորհուրդներն ու ծեսերը: Մաշտոցները հիշեցնում են դիցական եռակարգը (Դիցահայր, Դիցամայր ու դիցեր): Օրինակ, կաթողիկոսին համազոր էր գերագույն քրմապետի կոչումը, որը Արտաշեսյանների օրոք պատկանում էր Արամազդի գլխավոր տաճարի քրմապետին: Իսկ քահանային վերապահված որոշ խորհուրդներ, ինչպիսիք են մկրտությունն ու հաղորդությունը, հիշեցնում են աստղկական ու միհրական խորհրդածեսերը:

Դեռ մեր օրերում էլ գյուղերի տներում պահվում են ձեռագիր ավետարաններ, որոնց կոչում են «շեկ», «կարմիր» անուններով: Ասում են, թե տան ու ավետարանի խնամակալ սուրբը, որն իբր երեւում է տան անդամներին, օրինակ, ճերմակակզգեստ ու շիկամազ է, կամ կարմրազգեստ ու մորուքավոր է: Այսինքն, ավետարանները գույներով կոչելը դիցական պաշտամունքի վերապրուկ է, որում

դիցապատկան սուրբ գրքերը խորհրդանշական գույներ են կրել: Այսպես, «շեկ» սուրբը հիշեցնում է Միհրին, որը պատկերացվել է որպես սպիտակ ու փայլուն զգեստ կրող, անմորուս եւ ոսկեգիսակ (շիկահեր) պատանի՝ կարծես ոսկով օծված բերանով, որից սաստիկ լույս է դուրս տալիս. այսպիսին է նկարագրում Ա. Շիրակացին երազում տեսած եւ նրա հետ զրույցի բռնված անձնավորված արէգակին (իմա՝ Միհրին): Իսկ «կարմիր» սուրբը հիշեցնում է հրահեր ու բոցամորուս Վահագնին: Հայ միջնադարյան մատենագրության փոքրածավալ եւ այլեւայլ (այդ թվում՝ կրոնական) բովանդակությամբ բարձրարժեք ու զանազան ձեռագիր նյութերի ժողովածուները հայտնի են Ոսկեփորիկ անվամբ, որը խորհրդանշական է հետեւյալ պատճառով: Դիցամայրը հայտնի է Ոսկեմայր, Ոսկեծամ=Դեղձուն ծամ անուններով եւ իշխում է երկրի ընդերքին, որի նմանությամբ է արարածների որովայնը (փորը): Այսինքն, «Ոսկեփորիկ»-ը հնում եղել է Դիցամոր սուրբ գրքի անվանումը:

Հայ միջնադարյան առակների ժողովածուն, որը վերագրվում է Վարդան Այգեկցուն, կոչվում է Աղվեսագիրք: Սա եւս խորհրդավոր է հետեւյալ պատճառներով: Աղվեսը հնարամտության, պերճախոսության (վատ իմաստով՝ խորամանկության, կեղծավորության) խորհրդանշական կենդանին է: Հարսանյաց հանդեսներում գործում է «կարմիր աղվես» կոչված դերակատարը, որը հարսանեկան թափորից առաջ է ընկնում ու փեսայի տնեցիներին լուր է բերում հարս ու փեսայի ժամանման մասին: Սա հիշեցնում է Տիրի պատգամաբերությունը՝ երկնային «փեսայի» գալուստի ավետումը (Քրիստոսը եւս իրեն այլաբանորեն «փեսա» էր կոչում): Մյուս կողմից, Տիրի գլխավոր մեհյանը Երազամույն վայրում «ճարտարության ուսման» կաճառ էր, ուր վարժվում էին ճարտարախոսության (հռետորության) մեջ, արվեստներում, առեւտրում ու գիտություններում («ճարտարություն»-ը նշանակում է հնարամտություն, հմտություն): Այսինքն, աղվեսը Տիրին բնութագրող կենդանի է: Հետաքրքիր է, որ Արտաշես Ա-ն Տրունիների նահապետ Տուրի որդիներին նախարարական տուն կարգեց Երվանդ Դ-ին հոր լրտեսելու եւ այդ պատճառով զոհվելու համար (կարծելի է, որ լրտեսությունը սրանց տոհմիկ գործն էր): Իսկ ինչպես գիտենք, լրտեսությունը բազում հմտություններ, հնարամտություն, աղվեսի վարք պահանջող մասնագիտություն է4: Միաժամանակ, Տիրի ենթադաս էակները հայտնի են որպես հոգեառներ՝ մարդկանց հոգիները «առնող», եւ միջնադարում հիշատակվում են Առնակ անունով, որը հիշեցնում է «առակ»-ը:

Վարդան Լալայան

1. - Անանիա Շիրակացու մոտ՝ երկնային ութ մարմինների շարքում, առանց անուն տալու նշվում է Ուրանի մասին՝ որպես երկրից ամենահեռու գտնվող երկնային գունդ:
2 - Լինելով լեռնային օրրանի բնիկներ, բնականաբար, մեր առաջին բնակավայրերը քարանձավներն էին:
3 - Ազգն ու Հայրենիքը եւ Աշխարհը՝ որպես բոլոր ազգերի բնօրրան, շաղկապված արարումներ են, ուստի Հայրենիքում Ազգի հարատեւության, Աշխարհում ազգերի ներդաշնակ գոյության (յուրաքանչյուր ազգ՝ իր բնօրրանում) ապահովումն ու բնապահպանությունը աստվածային առաքելություններ են:
4 - Կարծում ենք, որ Տրունիները Տիրի սպասավոր քրմական տոհմ էին, ինչպես Վահունիները՝ Վահագնի, Մեհրունիները՝ կարծելի է Միհրի (բոլորի մոտ էլ տոհմի անվանումը սկսվում է դիցանունով): Հիշարժան է այն, որ հայոց հիշատակված առաջին լրտեսը Տուրն է, իսկ լրտեսության դիցական հովանավորը՝ Տիրը:

Դիցական պաշտամունքի հասկացությունների մեկնությունը բացահայտում է դրանց իմաստն ու խորհուրդը: Դրանցից են պաշտամունքային կառույցների ու պաշտամունքավարների անունները:

Պաշտամունքային Կառույցներ . Դիցական պաշտամունքից հայտնի են մեհյան, բագին, դիվան, տաճար, կուռք, արձան, կոթող, աշտարակ, ապարանք հասկացությունները:

Մեհյան. «Մեհյան»-ը, մեկնաբանվելով որպես «միհրյան-մեհրյան», Միհրի պաշտելատեղն էր: Եվ հին հավատքի տաճարներին ընդհանրապես «մեհյան» կոչելը, թերեւս, պայմանավորված էր մեզանում Արեւ-Միհրի պաշտամունքի տարածվածությամբ:

Բագին. Նկատի առնելով Վահագն-«Բահագն»-Բագին հնարավոր բառանցումը, կարծում ենք, որ բագինը Վահագնի հրատեղ-պաշտելատեղն էր:

Դիվան. «Դիվան»-ը նշանակում է «դեւերի տեղ», որոնք Դի-Եվա=Մեծն Եվա դիցամոր սպասավոր հողեղեն էակներն էին (օրինակ, Բիբլիայում «Եվա»-ն նշանակում է «բոլոր կենդանեաց մայր»): Ուստի, դիվանը Դիցամոր պաշտելատեղն էր: Դիվան է կոչվում արդարադատության տեղը, որը հիշեցնում է Դիցամոր դատը անդրաշխարհ ընկած մեղավոր հոգիների նկատմամբ:

Տաճար. «Տաճար»-ի պարզ մեկնությունը «տա ճար» է, որը ցուցանում է այստեղ դիցերից «ճար» առնելու ակնկալիքը (տես. նաեւ տաճար-ճարտար նմանությունը): Տաճար է կոչվում եկեղեցու կենտրոնը՝ ատյանը («ատյան»-ն ինքնին նշանակում է կենտրոնատեղ): Եկեղեցու ատյանը ժողովատեղն է, ուր խմբվում են այր ու կին առանձին կարգով. այրերը՝ ձախ կողմում կամ առջեւում, կանայք՝ աջ կողմում կամ ետեւում (հիշեցնում է Դաոի [նշանը՝ արական-իգական նշիկներով:

Կուռք. «Կուռք»-ը դիցի պատկերի «կրքոտ» ձեռակերտն է (տես. կուռք-կիրք նմանությունը): Այն հիշեցնում է Քռոնոս= Կուառ(u) դիցանունը: Ուստի, կարող ենք ասել, որ կուռքը Հրոնոս-Զարեհի պատկերն էր:

Արձան. «Արձան»-ը կարող էր նշանակել «Արային ձոն» եւ լինել Հայր Արայի նվիրակոթողը: Հիշարժան է, որ հայոց վերջին քրմապետը Արձանն էր, որը կրոնական պատերազմում զոհվելով՝ «արձանացավ». նրա հիշատակին արձան կանգնեցվեց, եւ Արձան վերակոչվեց այն լեռը, ուր նա զոհվեց:

Կոթող. Կոթողները կլոր, քառանիստ, բազմանիստ սյունաձեւ կառույցներ են: Դրանք հիշեցնում են ֆալլոսները: Նման ձեւի են նաեւ եկեղեցու գմբեթները, որոնք երեխայի առնանդամի նմանությամբ են եւ խորհրդանշում են Դիցահոր մինչզուգավորման առնականությունը: Իսկ «կոթող»-ի «կոթ» արմատն ունի Աստված նշանակությամբ իր նմանակները եվրոպական լեզուներում՝ Գոթ, Գոդ, Կոդ, Կոտ: Ուստի, կոթողները Դիցահոր առնականությունը բնորոշող ֆալլոսանման կառույցներն էին:

Աշտարակ. «Աշտարակ»-ի «աշտ=հաշտ» արմատը նշանակում է եւ զոհատեղ, զոհ, եւ հաշտություն: Նույն արմատով է «աշտանակ»-ը: Այսինքն, զոհաբերությունն ու մոմ վառելը դիցերի հետ հաշտեցման ծեսեր էին: Իսկ աշտարակն այն վերասլաց կառույցն էր, որի վրա կրակ էր վառվում ու զոհ մատուցվում (դրանց վրա կրակ վառելը նաեւ առօրեական էր, կամ, օրինակ, զրադաշտականությունում զոհի դին դրվում էր աշտարակի վրա՝ ի կեր թռչուններին): Աշտարակը Աշտար=Աստղիկին ձոնված կառույցն էր (տես. Աշտար»Աստար»Աստղ(իկ)բառանցումը եւ աստղակերպ դիցուհիների Իշտար, Աստարտե անունները): Կարծիք կա, որ Աշտարակ ավանը, որտեղ, թերեւս, աշտարակ կար, Աստղիկի պաշտելատեղն էր: Իսկ աշտարակի վրա գիշերով կրակ վառելը Լուսնի թվացյալ դեր էր կատարում:

Ապարանք. Այսպես է կոչվում պալատը, դղյակը: «Ապարանք»-ը պարզ մեկնաբանվում է որպես «ան պարան= երկնքից անպարան կախված»: Օրինակ, ըստ ավանդազրույցի, Ապարանի անունը բխեցվում է Արագածի վրա երկնքից անպարան կախված Լուսավորչի (իմա՝ Միհրի-հեղ.) կանթեղից (տես. Անպարան-Ապարան բառանցումը): Իսկ երկնքից անպարան կախված կարող էր պատկերացվել դիցերի երկնային պալատը:

* * *

Քրիստոնեական կառույցների որոշ անուններ փոխանցվել են մեհենական պաշտամունքից:

Եկեղեցի. Եկեղյաց (թերեւս, «եկեղեցաշատ») էր կոչվում գավառը, ուր Անահիտի գլխավոր մեհյանն էր: Այն կոչվում էր նաեւ Անահտական՝ նկատի առնելով այստեղ դիցուհու տեղերի առատությունը: Ուստի, եկեղեցին Անահիտի պաշտելատեղն էր: Եվ քրիստոնեական տաճարները եկեղեցի կոչելը, թերեւս, պայմանավորված էր մեզ մոտ Անահիտի լայնատարած պաշտամունքով: Եկեղյաց գավառը հայտնի էր նմանահունչ այլ անուններով եւս՝ Ագիլիսին, Եկելեսենե եւ այլն: Առաջինը հիշեցնում է «Ագուլիս»-ը՝ Գողթան գավառում գտնվող ավանի, մոտի լեռան, գետակի անունը, եւ երկուսը միասին՝ «այգալույս»-լուսաբացը, երբ ծագում է Անահիտի լուսատուն՝ Լուսաբերը: Ըստ քրիստոնյա մեկնիչների՝ «եկեղեցի»-

ն նշանակում է «եկ եղիցի»՝ իբր «Քրիստոսի գալուստը եղիցի», որն այլաբանորեն հավասարազոր է լույսի ծագելուն:

Վանք. «Վանք»-ի արմատը «վան=ավան»-ն է: Իսկ «օթեւանատուր»-Վանատուրի պաշտամունքից կարծելի է, որ նրա տաճարը Բագավանում, ուր օթեւանածները կերակրվում էին տաճարին ընծայված բարիքներով, միակը չէր: Նման օժանդակ դեր ունեին վանքերն ու կաթոլիկ աբբայությունները: Ուստի, վանքերը օթեւանատուն-տաճարներ էին:

Մատուռ. Մատուռը որեւէ մարտիրոսի նահատակության վայրում կամ շիրմին շինված փոքր աղոթարան կամ եկեղեցի է: Իրապես մարտիրոսը մարտում զոհվածն է, որը վերագրվել է եւ հավատքի նահատակին: Իսկ «մատուռ»-ը հիշեցնում է «մարտ»-ը: Ուստի, մատուռները կռվում զոհված քաջերի, հավատքի նահատակ քրմերի հուշատեղերն էին: Մատուռ է կոչվում նաեւ եկեղեցու բեմի հյուսիսային կողմի սենյակը, որ ժամանակին որպես խորհրդանոց է ծառայել (միգուցե, այստեղ պահվել են սրբերի, իսկ մեհյանների համարժեք տեղում՝ քրմերի մասունքները):

Պաշտամունքավարներ. Հայ եկեղեցու սպասավորների կոչումների հիմնական մասը մեհենական պաշտամունքավարների կոչումներ են:

Կղեր. Կղեր է կոչվում եւ եկեղեցական խավը, եւ եկեղեցականը: Այն կազմված է «եկեղեցի» բառի «եկեղ» առաջնամասից: Եվ քանի որ եկեղեցիները Անահիտի պաշտելատեղերն էին, ուստի կղերներն էլ Անահիտի պաշտամունքավարներն էին:

Տիրացու. Այսպես են նաեւ կոչվում եկեղեցական դպիրները: Սրա «տիր» արմատը վկայում է Տիրի հետ ուղղակի կապը (տես. մատաղացու, հարսնացու): Ընդ որում, Տիրը Արամազդի դպիրն է: Այսինքն, տիրացուն Տիրի պաշտամունքավարն էր:

Սարկավագ. «Սարկավագ»-ը մեկնաբանվում է իբրև «սարկարանի ավագ»՝ մեհենական սպասքի պահապան կամ դրանց ավագ: Նկատելի է Սարգիս-սարկավագ նմանությունը:

Երեց. Այսպես են կոչում քահանաներին: Այն նշանակում է ավագ, իսկ «երիցս» բառը՝ եռապատիկ: «Երեց»-ը համահունչ է «երեսին»-ին, իսկ «երեցուկ-իրիցուկ»-ը նշանակում է այրված: Երես է կոչվում եւ մարդու դեմքը, եւ առարկաների դրսի մակերեւույթը: Իսկ երեսի ու լույսի-հրո խորհրդավոր կապը երեւում է հետեւյալում: Մարդու գեղեցիկ դեմքը նմանեցվում է արեգակին ու լուսնին (տես. «արեգակնատեսք» ու «լուսնադեմ» որակումները): Երկնային լուսատուները ներկայանում են որպես դիցերի դեմքեր: Լուսերես են դիցերը, հրեշտակներն ու սրբերը: Հավատում էին, թե փայլակը Ծովյան-Աստղիկի երեսի փայլն է: Կամ պայծառակերպության պահին Հիսուսի երեսը արեգակի պես փայլեց: Առարկաների դրսի մակերեւույթի կապը հրո հետ, թերեւս, պետք է բացատրել դրա արեւահայաց լինելով: Այսինքն, նկատելի է «երեց»-ի իմաստային կապը ավագության, երեքի ու հրո հետ: Այսինքն՝ երեցը հրատեղերի ավագ սպասավորն էր՝ լինելով երրորդը քրմական աստիճանակարգում այնպես, ինչպես քահանայությունը երրորդ բարձր աստիճանն է քրիստոնեական աստիճանակարգում:

Քահանա. «Քահանա» բառի նույնիմաստ նմանակները հայտնի են սեմական լեզուներում եւ այլուր: Եվ մեր հին հավատքի աշխարհասփռումը տեղիք է տալիս մտորելու նրա բնիկ ծագման մասին: Նրա «քահ» արմատը հիշեցնում է «գահ»-ը (գուցե, առկա է գ-ք հնչյունափոխություն), որն իր սովորական իմաստից բացի նշանակում է բարձունք, լեռնագագաթ: Այս դեպքում «գահանա-քահանա»-ն, թերեւս, ունի լեռնակատարների պաշտամունքավար նշանակությունը: Իսկ լեռնակատարներին դիցերին գոհություն հայտնելու քրմերի գործառույթի նախադեպ է ներկայացնում Նոյի մասին ավանդազրույցը: Այսպես, Բարձր Հայքում, Սեպուհ լեռան մոտ գտնվող Գոհանամ լեռան մասին ավանդազրույցն ասում է, թե իբր ջրհեղեղի ժամանակ, հանձինս այս լեռան, Նոյն առաջին անգամ ցամաքի հանդիպեց ու գոհություն հայտնեց Աստծուն՝ գոչելով «Գոհանամ=գոհ եմ» (տես. «գոհանա=գոհ լինի»-գահանա նմանությունը): Եվ, միգուցե, այս լեռը Աստծուն գոհություն հայտնելու հայոց նշանավոր տեղն էր, քանի որ ջրհեղեղի մասին հայոց ավանդազրույցներն աշխարհի ստեղծման այլաբանություններն են, ուր Նոյը ներկայացնում է համաշխարհային ջրերում լողացող Աստծուն:

Վարդապետ. Վարդապետը գիտական պատվաաստիճան ունեցող կուսակրոն քահանան է: Նրանց պատվաստիճանները տասներկուսն են: Վարդապետի պաշտոնը քրիստոնեական վարդապետության ուսուցանումն ու տեքստերի մեկնությունն է: Նա Աստղիկի պաշտամունքավարն էր. Աստղիկը հայտնի էր «վարդամայր» կոչումով, նրա տոնն էր Վարդավառը: Հայտնի է Աստղիկի նշանակների կապը մտքի ու գիտելիքի հետ: Այսպես, Լուսինը ազդում է ուղեղին, արծաթը խորհրդանշում է մտքի մաքրությունն ու գիտելիքը, գետը՝ գիտելիքի հարահոսությունը: Նրա ենթադաս էակների՝ հավերժահարս-ջրահարսների համար ասվում է, թե նրանք բնույթով գիտուն են, սակայն եւ զուրկ են հանճարից:

Աբեղա. Այսպես էին կոչում կուսակրոն վանականներին: Ժամանակին աբեղաները ասորական դպրության կամ ասորի եկեղեցականներն էին, որոնք մեծ կշիռ ունեին կղերական խավի ներսում: Կարծվում է, որ «աբեղա»-ն ասորի հոգեւորականների ընդհանուր կոչումն էր, եւ հնարավոր է, որ դրանք Բելի պաշտամունքավարներն էին (տես. Բել-Աբել(ա)- Աբեղա բառանցումը):

Եպիսկոպոս. «Եպիսկոպոս»-ը հունարեն բառ է եւ նշանակում է տեսուչ, վերակացու: Սակայն սրա «եպիս» առաջնամասին նմանահունչ դիցանուններ կան: Հնդիկների մոտ ապսար են կոչվել երկնա-երկրային ջրերի դիցուհիները՝ վերին երկնքում կենող լուսաճառագ գանդխարվների կանայք, եւ Ապաս են կոչվել այդ ջրերը: Ընդ որում, գանդխարվներին անվամբ եւ վարքով նմանեցնում են կենտավրոսներին, իսկ երբեմն աղեղնաձիգ կենտավրոս է ներկայանում Դիցահորը բնորոշող Աղեղնավոր աստղատունը: Նշանավոր ապսարները համարվում են Բրահմայի երեւակայության ծնունդ (հմմտ. Դիցահորից մտահղացմամբ Դիցամոր ծնունդի հետ): Ապսարից ու գանդխարվից են ծնվել առաջին այրն ու էգը՝ Յաման ու Յամին (հմմտ. Որմիզդից ու Սանդարամետից Գայոմարտի (Հայամարդի՞-հեղ.) եւ նրանից Մեշիա-Մեշիանա զույգի ծնունդի հետ): Շումերների մոտ Ապսու են կոչել Դիցահորն ու նրա կացարանը՝ ստորերկրյա քաղցրահամ ջրերի ավազանը (հմմտ. «ափսե»-ի՝ հնում երկրի մտացածին մոդելի՞ հետ), ուր թաքնված են խորհրդավոր, մյուս դիցերին անհասանելի «մե» (ծնո՞ղ-հեղ.) ուժերը: Ապսուի տիրակալն էր Էյա-Հայան՝ իմաստության ու ստեղծիչ դիցը, որ պատկերվում էր որպես երկու կամ չորս գետեր (իմա՝ Տիգրիսը, Եփրատը եւ Արաքսը, Քուռը) իրենից բխեցնող (ակնհայտ է, որ Հայան բնորոշում էր Հայքը): Ապիս էին կոչում եգիպտացիների սրբազան (սեւաթույր եւ սպիտակ բծերով) եզանը՝ Փտահի կարծեցյալ մարմնավորմանը: Իսկ Փտահը՝ Մեմփիսի գերագույն դիցը, գլխավորում էր դիցերի ինչյակը (էննեադան), որին քրմերը կոչում էին առաջին ութ դիցերի հայր եւ աշխարհի ու գոյություն ունեցող ամեն ինչի արարիչ (բացահայտ նման է մեր Արամազդին): Մեզ մոտ որպես Դիցամայր հիշվում է Պիսիդովն կոչված անհայտ ոմն (հմմտ. ծովերի տիրակալ հունական Պոսեյդոնի հետ, որին կոչում էին «երկիրը ժաժքող», «երկիրը պահող», որոնք ավելի շուտ անդրաշխարհի դիցերին են բնորոշում): Այսպիսով, «եպիսկոպոս»-ը դիցական հեղինակավոր պաշտամունքավարի կոչում էր:

Կաթողիկոս. Կարծիք կա, որ «կաթողիկոս»-ը ծագում է «կաթողիկե»-ից, որը լատիներենում նշանակում է ընդհանրական (օրինակ, Կաթոլիկ եկեղեցին նշանակում է՝ ընդհանրական): Կաթողիկե է կոչվում եւ գահանիստ եկեղեցին, եւ եկեղեցու գմբեթը: Մյուս կողմից, «կաթողիկե»-ն հիշեցնում է մեր «կոթող»-ը՝ եկեղեցու գմբեթին նման ֆալլոսանման կառույցը: Այսինքն, «կաթողիկ»-ը բնիկ բառ է եւ կոթողների գերագույն պաշտամունքավարի կոչում էր:

- * -

Հայոց տարածքային միավորների որոշ անուններ դիցանուններ կամ դիցավայրեր են հիշեցնում: Բանն այն է, որ դիցաբանական աշխարհայեցողությամբ դիցերն իշխում են երկրատարածքների վրա:

Արվարձան. Այսպես է կոչվում քաղաքի ծայրամասային թաղամասը կամ մոտակա բնակավայրը: «Արվարձան»-ը կարելի է մեկնաբանել որպես «Արայի արձանի տեղ»: Ուշագրավ է, որ վրաց Մծխիթա քաղաքում Արամազդի արձանը քաղաքից դուրս, գետի մյուս կողմում (փաստորեն՝ արվարձանում) էր:

Ավան. Սրա հիմքը «վան»-ն է, որը Դիցամոր անուններից է: Այսպես, «վան» արմատով առկա են բնակավայր նշանակությամբ բառեր՝ իջեվան, օթեվան: Դիցաբանությունում վայրը, անոթը բնորոշում է արարման տեղը, առարկան ու նախախնամ Դիցամորը: Դիցամայրը մեզանում հայտնի է Մարե, Մանի անուններով, որոնցում «ար»-ը, «ան»-ը Դիցահոր անուններն են: Հայերենում առկա է բառակազմական այն երեւույթը, երբ բառասկզբի «մ»-ն իմաստաշրջում է բառը, օրինակ՝ հայր(այր)-մայր, հառնել-մեռնել:

Իսկ բառասկզբի «վ»-ն տեղի իմաստ է հաղորդում երեւույթին, գործողությանը, օրինակ՝ այր-վայր (այրման կամ այրերի տե՞ղ), ար-վար, էր-վեր, կամ հակադարձում է այն՝ օրինակ, անել-վանել:

Գավառ. «Գավառ»-ը հիշեցնում է «քավոր»-ը, ինչպես եւ վերջինիս հիմք համարվող հայոց Կուեռա-Կուառ(u), համարժեք հին հնդկական Կիվերա, վրացական Կվիրիա դիցանունները:

Նահանգ. Հայոց հավատալիքներից հայտնի են նհանգները՝ ջրային կանացիակերպ էակները: Ասում են, թե նրանք փաթաթվում են լողորդների ոտքերին ու խեղդում, կամ ջրի տակ են քաշում ու հետները սիրախաղեր անում: Նհանգները հիշեցնում են ջրահարսերին, ում համար ասվում է, թե յուրաքանչյուր աղբյուր, գետ ունեցել է իր ջրահարսը: Ընդ որում, հայոց աշխարհի կտրտվածությունը պայմանավորված է եւ գետերով, որոնք լեռների հետ միասին մեր աշխարհի սահմանաբաժաններն են:

Մարզ. Հիշեցնում է հռոմեական Մարս դիցանունը (սա պատերազմի ու Հռոմի հովնավոր դիցն էր) ու, թերեւս, հռոմեացիքից է առնված: Այսպես, հռոմեացիների մոտ հայտնի էին մարսյան դաշտերը, ուր նրա մեհյաններն էին, եւ զինված քաղաքացիները կամ զինվորները մաքրագործման ծեսեր էին անում: Մարսյան գլխավոր դաշտը Հռոմի մոտակայքում էր եւ, ըստ էության, արվարձանում էր: Ընդ որում, կարծիք կա, որ Մարսը՝ հունական Արեսի նմանակը, Արա դիցահոր պատերազմիկ կերպարն է:

- * -

Պաշտամունքային Վայրեր. Մեր որոշ երեւելի վանքերի հիմնումը վերագրվում է մեզանում քրիստոնեություն տարածած առաքյալներին՝ Բարդուղիմեոսին ու Թադեոսին: Միայն թե, պարզ չէ, թե երբ սրանք հասցրեցին այդքան վանք հիմնել, երբ հալածվում էին Սանատրուկից: Մինչդեռ Բարդուղիմեոսին վերագրվող երեւելի վանքերը հիմնվել են նախկին մեհենատեղերում. Հոգյաց վանքը՝ Դարբնաց քար կոչված վայրում (Վասպուրականի Անձեւաց գավառում), ուր Անահիտի կուռքն էր1, կուսանոց (ավելի ուշ՝ Աստվածածին վանքը) Բութ լեռան վրայի (Վասպուրականի Բոգունիք գավառում) անդրաշխարհի հրեղեն դիցերի մեհենատեղում (լեռն այն ժամանակ դեռ գործող հրաբուխ էր): Ավելին, այն վանքերը, որտեղ իբր նրանք թաղված են, նույնպես մեհենատեղեր են: Բարդուղիմեոսի վանքը Վասպուրականի Աղբակ գավառում (4-րդ դար), ըստ ավանդության՝ կառուցել է Սանատրուկը՝ վանքի մոտի Կաթնաղբյուրի ջրով բորոտությունից բուժվելու պատճառով (պարզ է, որ նա վանք չպետք է կառուցեր): Թադեոսի (Թադեի) վանքը Վասպուրականի Արտազ գավառում (4-րդ դար)՝ հիմնված նրա եւ Սանդուխտ կույսի հիշատակին, ինչ-որ մեհյանի տեղում է շինվել: Այսինքն, կարելի է ասել, որ առաքյալներին վերագրվող, ինչպես նաեւ նրանց անվամբ հին վանքերը մեհենատեղերում են կառուցվել:

* * *

Գրիգոր Լուսավորչի անվամբ որոշ վանքեր, որոնց հիմնումը վերագրվում է Գրիգորին, նույնպես նախկին մեհենատեղերում են, ինչպես Ավագ կոչված վանքերը՝ Բարձր Հայքի Դարանաղի ու Դերջան գավառներում (նրա օրոք շինվածները պետք է որ երեւելի մեհենատեղերում լինեին՝ դրանք առաջնահերթ մոռացնելու համար): Սեպուհ լեռան վրա, Ավագ վանքից ոչ հեռու գտնվող վանք-ուխտատեղի մոտ կար հորդաբուխ Լուսաղբյուր, որն իբր Գրիգորն էր բխեցրել: Մինչդեռ Լուսաղբյուրները, որոնց համար ասվում է, թե ջրերը բուժում են կուրությունն ու վերականգնում տեսողությունը, դիցական տեղերն են: Մեկ այլ՝ Բարեհամ կոչված (հմմտ. «Բրահմա»-յի հետ) աղբյուր էլ է իբր բխեցրել Գրիգորը Սեպուհ լեռան վրա՝ իր ճգնատեղում: Ըստ ավանդության՝ Հովհաննես-Կարապետի մասունքները սկզբում թաղվել են Մշո Սուրբ Կարապետի վանքի մոտի բլրին՝ Լուսավորչի ջորու նստած տեղում, եւ միայն հետո տեղափոխվել վանք: Եվ այս տեղում իբր լույսի պես պայծառ ջրով աղբյուր է բխել, որի համար էլ աղբյուրն ու բլուրը կոչվել են Լուսաղբյուր: Ընդ որում, ջորին՝ ձիու եւ էշի ամուլ ծինը, խորհրդանշում է այն ժամանակներում Միհրի անժառանգ (ինչպես Փոքր Միհրը, Նժդեհը) կամ անորդի (ինչպես Արտավազդը) լինելը: Կամ, հայոց արքաների (Միհրի հովանավորյալների) ոսկեպատ կառքերին սպիտակ ջորի էին լծում, որն հուշում է ջորու հարգի լինելը: Այսինքն, Լուսաղբյուրները Միհրի տեղերն էին (հմմտ. Արեգակի մարդու աջ աչքին իշխելու հետ):

Գրիգորին է վերագրվում Այրիվանքի (Գեղարդի եկեղե- ցու) հիմնումը: Ասում են, թե այն այսպես է կոչվել վիմափոր և այրերի մեջ լինելու պատճառով, իսկ Գեղարդ անունը հայտնի է 13-րդ դարից, երբ այստեղ է բերվել գեղարդը, որով իբր խոցվել է խաչված Քրիստոսը: Կարծիք կա, որ այստեղ հին տաճար է եղել: Մեր կարծիքով՝ դա Նանեինն էր: Այսպես, Նանեն բնակատեղերի պահապանն է, իսկ

մեր առաջին տեղերն այրերն էին: Նա կույս դիցուհի է, իսկ քարը՝ անբեղ, անծին տարրը, խորհրդանշում է կուսությունը: Այրիվանքն էլ կարող է նշանակել նաեւ «այրիների վանք»՝ որբեւայրիների մենաստան: Որպես այդպիսիք կարող են լինել Նանեի տաճարները: Գեղարդակիր էր Նանեի հունական փոխանակ Աթենասը: Ասվում է, թե գեղարդով խոցել են Քրիստոսի կողը, եւ Ադամի կողոսկրից է ստեղծվել Եվան (տես. մարդ-աշխարհ խորհրդավոր նմանության մեջ ոսկոր-քար համադրությունը): Եվ հնարավոր է, որ նույն գեղարդը, որ պահվում է Էջմիածնում, ժամանակին Նանեին էր ընծայվել ու գտնվել է հենց Այրիվանքում (հայտնի է, որ դիցերին զենքեր էին ընծայում, որոնք պահվում էին նրանց տաճարներում):

** *

Հաշվի առնելով առաջին քրիստոնեական տաճարների՝ ավերված մեհյանների տեղում կառուցելու նպատակահարմարությունը կամ հին հավատքը նսեմացնելու ու մոռացության մատնելու գործելակերպը, կարծում ենք, որ այդ ավանդույթը գործում էր էլ ավելի ուշ՝ արդեն անճանաչելի մեհենատեղերում, սակայն որոնք, որպես անշուք ուխտատեղեր, դեռ մնում էին: Եվ այդ ժամանակներում շինված եկեղեցիների ու վանքերի անուններն էլ մասամբ բնորոշում են դրանց դիցապատկան արմատները:

ա) Քրիստոնեության առաջին դարերում շինված կամ վերաշինված Սուրբ Խաչ եկեղեցիները մեհենատեղերում էին, քանի որ առաջին ավերված մեհյանների տեղում խաչ էր կանգնեցվում:

բ) Ամենափրկիչ (իբր Քրիստոսի «փրկիչ» կոչումից ածանցյալ) անվամբ հին վանքերը Միհրի կամ Վահագնի, տեղերում էին՝ հաշվի առնելով Միհրի փրկչական առաքելությունը կամ Վահագնի վիշապներին սպանելն ու մարդկանց փրկելը («Ամենափրկիչ»-ը Միհրի կոչումն էր, որը փոխանցվեց Քրիստոսին): Դրանցից մի քանիսը նշանավոր են: Էրզրումի նահանգի Քղի քաղաքի մոտի վանքը կարեւոր սրբավայր էր հայերի ու քրդերի համար, որ հուշում է նրա երեւելի մեհենատեղ լինելը, այլապես չէր կարող սրբավայր դառնալ այլադավան քրդերի համար: Ըստ ավանդության՝ Մոկս քաղաքի մոտի վանքը հիմնել է «Քրիստոսին տեսած» Գասպար անունով հայ քուրմը՝ նորածին Հիսուսին այցելած երեք մոգերից մեկը, որն այստեղ էլ թաղվել է: Գառնու մոտ, Ազատ գետի ափին գտնվող վանքը տեղի բնակիչները կոչում են Հավուց Թառ, որը, նշանակելով «հավքերի՝ թռչունների կամ բազեների թառելու տեղ», հուշում է հնում հավադիտության (հավքերի թռիչքից գուշակության) տեղ լինելը: Հավ=բազե նույնացման մասին է խոսում այն, որ Հավնունի՝ «հավն ունի» կոչված նախարարական տան մարդիկ հայտնի բազեակիրներ ու բազե բռնողներ էին: Ի դեպ, Հավնունիք գավառը, կոչվել է նաեւ Վահագնունիք, որից նկատելի է Վահագն-հավ(բազե) կապը (տես. նաեւ Վահագն¥Վահ=հավ նույնությունը՝ հակառակ ընթերցմամբ): Նշենք, որ մատուռ-ուխտատեղի էր Վանի մոտի Լեզք գյուղում գտնվող Ամենափրկիչ ժայռը: Ասում են, թե այստեղ մեհյան է եղել, ուր արալեզները լիզելով ապաքինել, կենդանացրել են հիվանդներին ու մահացածներին, որից և՝ գյուղի անունը: Այն ավերել է Թադեոսն ու տեղը մատուռ շինել: Այստեղ է Շամիրամը կարգադրել դնել Արա Գեղեցիկի դիակը, որպեսզի արալեզները կենդանացնեն նրան: Իսկ արալեզները՝ երկնաբնակ շնակերպ էակները, որոնք լիզում են մարտում ընկած քաջերի վերքերն ու կենդանացնում նրանց (անունը մեկնաբանվում է՝ «արիներին՝ քաջերին լիզող»), առնչվում են Միհրի խորհրդապաշտությանը: Սրանք են մութ անձավում լիզում Միհր-Արտավազդի շղթաները՝ ջանալով կտրել դրանք:

գ) Մեռելհարոյց վանքերի անունը բխեցվում է «մեռելներին հարություն տալու» Քրիստոսի գալիք առաքելությունից: Սակայն, հաշվի առնելով վերոհիշյալը, նշենք, որ սրանց հները հիմնվել են Միհրի «մեռելհարոյց»՝ քաջերի ապաքինման ու կենդանացման մեհյանների տեղում: Եվ հնուց էր ավանդված մահացածի դին Մեռելհարոյց մատուռներում դնելը՝ թերեւս, մահացածի կենդանացման չգիտակցված հավատով: Օրինակ, Մուշեղ Մամիկոնյանի դին՝ գլուխը կարված իրանին, դրել էին մի աշտարակի վրա՝ հավատալով, թե Մուշեղը քաջ մարդ էր եւ արալեզները կիջնեն ու կկենդանացնեն նրան: Այլ կարծիք էլ կա, թե արալեզները Արայի սպասավորներն էին. օրինակ, Արամազդի աստղ է համարվել երկնակամարի ամենապայծառ աստղը՝ Շնաստղ-Սիրիուսը Մեծ Շուն համաստեղությունում (իրականում եռաստղ է): Այս դեպքում, կարծելի է, որ Մեռելհարոյց հին վանքերը Դիցահոր տաճարատեղերում են:

դ) Առաքելոց կամ Սուրբ Առաքյալ կոչված հին վանքերը (ինչպես Մուշի Առաքելոցը) կարող էին Միհրի

մեհենատեղերում լինել, քանի որ քրիստոնեական խորհրդապաշտությունում Արեգակի տասներկու աստղատները (նմանապես՝ Միհրի նույնքան թիկնապահները) համադրվում են Քրիստոսի առաքյալների հետ: Մուշի Առաքելոց կամ Ղազարի վանքը (4-րդ դար) գտնվում է Ծիրնկատար լեռան լանջին, Արեգակնածագ բլրին: Լեռան վրա եղել է Անահիտի կուռքը, որը կործանել է Գրիգորը եւ տեղը նվիրել վանքին (տես. Միհր-Անահիտ կապը, ինչպես Հոգյաց վանքում): Ասվում է, թե իբր վանքի խորանում են ամփոփված առաքյալների մասունքները, որի համար էլ վանքը կոչվել է Առաքելոց: Խորհրդավոր կապ ենք տեսնում վանքը Ղազարի (Ղազարոսի) անունով կոչելու եւ Արեգակնածագ բլուրի միջեւ. ինչպես Արեգակն է ծագում խավարից, այնպես էլ Քրիստոս հարություն տվեց մեռած Ղազարոսին:

ե) Մեկ այլ՝ Էջմիածին եկեղեցի կար Աղբակ գավառի Ձորադիր գյուղի մոտ (4-րդ դար): Ըստ ավանդության՝ այստեղ էր պահվում Քրիստոսի անձեռակերտ պատկերով թաշկինակն ու Բարդուղիմեոսի գոտին: «Էջմիածին» նշանակում է Միածին-Քրիստոսի (իմա՝ Միհրի) «երկրի հատակ» էջքի տեղ, որը համազոր է ծովի տակ, Դիցամոր մոտ Արեւ-Միհրի հանգրվանելուն եւ Խաղաղական ժամին Քրիստոսի ստորերկիր իջնելուն: Ուստի, այս եկեղեցին եւս Դիցամոր դիվանատեղում էր, ինչպես Մայր տաճարը: Ի լրումն նշենք, որ քրիստոնեական խորհրդապաշտությունում Բարդուղիմեոսի նշանակ է դիտվում մսագործի դանակը՝ ի նշան նրա մորթազերծ լինելուն: Իսկ, օրինակ, Սպանդունիների հայոց նախարարական տունը, որի անունը հիշեցնում է Դիցամոր Սպանդարամետ («զոհատեղերի տիրուհի» նշանակող) կոչումը, սպասարկում էր սպանդանոցները՝ մատաղատեղերը:

զ) Աստվածընկալ են կոչվում Ծովագյուղի մոտի մատուռը, Նիգ գավառի (ներկայիս Ապարանի շրջանի) ներկայումս լքված նույնանուն գյուղի վանքը (5-րդ դար): Ասում են, թե դրանք այդպես են կոչվել, քանի որ «ընդունել են Աստծուն»: «Աստվածընկալ»-ը նշանակում է «Աստծուն ընկալելու՝ հյուրընկալելու տեղ»: Սրանք այն տեղերն էին, ուր Աստված (Արան) երեւում էր մարդկանց եւ հաղորդակցվում նրանց հետ:

է) Աստվածածնի անվամբ հին վանքերը, որպես կանոն, կառուցվել են դիցուհիների տեղերում: Դրանցից մի քանիսը նշանավոր են: Հայոց ձորում, Անգղ գյուղի մոտի վանքը, ըստ ավանդության՝ հիմնել է Թադեոսը նախկին դիվանի տեղում: Երբ վանքի շինմանը խանգարում էին դեւերը, Աստվածածինը նրանց սեւ ագռավներ է դարձնում, եւ անգղների երամը հալածում է դրանց: Պետք է ասել, որ ագռավը Դիցամոր սուրհանդակն է, իսկ ագռավ դարձած դեւերն էլ՝ թերեւս, նրա դիվանի քրմերն էին: Անգղը բնորոշում է Անգեղ Տիրին եւ հոգեառ էակներին: Քրիստոնեական երբեմնի խորհրդապաշտությունում անգղակերպ էին հրեշտակները (տես. անգղ-անգել՝ հրեշտակ նմանությունը): Իսկ ավանդազրույցի անգղերն էլ, թերեւս, ներկայացնում էին հրեշտակներին կամ սեւասքեմ, մեռելադեմ վանականներին:
Բարձր Հայքի Կարին գավառի մի վանք կոչվում էր Հնձուց, որը հուշում է Անահիտի սրբատեղ լինելը. Անահիտը խնամում է հունձը եւ կոչվում է Արտամետ՝ «արտի մայր»: Հայոց ձորի Էրեմեր գյուղի վանքը, որի հիմնումը վերագրվում է Թադեոսին, կոչվում է նաեւ Ծիծաղաբեր, քանի որ վանքն իբր կառուցվել է վայրում, ուր Տիրամայրը ժպտացել է: Սա հուշում է «Ժպտաբեր» դիցուհու սրբատեղ լինելը, որը կարող էր լինել ժպտերես, արեւերես Անահիտը: Վանից հարավ, Ծվստան գյուղի մոտի վանքը կոչվել է նաեւ Կոնկան վանք: Ըստ ավանդության՝ երբ վանքի հնձվորների համար ճաշ էր պատրաստվում, կոունկն իրեն նետում է կաթսայի մեջ: Նրան հանելիս՝ կաթսայի մեջ մի հսկա օձ են գտնում: Մեզանում արգելված է կոունկ սպանելը: Հավատում էին, թե երբ հրացանն ուղղում են կոունկի վրա, նա մի գեղանի հարս է դառնում՝ ծծկեր երեխան կրծքին (հիշեցնում է Տիրամորը՝ Հիսուսին գրկում):
Վանա լճի ափին Լիմ կղզու դիմացի վանքը կոչվում է նաեւ Ասպարածին: Ըստ ավանդության՝ վանքի տեղում կռատուն է եղել, եւ իբր Թադեոսը այստեղ է բերել Աստվածամոր լաչակը, որից և՝ վանքի անունը: Սակայն լաչակի ու ասպարի նույնացումը կամայական է, քանի որ ասպար է կոչվում և՛ վահանը, զրահը, և՛ սաղավարտը: Իսկ մեր ռազմաշունչ դիցուհին Նանեն է, որի նմանակ Աթենասը պատկերվում է վահանով, զրահակիր ու սաղավարտով: Այսինքն, վանքը Նանե-ի տաճարատեղում էր: Եվ, միգուցե, Աստվածածնի տուփի (նույնը՝ լաչակի տուփի) գյուտի տոնը առնչվում է հենց Նանեին: Ալաշկերտի Խուստուր գյուղի մոտի վանքի մասին ավանդությունն ասում է, թե ամեն տարի վայրի ոչխարներ են եկել այստեղ եւ ինքնակամ մատաղվել եկեղեցու շեմին: Ի հիշատակ դրա՝ գյուղացիները նրանց եղջյուրները շարել են եկեղեցու պատին: Սա նախաքրիստոնեական հին սովորույթ էր, եւ

վանքն էլ, թերեւս, նախկին զոհատեղում էր: Այսպիսի մի զոհատեղ էր Եղնիկի աղբյուրը՝ Արցախի Կասապետ գյուղի մոտ: Ըստ ավանդության՝ ամեն տարի մի եղնիկ եկել է այստեղ ու պառկել ջրի մոտ: Գյուղացիները մորթել են եղնիկին ու միսը բաժանել իրար մեջ, իբրեւ Աստծուց ուղարկված մատաղ: Սակայն մի անգամ խախտել են կարգը: Մի քանի գյուղացի սպանել են եղնիկին՝ չսպասելով, որ նա պառկի, եւ միսը յուրացրել, առանց բաժին հանելու մյուսներին: Դրանից հետո աղբյուրի մոտ եղնիկներ չեն երեւացել:
Կան նաեւ շեղումներ: Վանի նահանգի Թիմարի գյուղում գտնվող վանքի մասին ավանդությունն ասում է, թե այս տեղում առաջ Շիրաք, Զիրաք, Միրաք դիցերի կռատունն էր, որը կործանել է Ներսես Մեծն ու տեղը ուրկանոց հիմնել: Եվ եթե կարծելի է, թե Միրաքը Միհրն էր, իսկ Զիրաքը Զարեհը, ապա պարզ չէ Շիրաքի ով լինելը: Թեեւ նկատելի է «Շիրաք»-ի նմանությունը Շիրակ տեղանվանը (գավառ, դաշտ): Հայոց ձորի Խեք գյուղի մոտի Աստվածածին վանքն ավելի վաղ կոչվել է Սուրբ Աբրահամ՝ իբր 5-րդ դարի Աբրահամ Խոստովանողի (Ղեւոնդ երեցի աշակերտի) անունով: Սակայն, ըստ ավանդության, վանքի մոտի բլրին գտնվում է Հայկի գերեզմանը՝ հայտնի որպես Դեւի գերեզման: Ընդ որում, գյուղը Հայկի անունով է (տես. Հայկ-այք-եք բառանցումը), եւ, ըստ ավանդության, այստեղ է Հայկը հաղթել Բելին: Վանքը Հայկի սրբատեղում է կառուցվել եւ դա մոռացնելու համար կոչվել է նրան ժամանակակից բիբլիական Աբրահամի անունով, իսկ գերեզմանն էլ չարամտորեն անվանափոխվել է: Մինչդեռ Հայկի մեկ այլ սրբավայրում կառուցված եկեղեցին, ուր, ըստ ավանդության՝ նա օթեւանել է, կոչվել է Հայկավանք (գտնվում է Վանում, Այգեստան տանող ճանապարհի սկզբին):

ը) Սուրբ Գեւորգ կամ Զորավոր անվամբ հին վանքերը, թերեւս, Վահագնի բագինների տեղերում էին՝ հաշվի առնելով Գեւորգի վահագնակերպ լինելը: Խարբերդի մոտի վանքի հիմնումը վերագրվում է Թադեոսին: Վասպուրականի Տոսպ գավառի Ահեւական գյուղի Զորավոր վանքը՝ Ահավանքը, Վահեւանյան մեհյանի տեղում էր: Խորհրդավոր է Մոկաց Փութկու Գեւորգը կամ Զորավորը (գտնվում է Մոկսից հյուսիս, Արտեւան լեռան վրա): Ըստ ավանդազրույցի՝ այն շինվել է Գեւորգի մասունքով պուտուկի տեղում, ուր քարը պատռվել, ընդունել է պուտուկն ու նորից փակվել: Ասում են, թե վանքի վանահայրը աքաղաղ էր: Առանց այդ աքաղաղի կանչի վանքում իջեւանող քարավանը երբեք ճանապարհ չէր ընկնում: Եվ երբ վախճանվում էր աքաղաղը, ժողովուրդը նոր վանահայր էր կարգում մի բարեպաշտ մարդու երազում տեսած աքաղաղին: Սա այն դեպքն է, երբ կենդանահարգությունից փոխառնված՝ «պատվավոր» պաշտամունքավար էր ընտրվում սուրբ նշանով և վարժեցված որեւէ կենդանի: Իսկ Գեւորգի մասունքով պուտուկը (նեղբերան, լայնափոր կճուճ՝ երկրի նմանությամբ) բնորոշում է անդրերկրում կենող Վահագնին (հմ մտ. արաբների մոտից հայտնի հրածին ջիների հետ, որոնք ապրում էին սափորներում): Եվ աքաղաղն իր թագ հիշեցնող իր կարմիր կատարով, բոց-մորուք հիշեցնող կտուցի տակի կարմրավուն մսագնդով եւ հրախառն հող հիշեցնող կարմրասեւ փետրածածկույթով, նշանավորում է Վահագնին:

թ) Սուրբ Սարգսի անվամբ հին վանքերը, թերեւս, հիմնվել են Զարեհ-Բարշամի կռատներում՝ հաշվի առնելով Սարգսի զարեհակերպ լինելը: Հավանաբար, դրանք քրիստոնեության նախաշեմին քառասունն էին կամ շուրջ այդքան էին. նույնքան էին, ըստ ավանդության, Սարգսի զորականները, իբր որոնց հիշատակին են կառուցվել Սարգսի անունով եկեղեցիները:

ժ) Հնարավոր է, որ քրիստոնեական սրբերի, բիբլիական կերպարների անվամբ հին եկեղեցիները եւս հիմնվել են մեհենատեղերում, քանի որ սրանց դիցերի գործառույթներ են վերագրվել: Հայտնի են Եղիա մարգարեի անվամբ մի շարք վանքեր: Մեզ մոտ Եղիան փոխարինել է ամպրոպային Արամազդին. նա կոչվել է «անձրեւաբեր», եւ ըստ ավանդության, որոտը Եղիայի կառքի անիվների դղրդոցն է, փայլակը՝ անիվների փայլը, իսկ շանթը՝ նրա մտրակի զարկը, երբ նա հրեղեն չորս ձիերով լծված հրեղեն կառքով սլանում է ամպերի վրայով: Հայտնի են նաեւ Անտոն ճգնավորի անունով վանքեր: Ասվում է, թե իբր նրա անունով է անվանակոչվել Անդոկ լեռը, որտեղ նա ճգնել է2: Իսկ Անդոկը խորհրդավոր լեռ է եւ առնչվում է Արամազդին: Այսպես, ըստ ավանդազրույցի՝ Անդոկը մարտի է հրավիրում Մարաթուկին եւ կայծակե թրով երկու մասի է բաժանում նրա գլուխը: Ասվում է նաեւ, որ նրա ընդերքում ծով կա, ուր ապրում են հրեղեն ձիեր, եւ ծովից բխող Պայթող աղբյուրից է դուրս թռել Քուռկիկ Ջալալին: Սպարկերտի Կոտենց գյուղում գտնվող Սուրբ Ստեփանոս վանքի մասին ավանդազրույցն ասում է, թե երբ այս կողմերն է գալիս Քրիստոսը, տղամարդիկ նրան դիմավորում են ձեռքերում վարդ ու ռեհան, իսկ կանայք՝ երեխաներ գրկած: Մի կին, որ երեխա չուներ, քար է վերցնում եւ թեւի տակ դրած ընդառաջ է գնում Քրիստոսին: Քրիստոսի հրամանով քարը երեխա է դառնում: Երեխայի անունը

Ստեփանոս են դնում, որը մեծանալով մարգարե է դառնում: Ըստ մեզ՝ ավանդազրույցը ծես է հիշատակում, երբ խմբված դիմավորում էին դիցի խորհրդավոր գալուստը, եւ չբեր կանայք հղիանալու ակնկալիքով քար գրկած էին դիմավորում նրան (քարը այստեղ խորհրդանշում է չբերությունը): Դա կարող էր լինել Ծաղկազարդին՝ Անահիտին «ընդառաջ գնալու» տոնին, կամ Վարդավառին, երբ Աստղիկին դիմավորում էին վարդերով: Դա կարող էր լինել եւ Նանեի անհայտ դիցատոնին: Այսպես, ռեհան ծաղիկը պարսկական կրոնում նշանավորում էր լեռների ու բովերի (հանքերի, մետաղահալոցների) տեսուչ Շահրիվար ամեշա-սպենտային՝ հրեշտակապետին: Եվ նրա անվամբ ամիսը (սկիզբը՝ ներկայիս օգոստոս 23-ին) համընկնում էր Նանեից իշխվող Կույս աստղատանը: Նանեն եւս լեռների, անձավների, հանքերի տիրուհի է: Ընդ որում, Ստեփան(ոս) անունը հիշեցնում է հայոց աշխարհի բարձրությամբ երկրորդ լեռի Սիփան անունը:

* * *

Մեր որոշ վանքեր կրում են քրիստոնեական խորհրդաբանությամբ չմեկնաբանվող, դիցական պաշտամունքի հետ առնչվող անուններ: Սա հուշում է նախկին տաճարատեղերում դրանց շինված լինելն ու բնորոշում այդ տաճարների դիցապատկանելությունն ու նշանակությունը:

ա) Թերեւս, Միհրի մեհյանների տեղում են կառուցվել Արէգ վանքը Լեռնային Կիլիկիայի Արեգունի սարավանդում, Արեգակ Սուրբ Նշան (նույն Ինն սրբոց գերեզմանք) վանքը՝ Թորդան գյուղում (4-րդ դար), նույնանուն վանքը՝ Փոքր Հայքի Սեբաստիա նահանգում, Արեգունո վանքերը՝ Եղեգնաձորի շրջանում («Արէգ»-ը Միհրի բուն անունն է, իսկ Արեգակը՝ նրա խորհրդանշական լուսատուն):

բ) Արծվաբեր է կոչվել Մուշի մոտի մի մատուռ, Վասպուրականի Ռշտունիք գավառի Աստվածածին վանքը՝ Վանա լճի ափամերձում: Այսպես է կոչվել Տարոնի աշխարհի Աղիհովիտ գավառի Աստվածածին վանք-ուխտատեղը (5-րդ դար): Նախկին անունը եղել է Սուհարավանք, որն ըստ ավանդության՝ Սուհար (Հայկյան Սու՞ր-հեղ.) թագավորի անունից է: Արծվաթռիչ է կոչվել Նոր Բայազետի գավառի Արծվաքար գյուղի վանքը՝ Սեւանա լճի ափին: Կարծում ենք՝ այս տեղերում նախկինում թռչնադիտության տաճարներ էին, ուր արծիվների թռիչքով ու վարքով գուշակություններ էին արվում:
Արծիվը՝ թռչունների արքան, խորհրդավոր է: Նա Դիցահոր սուրհանդակն է (անունը, թերեւս, նշանակում է «Արայի ծիվ՝ ձայն»), խորհրդանշում է իմաստությունն ու սրատեսությունը եւ հանդիսանում է գերագույն քրմության կենդանանշանը: Արծվագորգ է կոչվում արծվի նկարով գորգը, որը գցվում է կաթողիկոսի գահին: Հեքիաթներում արծիվը հերոսին մութ աշխարհից հանում է լույս աշխարհ (ըստ մեզ՝ լուսավորում է նրա խավար միտքը): Արծիվ է կոչվում հյուսիսային համաստեղություններից մեկը: Արծվակիր են հայոց Արտաշեսյան եւ Արշակունյան թագավորների խույրերն ու զինանշանները, նաեւ՝ Մամիկոնյանների զինանշանը: Արծիվը Սյունիքի խորհրդանիշն է («արծվաբույն» է հորջորջվում): Արծիվը նաեւ Արծրունիների տան պաշտելի կենդանին էր. ըստ պատմիչների՝ Արծրունի նշանակում է «արծիվ ունի», նրանք արծվաքիթ էին, մարտում աչքի էին ընկնում արծվային քաջասիրտ ու արի վարքով, արծիվներ էին կրում թագավորների առջեւ, արծվակիր էր նրանց զինանշանը:

գ) Ագռավավանք է կոչվել մի վանք Գուգարքի Ձորափոր գավառում: Այսպես է կոչվում նաեւ մի ավերակ վանք Եղվարդի մոտ, Արայի լեռան լանջին: Ըստ ավանդության՝ օձը թունավորում է ուխտավորների ճաշը, տեսնելով այդ՝ ագռավն իրեն նետում է կաթսայի մեջ: Նման նախապատմություն ունի Տաթեւից Շինուհայր տանող ճանապարհի մոտի Ագռավի աղբյուրը: Ըստ ավանդության՝ երբ Գրիգոր Տաթեւացին երեխա ժամանակ, վանքի գառներն արածացնելիս, այդ աղբյուրից ջուր էր խմում, օձն ուզում է խայթել նրան: Տեսնելով այդ՝ ագռավն իրեն նետում է աղբյուրի մեջ: Օձը նրա փոխարեն խայթում է ագռավին: Տաթեւի վանահայրը ագռավին թաղում է աղբյուրի մոտ եւ անվանակոչում այն: Ագռավախաչ է կոչվում Ծիծեռնավանքի (Սյունիքում) պատի մոտի խաչանման քարը, Ագռավի գերեզման են անվանվում Արցախի Նինկի գյուղի եւ Լոռու Հաղպատ գյուղի մոտի նշանավոր քարերը: Սրանց մասին ասում են, թե այս տեղերում ագռավներ են թաղված, որոնք, ինչպես վերեւում, փրկել են մարդկանց կյանքը:
Ագռավաքար է կոչվել Անձեւաց գավառի Կանգվար գյուղն ու ամրոցը, ուր Դարբնաց քարն էր: Այսպես է կոչվում նաեւ Միհերի դուռ-ժայռը Վանի մոտակայքում, որտեղ նա փակվել է, որն Ուրարտուի նշանավոր դիցավայր էր: Կան նշանավոր քարեր, որոնց մասին զրույցներից երեւում է դրանց հին

պաշտամունքային տեղեր լինելը: Մասիսից հարավ գտնվող քարի մասին ասվում է, թե իբր այստեղ բույն է դրել Նոյի ագռավը: Իսկ Գորիսի մոտի Շոր ձորում գտնվող քարի մասին ասվում է, թե ժամանակին մի պառավ ագռավ է ունեցել, որի հետ սիրով ապրել է: Սակայն երբ մի օր ագռավն անգիտությամբ սպանում է պառավի հավի ճուտերից մեկին, պառավն անիծում է նրան, եւ ագռավը քար է դառնում (պետք է ասել, որ «պառավ»-ը Դիցամորը ծաղրական անունն է):
Ագռավը եւս խորհրդավոր է: Նա Դիցամոր պատգամաբերն է: Ագռավը (նշանակում է «սեւ հավք») խորհրդանշում է հողը, ցամաքը (ինչպես Նոյի ագռավը), եւ հայրենի հողը (նրանք չեն չվում)3: Եվ հիշված զրույցներից երեւում է ագռավի փրկչական կերպարը, որը տարբեր է մեզանում տարածված չարագույժ կերպարից: Այսպիսով, թվարկված տեղերը Դիցամոր պաշտելատեղերն էին:

դ) Հայտնի են վանքերի հարեւանությամբ Արջի գերեզմաններ, որոնցում իբր վանքերին ծառայած արջեր են թաղված: Հոգյաց վանքի մոտի ուխտատեղի-գերեզմանի համար ասվում է, թե այստեղ թաղված արջը վանքը շինելիս փայտ էր բերում անտառից: Մշո Կարապետից ոչ հեռու թաղված արջը, տեղացիների ասելով՝ ծառայել է վանքին (արդյո՞ք Կաղ դեւը չի): Ըստ ավանդության՝ Արցախի Պակսաբերկ հինավուրց եկեղեցու մոտի ուխտատեղի-գերեզմանում թաղված արջը եկեղեցին շինելիս քար էր կրում շրջակայքից: Ալաշկերտի գերեզմանատան մոտ գտնվող Սուրբ Կիրակոս վանքի համար ասվում է, թե երբ վանքում հաց էր թխվում, մի արջ այն տաք-տաք հասցնում էր հարեւան Վարդեհեր վանքի միաբաններին:
Կան նաեւ արջի անունով վանքեր: Օրինակ, Արջակու էր կոչվում Տոսպ գավառի Արճակ (խոսակց. Արջակ, Արչակ) գյուղին Աստվածածին վանքը: Գյուղը հայտնի էր խորհրդավոր վայրերով: Ըստ ավանդության՝ մոտի լճում բնակվում են հրեղեն այր ու կին, եւ ձի: Եվ գյուղի մոտի աղբյուրում էր միշտ լողանում հրեղեն կինը: Ասում են, թե աղբյուրի ջուրը խմողը սիրատենչ ու երգեցիկ է դառնում: Արջոց կամ Աղջոց է կոչվում Արտաշատի Գիլանլար գյուղի մոտի վանքը, որն ըստ ավանդության հիմնել է Գրիգորը, եւ անունն էլ մեկնաբանվում է՝ «աղջիկների» կամ «արջերի» վանք: Արջրո է կոչվում Տարոնի Բզնունիք գավառի Արճեշ (խոսակց. Արչեշ, Արջիշ) քաղաքի մոտի համանուն գյուղի վանքը: Արջնաղբյուր է կոչվում ուխտավայր Սասունում, Տավրոս լեռան լանջին (մոտերքում սառնորակ աղբյուրներ էին բխում): Մեկ այլ աղբյուր էլ կա Արցախի Դիզափայտ լեռան լանջին: Ըստ ավանդության՝ մի արջ անտառից ելնելով՝ սկսում է բարձրանալ դեպի լեռան գագաթը: Երբ ճանապարհին խիստ ծարավում է, հանկարծ աղբյուր է բխում, որից կուշտ խմելով՝ արջը շարունակում է վերելքը: Սակայն տեղ հասնելուն պես շանթահար է լինում: Ի դեպ, Դիզափայտ լեռան մասին ասում են, որ նրա գագաթին հավաքվում էին դիցապաշտները, փայտ դիզում եւ խարույկ վառում, որից և՝ իբր լեռան անունը: Պարզ է, որ լեռը շանթարձակ Արամազդի տեղերից էր, եւ, գուցե, «Դիզափայտ»-ը «Դիցապատի»՝ դիցերի կամ Դիոսի բնակատեղի հնչյունափոխությունն է:
Այս տեղերը նախկինում արջնահարգության տեղեր էին: Արջը Դիցամոր կենդանին է: Նա անտառի տիրակալն է, խորհրդանշում է հողը (մորթին գորշ հողագույն է՝ սեւ, շագանակագույն), նրա զորությունն էլ՝ հողի ծնող ուժը, իսկ արջաքունը՝ հողի ձմեռային հանգիստը: Արջուց էր կոչվում հայոց իշխանական տներից մեկը: Արշակ անունը ծագում է «արջ» բառից (Արշակունի էր կոչվում Արջունի գյուղը եւ Արշակ՝ Արճակի լիճը): Յոթ սանամոր աստղեր է կոչվել Մեծ արջի կամ Շերեփի համաստեղությունը, որի յոթ աստղերը խորհրդանշում են Դիցամոր զավակներին (Սանամայրը Դիցամայրն է. օրինակ, Ծիր Կաթինը՝ Դիցամոր կաթի հետքը, կոչվել է նաեւ Սանամոր հետք:): Ընդ որում, մեր նահապետական տներում «շերեփի տնօրինումը»՝ ճաշի բաժանումը տան անդամներին, նահապետի կնոջ բացառիկ իրավունքն էր:

ե) Ծիծեռնավանք կամ Ծիծեռնակավանք է կոչվում Գորիսի շրջանում գտնվող մի վանք (5-րդ կամ 6-րդ դար): Ավանդությունն ասում է, թե իբր այստեղ է ամփոփված Պետրոս առաքյալի ճկույթը՝ ծիծառը, որից է՝ վանքի անունը: Մինչդեռ վանքի անունները հուշում են նախկինում ծիծեռնակահարգության տեղ լինելը: Ընդ որում, մի ավանդազրույցում բացահայտվում է ծիծեռնակի ու ծիծառի խորհրդավոր կապը: Այսպես, ժամանակին ծիծեռնակը ճարտարախոս ու քաղցարախոս տղա էր, որին ատում էր խորթ մայրը: Մի անգամ մայրը սուտ հիվանդ է ձեւանում ու պահանջում ամուսնուց, որ կտրի երեխայի ճկույթը եւ տա իրեն, որպեսզի ուտի եւ առողջանա: Ամուսինը ճարահատյալ կատարում է կնոջ պատվերը: Սակայն, երբ կտրում են տղայի ճկույթը, նա մեռնում է, իսկ կտրած ճկույթը ծիծեռնակ է դառնում: Այս զրույցում պատանին հիշեցնում է ճարտարախոս Տիրին: Իսկ ճկույթը ձեռնագուշակությունում կոչվում է Տիր-Հերմեսի անունով: Այլ կերպ, ծիծեռնակը Տիրի ճկույթից է ստեղծվել, ինչպես, օրինակ, կատուն՝ Քրիստոսի (իմա՝ Միհրի) թաշկինակից (դեմքից), զույգ մկները՝

Մուհամեդի պնչերից: Ծիծեռնակը մարդասեր է համարվում: Ըստ ավանդազրույցի՝ նա սատկացնում է մոծակին, երբ սա շտապում էր սողուններին հայտնել, որ մարդու արյունն է ամենաքաղցրը: Ծիծեռնակի մոտ ընդգծվում է մկրատաձեւ պոչը, եւ արդյո՞ք սա չի առնչվում մկրտության (պատանի հասակում մազերը կտրելու) դիցական խորհրդածեսի հետ: Ծիծեռնավանք է կոչվել Շատախի Ծիծռան գյուղում գտնվող վանքը (7-րդ դար), որն իբր հիմնել է Ծիծառնիկ անունով մեկը: Ճկույթ էր կոչվում Սասնո Փսանաց գավառի մի վանք, որտեղ իբր ամփոփված էր Պետրոս առաքյալի ճկույթը: Այսպիսով, այս վանքերը Տիրի տաճարների տեղում էին: Մեհենական ծիծեռնակաբույն էր Ծիծեռնակաբերդը, ուր, ըստ ավանդազրույցի, Աստղիկի տաճարն էր, որի տանիքում բնակվող ծիծեռնակները Աստղիկից լուրեր էին տանում Վահագնին (ըստ մեզ, զրույցում տաճարի պատկանելության շուրջ սխալ կա, քանի որ Աստղիկի նամակատարն աղավնին է):

զ) Դեւոցա է կոչվում Սեբաստիա քաղաքին մոտ համանուն գյուղի Սուրբ Գեւորգ վանքը, որտեղ, ըստ ավանդության, առաջ դեւեր են ապրել: Ասում են, թե ժամանակին վանքի մոտ մի վիշապ օձ է հայտնվել ու մեծ վնաս հասցրել վանքին: Վանահոր անեծքով վիշապը իբր քար է դարձել, որից հետո վանքը կոչվել է Գեւորգի անունով: Ընդ որում, Դեւոցա գյուղը համընկնում է հին Դազոնա ավանին: Այսպես է կոչվում փյունիկեցիների ռազմի դիցը (արդյո՞ք Վահագնի նմանակը չէ): Դեւեբոյնի է կոչվում Ռշտունիք գավառում, Դավաբոյնի հրվանդանի մոտ գտնվող վանքը, որն իբր այսպես է կոչվել մոտի քարայրներում դեւեր բնակվելու պատճառով (Դեւեբոյն նշանակում է «դեւերի բույն»): Ի դեպ, կան Դեւեբոյնի անունով մի շարք լեռներ: Այս տեղերը ոչ միայն մեհենավայրեր, այլեւ հալածված քրմերի բնակատեղեր էին, քանի որ վաղ միջնադարյան աղբյուրներում դիցերին ու քրմերին դեւեր են կոչում:

է) Ծաղկավանք են կոչվում մի քանի ուխտատեղի մատուռներ: Գեղարքունիքի Սարուխան գյուղի մոտի մատուռի մասին ասում են, թե առաջներում այստեղ ուխտի էին գալիս ծաղիկ հիվանդությունից բուժվելու համար: Արայի լեռան լանջին գտնվող քարայր-մատուռը, որն ուխտատեղ էր նաեւ թրքերի ու քրդերի համար, կոչվում է նաեւ Վառվառա կույս: Ըստ ավանդության՝ քրիստոնեություն ընդունելու համար հորից հալածված Վառվառա կույսը թաքնվում է այս այրում: Հայրը գտնում է նրան ու նահատակում: Մեռնելուց առաջ կույսը խնդրում է Աստծուն, որպեսզի ծաղիկով հիվանդները բժշկվեն: Այլ տարբերակով՝ Վառվառան Գայանեի ու Շողակաթի քույրն էր եւ հալածվում էր Տրդատից: Մեռնելուց առաջ նա պատվիրում է, թե ինչքան կույր լինի, իր դուռը գա բժշկվելու (այրում ջուր է ծորում, որն աչքերի բուժիչ է): Ծաղկեվանքերը, թերեւս, Աստղիկ դիցուհու պաշտելատեղերն էին. ծաղիկ հիվանդությունը նրա պատիժն էր եւ նրան էին դիմում բժշկվելու համար: Կույսի անունը հիշեցնում է «Վարդավառ»-ը եւ Ծովիան -Աստղիկի վառվռուն երեսը: Գայանեի եւ Շողակաթի եկեղեցիներն Էջմիածնում հիմնվել են Նանեի ու Անահիտի մեհենատեղերում: Եվ իրականում Վառվառա կույսը Աստղիկի տաճարի քրմուհի էր, որին նահատակեցին նորաթուխ, մոլեռանդ քրիստոնյաները: Ծաղկոցավանք էր կոչվում մի անսովոր տեսքով վանք Արցախի Փառիսոս գավառում, որը ժամանակին կուսանոց էր իբր Ծաղիկ մայրապետի անունով (հիշեցնում է Աստղիկի «ծաղկամայր» կոչումը):

ը) Շատ վանքերի անուններ առնչվում են գույների հետ, ինչպես Ծիրանավոր, Կարմրավոր, Սպիտակավոր կոչված վանքերը: Սա գալիս է դիցական պաշտամունքից եւ պայմանավորված չէ կառույցի գույնով, չնայած մասամբ սա էլ կարող է տեղ գտած լինել: Դիցական պաշտամունքներում տաճարների գունային ձեւավորումը համահունչ էր դիցերի բնույթին: Այս դեպքում, միգուցե,
- Ծիրանավոր վանքերը Դիցամոր պաշտամունքային տեղերում են. «ծիրանի ծովը» նրա օթեւանն է, ծիրանը՝ բարիքը, Ծիր կաթինը՝ կաթի հետքը, ծիրանի (դեղձուն) են նրա ծամերը:
- Կարմրավորները Վահագնի տեղերում են. կարմիրը Վահագնի խորհրդանշական գույնն է: Որպես կանոն վանքերի անունը կապում էին պատերազմիկ նահատակների արյան հետ, եւ շատ անգամ Վարդան Մամիկոնյանի հետ, հանձին նրա Հայ եկեղեցին մարմնավորել է հայոց ռազմի ուժը,
- Սպիտակավորները Դիցահոր տեղերում են. սպիտակը Արամազդի խորհրդանշական գույնն է:

թ) Շատ վանքեր հայտնի են նաեւ այն գյուղերի, ավանների անուններով, որտեղ նրանք գտնվում են: Եվ այդ բնակատեղերի անուններից շատերը դիցական վայրեր են հիշեցնում: Այսինքն, դրանք վանքերի տեղերում եղած մեհյաններին սպասարկող, մեհենապատկան բնակատեղեր էին: Օրինակ, վերջին շրջանի գլխավոր մեհյանները ավաններում էին:

* * *

Մեր որոշ վանքերի հետ կապված ավանդազրույցները, որոնք եղածը ծպտող այլաբանական զրույցներ են, վկայում են նախկին տաճարատեղերում դրանց շինված լինելը: Ներկայացնենք դրանցից ակնառուները:

Գնդեվանք (գտնվում է Վայոց ձորի Գնդեվազ գյուղին մոտ). Կառուցումը վերագրվում է Սյունաց Սմբատ իշխանի Սոփիա դստերը կամ կնոջը, որը գմբեթի կառուցումը ավարտելու համար վաճառում է իր գինդերը (ականջօղերը): Մեկ այլ ավանդությամբ՝ վանքի առաջին վանահայրն էր Օվանես անունով մեկը, որ ծերունի էր ու նստած էր աղոթում, ինչի համար նրան Գունտ Օվանես էին ասում: Նրա անունով է իբր վանքը կոչվել Գունտ Օվանեսի=Գնտավազ, հետո՝ Գնդեվանք: Ըստ մեզ՝ Գունտ Օհանեսը հիշատակում է Կունդ Արամազդին: Օհանես անունով է հիշատակվում շումերական դիցաբանությունում կիսաձուկ-կիսամարդ հերոսը, որը ելնելով ծովից՝ անասունի պես ապրող Միջագետքի բնակիչներին սովորեցնում է գիր եւ բազում գիտելիքներ: Նրա նման էին Հայոց աշխարհը բնորոշող Էյա-Հայա ստեղծարար դիցի ուղեկիցները: Այսինքն, Գնդեվանքը հիմնվել է Արամազդի տաճարատեղում:

Կեչառիս (գտնվում է Ծաղկաձորի մոտ). Պահլավունյաց տոհմի իշխանազն օրիորդներից մեկի պատվերով այս ձորահովտում ամրոց է կառուցվում, կողքին էլ՝ շքեղ ծաղկանոց, որտեղ աճում էին մեր աշխարհի ամենագեղեցիկ ծաղիկները: Սակայն գարնանային քամին ավերում է ծաղկանոցը եւ ծաղիկները ցրում ձորով մեկ: Օրիորդը պահանջում է հորից՝ ամրոցի մոտ վանք կառուցել, որպեսզի վանականներն օր ու գիշեր աղոթեն եւ ցրված ծաղիկները վերադարձնեն: Սակայն վանականների աղոթքը անլուր է մնում, ձորահովիտը լցվում է ծաղիկներով եւ ձորն անվանվում է Ծաղկաձոր (վանքի անունը չի մեկնաբանված): Ըստ մեզ՝ այստեղ Աստղիկին ձոնված ծաղկանոց էր:

Մարդաղավնյաց կամ Հազարափրկիչ (գտնվում է Հին Նախիջեւանի Առինջ գյուղին մոտ). Լենկ Թեմուրը գերում է Սյունիքի բնակիչներին եւ փակում այս վանքում: Հովհաննես եպիսկոպոսը, որը կարող էր գետի վրա քայլել, Սուրբ Նշանի զորությամբ գերիներին աղավնի է դարձնում, որոնք լուսամուտից դուրս են թռչում ու փրկվում: Ըստ մեզ, մարդաղավնիները հիշատակում են Աստղիկի աղավնակերպ քրմուհիներին, իսկ Սուրբ Նշանը՝ Աստղիկի խորհրդանշական խաչը: Դա կարող էր լինել Զկներ աստղատան i խորհրդանիշը հիշեցնող X խաչը (ուշագրավ է, որ Էյան՝ իրենից բխող չորս գետերով, նման խաչի է նմանվում): Այսինքն, այս վանքի տեղում Աստղիկի տաճար եւ աղավնատուն էր:

Աղավնատուն (գտնվում է Լոռիում). Մի իշխան շենք է շինում բացատում: Շահմար (արքայիկ-հեղ.) օձը, տեսնելով որ իր տեղերում մարդիկ են հայտնվել, հրամայում է օձերից մեկին թույն թափել բանվորների ճաշի կաթսայում: Տեսնելով այդ՝ մի սպիտակ աղավնի ճարահատյալ իրեն նետում է կաթսան: Աղավնուն շուքով թաղում են եւ տեղում մատուռ հիմնում: Այսինքն, այս վայրում եւս աղավնատուն էր: Ընդ որում, ավանդազրույցը նման է Կոնկան վանքի, «ագռավաքարերի» հետ կապված զրույցներին՝ մի տարբերությամբ, որ «փրկիչ» է հանդես գալիս աղավնին: Եվ այս զրույցներում, թերեւս, հիշատակվում է մեր որոշ տեղերում օձնահարգության փոխարինումը թռչնահարգությամբ:

Եղնախաչ (գտնվել է Զանգեզուրում). Մի որսորդ հալածել է եղնիկներին, որոնք փախչելով այստեղ, աներեւութացել են: Որսորդը սուրբ է համարել վայրը, ճգնավոր է դարձել եւ տեղում մատուռ կառուցել, որին տեղացիները Եղնախաչ են կոչել: Ըստ մեզ՝ սրա տեղում Անահիտի եկեղեցի էր, քանի որ եղնիկը Անահիտին ուղեկցող կենդանին է: Եվ, միգուցե, Եղնախաչն էլ Անահիտի խորհրդանշական Արուսյակ (Վեներա) մոլորակի նշանագիրն է (Արուսյակը հնում կոչվում էր Եղջերու):

Կարմիր վանք (գտնվում է Սիսիանի Շոռոթ գյուղին մոտ). Ասում են, թե այս վանքը շինել են մի աղջիկ ու եզ: Եզը կրել է քարերը, իսկ աղջիկը մենակ շարել պատերը: Սրանք հիշեցնում են մեր հրաշապատում հեքիաթների զույգը՝ հրաշապոզ Վարդիկ եզը (կովը) եւ հեզաբարո աղջիկը (իմա՝ ծպտված Անահիտը):

Պառավի կամ Իլիկի վանք (գտնվում է Նոր Բայազետի Լանջաղբյուր գյուղի մոտ). Այստեղ իբր թաղված է մի բարեպաշտ պառավ, որն իլիկ մանելով փող է վաստակել ու վանք կառուցել: Պառավը, թերեւս,

Դիցամայրն է, իլիկ մանելը հիշեցնում է՝ տիեզերական խառնիխուռն նյութից աստղային նյութի ստեղծումը, իսկ իլիկը՝ գալակտիկաների առանցքը, որի շուրջ խմբված պտտվում են աստղերը (հայտնի են իլիկանման գալակտիկաներ, որում աստղանյութի բաշխումն ավելի համասեռ է): Այսինքն, վանքը հիմնվել է Դիցամոր դիվանի տեղում: Կարելի է թվարկված տեղերը լրացնել մանրակրկիտ ու բազմակողմանի ուսումնասիրության պարագայում: Ամենախորհրդավորն այն է, որ վերոհիշյալ նշանավոր վանքերը գրչության հայտնի կենտրոններ էին: Այստեղ են գրվել ու ընդօրինակվել ձեռագրեր ու ավետարաններ, ուսանել ու գործել հայտնի եկեղեցական այրեր ու հասարակական գործիչներ: Մեր բարեգութ, բարեկամ ու ամենախնամ դիցերը շարունակել են նախախնամել հայերիս, թեեւ մենք երես դարձրինք նրանց:

Վարդան Լալայան

1 - Ըստ մեզ, Դարբնաց քարը Միհրի պաշտելատեղ էր, քանի որ դարբինները Միհրի խորհրդածեսերի դերակատարներ էին, իսկ Անահիտի կուռքի այստեղ գտնվելը պայմանավորված էր Անահիտ-Միհր զուգակցությամբ: Ասում են, թե Հոգյաց վանքում ժամանակին ծառայում էր Կուդրութ անունով մի կաղ դեւ, որը կոտրել էր ոտքը եւ չէր հասցրել փախչել: Նա ամեն օր վանքի մոխիրը հավաքում ու թափում էր գետը: Իսկ կաղ դեւին նմանեցնում են Հեփեստոսին՝ Միհրի հունական փոխանակին: Թեեւ, չի բացառվում, որ Կուդրութը հալածված քրմերից էր:
2 - Հնում քրիստոնեական վատ ավանդույթ էր՝ լեռների անունները բխեցնել ճգնավոր-սրբերի անուններից, ուր իբր նրանք ճգնել են. օրինակ. Սուկավետը՝ Սուքիասյան ճգնավորներից, Անդոկը՝ Անտոնից, Մարաթուքը՝ Մարութանից, Սիփանը՝ Ստեփանոսից:
3 – կարծիք կա որ ագռավը Միհրի ուղղեկից թռչունն է՝ հիմք ընդունելով Փոքր Մհեր-Միհրի Ագռավաքարում փակվելը: Ըստ մեզ՝ սա համահունչ է Դիցամոր մոտ Միհրի հանգրվանելու խորհրդապաշտությունը:

- -

Դիցական պաշտամունքի տարրերն առկա են քրիստոնեական պաշտամունքի այլեւայլ կողմերում եւս: Ներկայացնենք դրանցից առավել տեսանելիները:

Պատկերներ . Սկզբնական քրիստոնեությունում արգելվում էր երրորդության դեմքերի, սրբերի պատկերումը (նկար, արձան, քանդակ եւ այլ ձեռակերտեր) եւ պատկերապաշտությունը, որը բնորոշ էր դիցական պաշտամունքին: Այդ պատճառով, օրինակ, մինչեւ 7-րդ դարը Քրիստոսին պատկերում էին խորհրդանիշներով (ձուկ, գառ, էշ, ավելի ուշ՝ խաչ, արեւ): Պատկերապաշտության ներթափանցման արդյունքում արեւմտյան եկեղեցիներում տեղ գտավ պատկերապաշտների ու պատկերամարտերի (սրբապատկերների գործածության հակառակորդների) անզիջում պայքարը: Եվ միայն Նիկիայի 7-րդ ժողովում (787թ.) վերջնականապես ընդունվեց պատկերապաշտությունը: Ներկայումս այն ընդունում են կաթոլիկ, ուղղափառ եկեղեցիները, իսկ բողոքական եկեղեցիները մերժում են պատկերապաշտությունը: Հայ եկեղեցին ընդունում է պատկերահարգությունը՝ ակնածանքը սրբապատկերների հանդեպ՝ թերեւս, դրանում ընդօրինակելով հայերիս բնորոշ վերաբերմունքը դիցերի ու դյուցազունների պատկերների նկատմամբ: Այն ի տարբերություն պատկերապաշտության, կռապաշտություն (ֆետիշիզմը) չէ: Հայ եկեղեցում ընդունված են նկարները, հարթաքանդակները, ձեռագործերը: Կաթոլիկ եկեղեցում ընդունված են նաեւ արձանները: Կարծիք կա, որ մեր եկեղեցում սրբապատկերների գործածությունը եղել է ի սկզբանե, ու նախապատմությունն էլ գալիս է դեռ առաջին դարից (ըստ մեզ՝ սրան նպաստել էր հայերիս պատկերաստեղծ բնատուր շնորհը): Ըստ ավանդության՝ Աբգարին էին բերել Հիսուսի անձեռակերտ, «կենդանագիր» պատկերը՝ նրա դաստառնակը (թաշկինակն) իր իսկ դիմապատկերով, որն իբր Հիսուսը դրել էր երեսին, ու դեմքը դաջվել էր դրա վրա, եւ որն իբր պահվում էր Եդեսիայում1: Մեկ այլ ավանդությամբ, Բարդուղիմեոսը Հայաստան էր բերել փայտի վրա նկարված Տիրամոր պատկերն ու տեղադրել Բութ լեռան վրայի մեհենատեղում կառուցված կուսանոցում:

Կուռքերի (ձեռակերտերի) հարգումն ունի իր խորհրդավորությունը: Հմայության կանոններով հավատում էին, թե դիցերի ու դյուցազունների պատկերները լցվում են նրանց զորությամբ եւ ճառագում շրջապատում: Կարծիք կա նաեւ, թե ժամանակին մարդկանց արձանները նրանց

աճյունների անոթներն էին, ինչպես եգիպտական սարկոֆագները, որի համար էլ սովորության համաձայն կենդանի մարդկանց պատվին արձան չի կանգնեցվում: Վերջերս պարզվել է, որ բուդդայական որոշ արձաններ սնամեջ են ու ներսում մումիաներ են դրված: Հայոց շատ տապանաքարեր սնդուկներ են հիշեցնում եւ չի բացառվում, որ ժամանակին դրանք եւս իբրեւ աճյունների անոթներ են ծառայել:

Անդաստան. Հայ եկեղեցու ծեսերից են անդաստանները: Անդաստանը արտերի, այգիների, բերքի եւ անասունների օրհնությունն է: Այն նախապես արվում էր բնության գրկում, նախընտրաբար բլուրի վրա, որից կերեւար աշխարհի չորս օրհնվելիք կողմերը: Ավելի ուշ, բնակլիմայական պատճառներով, այն արվում էր եկեղեցու բակում, ապա եւ ատյանում (թերեւս, սրա հիմնական պատճառը ծեսի նկատմամբ եկեղեցու անսկզբունք մոտեցումն էր): Անդաստանը ներմուծվել է մեհենական պաշտամունքից եւ, ըստ էության, բնության զարթոնքին ու պտղաբերությանն ուղղված հմայածեւ է: Դրանք արվում են գարուն-աշուն ժամանակ ընկած տոներին՝ առավոտյան ու երեկոյան: Ձմեռային տոները, բացի Տրնդեզից, անդաստան չունեն: Դրանք տասնհինգն են եւ արվում են Ծաղկազարդին, Զատկին, Կրկնազատկին, Կանաչ ու Կարմիր կիրակիներին, Երեւման խաչատոնին, Հինանց 6-րդ կիրակի, Համբարձմանը, երկրորդ Ծաղկազարդին, Հոգեգալստին, Էջմիածնի եկեղեցատոնին (տոնվում է Լուսավորչի բարեկենդանից մեկ շաբաթ առաջ), Վարդավառին, Վերափոխմանը, Սուրբ Խաչին, Տրնդեզին: Նկատելի է, որ դրանցից ինն արվում են բնության գարնանային զարթոնքին, իրար հաջորդող տոներին՝ ութ շաբաթվա ընթացքում:

Աղոթք. Եկեղեցին ընդունում է աղոթքի հետեւյալ երեք ձեւերը. ա) «ձեռն ի վեր»՝ բաց ափերը վեր պարզած՝ թեւերը մարմնին կից պահելով, բ) «բազկատարած»՝ թեւերը խաչաձեւ պահած, գ) «ձեռնամած»՝ երկու ափերը կրծքի վրա իրար հրպած: Առաջինը որպես կանոն արվում է ոտնկայս ու երկնային դիցերին ուղղված աղոթքի ձեւերից է, որի նպատակը նրանցից արիություն, բարություն ստանալն է (ձեռքի բաց ափերը հաղորդիչների դեր են խաղում): Այս պահին մարդը նմանվում է երրորդությունը խորհրդանշող եռաթեւ աշտանակին, Ա=?-ին՝ Արարչի իմաստագրին, եռաժանուն՝ հունա-հռոմեական դիցաբանության ծովերի տիրակալ Պոսեյդոն-Նեպտունի2 գործիքին: Շատ անգամ այս դիրքով էին պատկերվում դիցերը. Միհրը՝ ջահեր բռնած, ջրերի դիցերը՝ ձեռքերում ջրահոս սափորներ, նաեւ Զրհոսի աստղատան իշխան դիցը, որի սափորներից հոսող ջրերը Տիգրիսն ու Եփրատն են: Այսպես են պատկերվել մեզանում կենդանաշրջանի մարդակերպարները (իմա՝ դիցերը). Խոյը-այր՝ բռնած սուր եւ խափշիկի կտրված գլուխ, Երկվորյակը-երկգլուխ այր՝ ձեռքերում գիրք եւ կտրված գլուխ, Կույսը-կին՝ կանաչ ոստեր բռնած, Կշեռքը-կին՝ ձեռքերում կշեռքի նժարներ, Կարիճը-աղջիկ՝ զույգ կարիճներով, Զուկը- ծերունի՝ զույգ ձկներով:

Աղոթքի մյուս երկու ձեւերն արվում են ծնկաչոք ու ոտնկայս, սովորաբար փակ աչքերով: Սրանք ինքնամփոփ, մտախոյանք (մեդիտացիա) հիշեցնող աղոթքներ են, երբ ձեռքի ափերը հպվում են ուսերին կամ իրար (էներգետիկ շղթան փակվում է), աչքերը գոցվում են, եւ մարմինը գործում է որպես փակ համակարգ: Այս դեպքերում պաշտպանված է արեւհայրոցը՝ մարդու էներգետիկ կենտրոնը, աներեւույթ չար ուժերից խոցելի, մահացու մարմնակետը: Բազկատարած աղոթքի ձեռքերի դիրքը նույնն է, ինչ եգիպտական փարավոնների մումիաների ձեռքերի դիրքը: Ծնկաչոք աղոթքը, ճակատով գետնին հպումն ու համբուրումը (իմա՝ երկրպագությունը) ստորերկրյա դիցերին ուղղված աղոթքի ձեւերից է: Ընդ որում, ծնկի վրա ազդում է Այծեղջյուրը՝ Դիցամորից իշխվող աստղատունը: Ծնկաչոք աղոթքի դիրքը հիշեցնում է երեխայի ներարգանդային, ինչպես եւ հնում մեր ու որոշ ազգերի հանգուցյալների դիրքը (սրանում տեղ է գտել ծնունդ, մահ, նոր ծնունդ խորհրդածումը): Ի դեպ, իսլամում ընդունված է ծնկաչոք աղոթքը: Թերեւս, սրա պատճառը նախաիսլամական դիցաբանությունում Ալլատ կամ Ուզզու դիցամոր (Ալլահ դիցահոր կնոջ) հեղինակավոր պաշտամունքն էր:

Կուսակրոնություն. Ասում են, թե կուսակրոն լինելով նըմանվում են երկնային հրեշտակներին, որոնց մեջ արու եւ էգ չկա: Հայ եկեղեցում պարտադիր կուսակրոն են կաթողիկոսը, եպիսկոպոսներն ու վարդապետերը: Այս կարգը սկզբում չկար: Առաջին եպիսկոպոսներն ու հայրապետերը (Գրիգոր, Վրթանես, Հուսիկ) կուսակրոն չէին: Թեեւ կամովին կուսակրոն էր Արիստակեսը՝ Գրիգորի փոքր որդին: Դրանց կուսակրոն լինելը սահմանվեց Ներսես Մեծի օրոք, որպեսզի կաթողիկոսական գահը մշտապես չժառանգվեր Գրիգորի տոհմի կողմից: Կուսակրոն չէին նաեւ վերջին շրջանի հայոց

քրմապետերը. օրինակ, Արձան քրմապետը ուներ Դեմետր անունով որդի, որը զոհվեց հոր կողքին:

Սակայն մեզանում դեռ 4-րդ դարից կային «անապատական» կոչված կուսակրոն ճգնավորներ, ովքեր մենակ կամ խմբերով ապրում էին անշեն, անմարդաբնակ վայրերում, անձավներում եւ սնվում էին բույսերով, արմտիքով, պտուղներով: Ի դեպ, «անապատ»-ը նշանակում է անշեն, անբնակ («ապատ»-ը նշանակում է շեն, բնակավայր): Անապատական էին Արիստակեսն ու Վրթանեսի որդի Գրիգորիսը՝ Վրաց ու Աղվանից կողմերի կաթողիկոսը: Կյանքի վերջում անապատական դարձան նաեւ Գրիգորն ու Տրդատը: Հիշատակվում են 4-րդ դարի այլ նշանավոր անապատականներ եւս. ասորի Դանիել քորեպիսկոպոսը՝ Տարոնի եկեղեցիների վերակացուն, Մեծ Հայքի եկեղեցիների կարգադրիչը, տեսուչն ու հոգաբարձուն, որին փորձում էին Հուսիկից հետո կաթողիկոս նշանակել, սակայն հանդիմանության համար սպանվեց Տիրանի կողմից: Անապատական էին նաեւ Դանիելի աշակերտներ ասորի Շաղիտան եւ հույն Եպիփանը, Բասենի Արտիթ եպիսկոպոսը, հույն Փավստոս եպիսկոպոսի (ըստ ոմանց՝ Փավստոս Բուզանդի) եղբայր Առոստոմը, տարոնցի Գինդը՝ աբեղաների գլխավորն ու վանքերի վերակացուն, անապատականների վարդապետն ու առաջնորդը: Թերեւս, անապատական էր եւ Գրիգոր Նարեկացին: Ուշագրավ է, որ նրանք ճգնում էին նախկին դիցական վայրերում կամ նշանավոր լեռներում: Դանիելը հաճախ էր լինում Աշտիշատում Վահագնի նախկին բագինի մոտի Հացյաց դրախտ կոչված պուրակում, որտեղ էլ թաղվեց: Շաղիտան բնակվում էր Առյուծ լեռան վրա (գտնվում է Բյուրակն-Մնձուրյան լեռներում, Եկեղյաց գավառի սահմանագլխին), իսկ Եպիփանը՝ Մեծ լեռան վրա, Անահիտի աթոռ կոչված նախկին մեհենավայրում (գտնվում է Երիզա ավանից ոչ հեռու): Գինդը բնակվում էր Եփրատի ակունքների մոտ՝ Ոսկիք կոչված ժայռաճեղքերում, իբր Գրիգորի նախկին ճգնավայրում: Իսկ հայտնի է, որ գետերի ակունքները դիցական վայրեր են դիտվել, եւ դրանց մոտ ձկնակերպ (նհանգների՞ - հեղ.) կոթողներ են դրվել: Խորհրդավոր է եւ Գրիգորի ու Տրդատի ճգնելու ու նույն տեղում էլ մեռնելու վայրը՝ Սեպուհ լեռը: Ըստ ավանդազրույցների, Սեպուհի վրա կախված է Տրդատի հավլունի թուրը (իմա՝ Միհրի թուրը - հեղ.), որը նրանից առնելով երկինք է նետել Լուսավորչը, սակայն այն գետին չի ընկել եւ խաչի ձեւով մնում է օդի մեջ կախված: Խաչի շուրջը փայլում է շրջանաձեւ մի շող, որը Լուսավորչի (իմա՝ Միհրի-հեղ.) երկնքից անպարան կախված մշտավառ կանթեղի լույսն է: Թուրն ու կանթեղը միայն արժանավորներին են տեսանելի: Եվ ով տեսնի դրանք ու բռնի սուրը, նա էլ կազատի մեր ազգին (ըստ մեզ, կվերականգնի հայոց աշխարհակալ փառքը՝ խամրած Տրդատի ու Գրիգորի ձեռքով, ովքեր հայոց փառքի խորհրդանիշ սուրը դեն նետեցին): Սեպուհի գագաթին է գտնվում մի գերեզման, որից, ըստ ավանդության, ժամանակ առ ժամանակ կայծակներ են ճայթում ու որոտում: Տեղացիների ասելով դա անողը գերեզմանում թաղված Սեբեն է: Արդյո՞ք այս տեղը շանթարձակ Արամազդի պաշտելատեղ չէր, եւ խորհրդավոր Սեբեն էլ Սեպուհի անվանադիրը չէր (տես. նաեւ Սեբե-Սիփան-Ստեփան նմանությունը): Լեռն, իբր այստեղի այրերում ճգնած Հռիփսիմյաններից մեկի՝ Մանի կնոջ անունով, անվանվել է Մանյա այրք, որն ավելի շուտ խոսում է Դիցամոր սրբատեղերի մասին, քանի որ «Մանի»-ն նրա անուններից է (նշանակում է եւ ծնող, եւ ծին):

Անապատականների մեծ հեղինակությունը, զբաղեցրած բարձր պաշտոնները, սրբակենցաղ դիտվող վարքը մտորելու տեղիք են տալիս հայոց մոտ մեհենական այսօրինակ պաշտամունքավարների գոյության մասին: Մեր կարծիքով դրանք շրջիկ, լեռնաբնակ ու անձավաբնակ միայնակյաց քրմեր էին, ովքեր խորհրդավոր վայրերում ճգնելով ու մտախոյանքներով կատարելության էին ձգտում դիցա-աշխարհաճանաչողությունում, մարզում էին հոգին ու մարմինը, պայծառացնում էին միտքն ու տարածում դիցական իմաստությունները, ինչպես սուֆիական դերվիշները, հնդկական յոգերն ու արեւելյան մարտարվեստների հոգեւոր ռահվիրաները:

Կուսանոցներ. Դրանք բնորոշ չեն Հայ եկեղեցուն, թեեւ ըստ ավանդության Բարդուղիմեոսը Բութ լեռան վրայի մեհյանը վերածեց կուսանոցի, եւ Գրիգորը վերստին հաստատեց դա: Ներսես Մեծը եւս իր ժամանակին հիմնեց կուսանոցներ, սակայն Պապը ցրեց դրանք եւ կույսերին էլ պարտադրեց պսակվել:

Կուսանոցների հիմնումը բխում էր Մարիամի անարատ հղիության հավատքից՝ որպես նրա մտացածին խստակյաց վարքի նմանակում (իրականում Մարիամը ամուսնուց այլ զավակներ ուներ, որոնցից Հակոբը Հիսուսի երեւելի հավատակիցն էր): Սակայն դրանց նախատիպերն առկա էին դիցական պաշտամունքում: Դրանք կույս քրմուհիների ուխտերն էին՝ պայմանավորված պաշտվելիք դիցուհու կույս լինելով կամ պաշտամունքի բնույթով: Կույս էին Հռոմում Վեստայի տաճարի

քրմուհիները, ովքեր ընտրվելով 6-10 տարեկան աղջիկներից եւ պարտավորվելով պահել կուսությունն առնվազն մինչեւ 30 տարեկան, օր ու գիշեր վառ էին պահում տաճարի հուրը: Արգելքը խախտող քրմուհիներին ողջ-ողջ թաղում էին պատի մեջ (երեւի թե, մեղավորի հոգին քարում բանտարկելու հավատալիքով, ինչպես հեքիաթներում եւ ավանդազրույցներում «քարացվում» էին մեղսագործները)3:

Ընդ որում, կույս էին թե Վեստան, թե նրա հունական նախատիպ Հեստիան՝ բնակատեղի, հայրենիքի անշեջ հրո պահապան դիցուհիները (մեր Նանեին եւս վերագրվում է նման գործառույթներ): Կույս էր Աթենասը՝ Զեւսի խորագետ, ռազմաշունչ եւ սխրանքների կոչող դուստրը, պետական կարգի նախախնամողը, ով հովանավորում էր Հելլադայի քաղաքները: Նրա անունով է Աթենքը4: Նրա նմանակը Նանեն էր՝ Արամազդի խորամիտ, կույս դուստրը, դյուցազուններին ի զեն կոչողն ու խորհրդատուն, ինչպես էպոսի «նանին», որը հայտնում է Դավթին Սասունին սպառնացող վտանգի ու նրանից ծածուկ պահված պապենական զենք ու զրահի մասին: Թերեւս, Աթենասի ու Նանեի տաճարի քրմուհիները եւս կույս էին: Կույս էին գուշակություններով հանրահայտ պյութիաները՝ Դելփիքի Ապոլլոնի տաճարի (Պյութոսի) քրմուհիները, Հին աշխարհով մեկ սփռված մարգարեուհիները՝ սիբիլլաները: Ոմանք պյուռոսյան սիբիլլային կոչում էին հայկական սիբիլլա, իսկ ոմանք առաջին սիբիլլա էին համարում հայերի բիբլիական նախահոր՝ Հաբեթի կնոջը: Անուններից զատ նմանություն է նկատվել Պյութոսի ու Բութ լեռան մեհյանի միջեւ: Նախկինում Պյութոսը Գեայի ու Թեմիդայի պատգամատունն էր, որն իբր պահպանում էր Գեայից ծնված հսկա Պյութոն օձը: Ապոլլոնը սպանում է օձին ու պատգամատան տեղում տաճար է հիմնում: Գեան=Երկիրը՝ Ուրանի=Երկնքի կինը նախաօլիմպիական շրջանի դիցամայրն էր, իսկ Թեմիդան՝ նրա դուստրը, Զեւսի երկրորդ կինը, արդարադատության դիցուհին (երբեմն պատկերվում էր փակ աչքերով ու կշեռքով եւ նմանվում հռոմեական Նեմեսիդային՝ արդար պատժի ու վրեժխնդրության դիցուհուն): Ոմանք Թեմիդային նույնացնում են Գեային (տես. նաեւ Թեմիդա եւ շումերական դիցամոր Թիամատ անունների, Թեմիդայի արդարադատ ու մեր դիցամոր հոգիներին դատելու գործառույթների նմանությունը): Իսկ Բութ լեռան մեհյանը նվիրված էր անդրաշխարհի հրեղեն դիցերին (սրանց մեջ՝ Դիցամորը) եւ կարող էր կույս հարցուկներով հարցմունքատուն լինել, որի համար էլ Բարդուղիմեոսը այստեղ դրեց Տիրամոր պատկերն ու կուսանոց հիմնեց (թեեւ, չի բացառվում, որ դա Դիցամոր կամ Անահիտի այստեղ եղած կուռքն էր): Խորհրդավոր է «կուսակցություն» բառը, որը նշանակում է «կուսակիցների միություն» եւ հիշատակում է նախկին կուսական ուխտերի (կուսակրոն քուրմ-քրմուհիների, անպսակ մարտիկների միաբանությունների) օրինակով քրիստոնեական շրջանում (10-րդ դարից) մեզանում հիմնված «մանուկների» եղբայրությունները, որոնց անդամները արական սեռի չամուսնացած ջահելներ ու պատանիներ էին («մանուկ էին» կոչվում հենց անպսակ լինելու համար): Ի դեպ, դրանց առաջնորդները երեւելի հոգեւորականներ էին. օրինակ, Խոսրով Անձեւացի, Սյունիքի Հակոբ եպիսկոպոսները (10-րդ դար): Երզնկայի եղբայրության (13-րդ դար) մեծերն էին Գրիգոր Սանահնեցի վարդապետն ու հայտնի հասարակական գործիչ Հովհաննես Երզնկացին:

Պիտույքներ . Դիցա-տիեզերական խորհրդանիշներն առկա են եկեղեցականների զգեստների, զարդերի, սպասքի եւ այլնի վրա: Այստեղ կներկայացնենք դրանցից մի քանի նկատվածները:

Վիշապ է նկարված հայոց կաթողիկոսի հողաթափի տակ, որն իբր խորհրդանշում է «օձեր ու կարիճներ կոխկրտելու» նրա իշխանությունը: Ըստ մեզ, սա հիշեցնում է Վահագնի վիշապամարտը, որն արտացոլվել է աստղալից երկնքում: Վիշապ է կոչվում հյուսիսային բեւեռամոտ համաստեղություններից մեկը, որը գտնվում է Վահագն-Հերկուլես համաստեղության տակ եւ պատկերվում է հսկա օձավիշապի տեսքով: Վահագն-Հերկուլեսը պատկերվում է որպես ձախակողմյան կեռխաչի դիրքով ծնկած հսկա, որն աջ ձեռքում հարվածի պատրաստ գուրզ ունի եւ ձախ ոտքով հենված է վիշապի գլխի վրա, կարծես ուզում է այն ճզմել: Ըստ հունական զրույցների՝ սրանք պատկերում են Հերակլեսի 12-րդ սխրանքը՝ մարտը Հեսպերուհիների այգին պահպանող Լադոն վիշապի հետ:

Խոյր-Խույրը կաթողիկոսի, եպիսկոպոսի (հնում նաեւ՝ արքաների, մեծահարգ իշխանների) թագն է: Այն կրում են նաեւ ծայրագույն (12-րդ աստիճանի) վարդապետերը: «Խոյր»-ը հիշեցնում է «խոյ»-ը: Իսկ կենդանաշրջանը գլխավորող Խոյ աստղատունը համապատասխանում է մարդու գլխին: Խույրը գագաթը բարձր հնգանկյուն է հիշեցնում, որը հինգ հիմնատարրերի (եթեր, հուր, օդ, ջուր, հող) փոխակերպումների խորհրդանիշն է (խույրի գագաթը համապատասխանում է եթերին՝ ամենավերին

տարրին):

Արտախուրակ են կոչվում խույրի զույգ արձակ ծայրերը (արտախուրակներ ունեին նաեւ արքայական թագերը): Հնում սա նաեւ պսակ էր նշանակում: Արտախույր էր հնում կոչվում Արամազդի խորհրդանշական Լուսնթագ-Յուպիտեր մոլորակը եւ Ավելյաց ամսի 4-րդ (նրան նվիրված) օրը: Իսկ Արտախույրի և արտախուրակի առնչությունը երեւում է հետեւյալում: Ասվում է, որ Լուսնթագը բնությամբ հաղթություն է եւ պատճառ մրցման ու ամեն տեսակի գործակցության: Իսկ հայտնի է, որ մրցումների հաղթողներին, սխրանքներ գործողներին առաջներում պսակադրում՝ արտախուրում էին:

Օձազարդ գլխով են վարդապետական գավազանները: Միագլուխ օձազարդ են մեկից հինգերորդ աստիճանի վարդապետերի գավազանները: Վեցերորդ եւ ավելի բարձր աստիճանի վարդապետերի գավազանները երկգլուխ օձազարդ են: Այստեղ օձն իմաստավորում է վարդապետերի ի պաշտոնե խորիմացությունը, քանի որ այն «խորագետ» է համարվում: Օրինակ, երբ Քրիստոսն իր աշակերտներին ուղարկում էր իր ուսմունքը քարոզելու, պատվիրում էր «օձի պես խորագետ» լինել:

Հայ կաթոլիկ եկեղեցու կաթողիկոսի գավազանի ծայրին գունդ է՝ վրան խաչ: Սա ինքնատիպ, միայն իրեն է յուրահատուկ, քանի որ կաթոլիկ եկեղեցում նման բան չկա: Այս գնդախաչը ներկայացնում է Երկրի խորհրդանշանը՝ գուցե, սրանով խորհրդանշելով համերկրային հավակնելիք առաքելությունը:

Մեր եպիսկոպոսական գավազանները լատինականի նման են՝ խխունջաձեւ կլոր գլխով, որը բռնվում է բաց կողմը ժողովրդին դարձած: Գավազանի գլուխը տերեւազարդ կամ ծաղկազարդ է, երբեմն օձագլուխ դասավորումներով: Այն հիշեցնում է հարցական «?» նշանը, «2» թվանշանը: Ընդ որում, երկուսը խորհրդանշում է Դիցամոր գոյավորումը (հմմտ. 1-ից 2-ի ծագման հետ), Դիցահայր-Դիցամայր միասնությունը ու տիեզերական երկվությունները: Ասել ենք, որ Դիցահոր սկզբնամիակությունը բնութագրող «1»-ին նման է հաստատող կամ հրամայական «!» նշանը (հմմտ. նրա «ամենահաստատ» կոչման եւ անփոփոխ, հաստատուն լինելիության հետ): Այսինքն, «!»-ը բնութագրում է իմաստի, էության հաստատունությունը, իսկ «?»-ը՝ նյութի, ձեւի փոփոխականությունը (տես. «Բանը Դիցահոր, իսկ Նյութը Դիցամոր մոտ է» դիցաբանական բանաձեւը):

Վարդան Լալայան

1 - Կարծիք կա, որ իրականում Եդեսիայում պահվում էր Միհրի «առյուծաձեւ» դիմապատկերը:
2 - Կարծիք կա, որ Պոսեյդոնը՝ Զեւսի եղբայրը, որի անունը նշանակում է «երկրի ամուսին», վաղ հունական դիցաբանության գերագույն դիցն էր: Նրանից ու Գեայից=Երկրից են սերվել Օրիոնը, որի համաստեղությունը մենք կոչում ենք Հայկի անունով, Անթեյը, որն անպարտ էր, քանի հպված էր մնում գետնին (հիշեցնում է հայերիս հողին կապվածությունը), թեւավոր Պեգաս, ասուն Արիոն նժույգները (մեր էպոսի ամպրոպաձի Քուռկիկ Ջալալու մասնակերպերը): Նեպտուն անունը հիշեցնում է հայոց Նպատ=Նպատական լեռի անունը (Արածանու ակունքների մոտ է), որի լանջին էր Դիցավանը՝ Արամազդ-Վանատուրի մեհենավանը (թերեւս, լեռը Արամազդից նպատակների կատարում աղերսելու համազգային սրբավայրն էր՝ նավասարդյան տոների ու Աշխարհաժողովների օրերին): Նպատ լեռը կոչվում էր նաեւ Նոյապատ (տես. մեզանում Դիցահոր ու Նոյի նմանեցումը):
3 - Հնում նորակառույց բերդերի, կամուրջների պատերում կամ հիմքում ողջ-ողջ կույս էին թաղում, որպեսզի կառույցը ամուր լիներ: Չի բացառվում, որ ինքնազոհաբերվող կույսերը քրմուհիներ էին:
4 - Ասվում է, թե Կույս (Նանե-Աթենասից իշխվող-հեղ.) աստղատունը համապատասխանում է Հելլադային:

«Հայ Արիներ» Թիվ 34, 2004թ.